Աւետարաններու սկիզբները երկուական էջ սեւա երկաթագիր Ոսկեայ բոլորգիր մասնաւոր քաներ: Խորանք՝ թզ. 1ք-12ա, 18ք-18ա, Մատթէոսի զլիտց. թզ. 19ա, Մատթէոսի սկիզբը. 106ք-8ա, Մարկոսի զԸԼիտց. 110ա, Մարկոսի սկիզբը. 186ք-69ա, Ղուկասու զլիտց. 172ա, Ղուկասի սկիզբը. 268ա-9ա, Յուհաննու զլիտց. 270ա, Յուհաննու սկիզբը. գունաւոր, ոսկեզարդ եւ շատ յաջող: Լուսանցազարդք՝ գունաւոր եւ ոսկեզարդ, յաճախ նկարիկներ. Մատթէոսի սկիզբը ոսկեայ յատակի վրայ՝ նահապետաց ծառը ամբողջ լուսանցքը բունած է: Նկարք՝ թզ. 18ք, Մատթէոս. 26ա, Մկրտութիւն. 98ա, Ոսկալուայ, 108ք, Յարութեան ակետումը Հրեշտակին. 109ք. Մարկոս, 186ա. Այլակերպութիւն, 146ք. Նստեալ ի յէշ, 172. Ղուկաս, 176ք. Աւետումն, 181ա, Ընծայումն, 266ա. Ի Վերնատան յետ Համարածման, 269ք. Յովհաննէս, 810ք. Յարութիւն Ղազարու, 821ք. Ընթանք՝ գունաւոր եւ ոսկեզարդ, բայց զիմագիծք ոչ այնչափ յաջող: Դատարկ՝ թզ. 1ա-18ա, Համարաբարտներու եւ զլիտց ցանկին կոնակները, 104ք, 106ա-8, Մարկոսի զլիտց ցանկի կոնակները, 108ա, 166ք, 167ա-71ա. Ղուկասու ցանկի կոնակները, 266ք, 267-8ա. ցանկին կոնակները, 269ա: Ժամամակ ՉԼԹ (1290): Գրիչ՝ Ստեփանոս: Տէր՝ Կոտանդին քահանայ Տեղի՝ Արմէն Լեւոն: Յիշատակագրութիւնք՝ թզ. 844ք 2-8ք, 18ա, 1ա:

Մատենա է Աւետարամ, ուր կան

1.- Քզ. 14-16ա. Համարաբարտաց տախտակք. 18ա Սկիզբն Գլխոց Աւետարանին որ ըստ Մատթէոսի:

Քզ. 17ա. Համեմատութիւն նախասացեալ զլիտց. ք1, նախազրուութիւն Մատթէոսի Աւետարանին: 19ա, առանց խորագրի, "Գիրք Ծննդեան Յսի. Ջսի." եւ այլն:

2.- Քզ. 106-8ա, Սկիզբն Գլխոց Աւետարանին, որ ըստ Մարկոսի.- Քզ. 106ք, նախազրուութիւն Մարկոսի Աւետարանին: Քզ. 110ա, " Սկիզբն Աւետարանի Յսի. Ջսի." եւ այլն: Վերջը ունի յաւելուածական մասը:

8.- Քզ. 166ք. Սկիզբն Գլխոց Աւետարանին, որ ըստ Ղուկասու. թզ. 169ք, նախազրուութիւն Ղուկասու Աւետարանին. թզ. 171ա, Աւետարան ըստ Ղուկասու:

4.- Քզ. 267ք, Սկիզբն Գլխոց Աւետարանին, որ ըստ Յուհաննու.- 270ք,

նախադրութիւն Յովհաննու Աւետարանին. 272ա, " Ի սկզբանէ էր Բանն" եւ այլն: Վերջն ունի՝ իբր կնոջն շնացելոյ", ասանց խորագրի:

Յիշատակագրութիւն՝ Թգ. 844բ1. փառք ամենատուրք երրորդութեանն յաւիտեանս յաւիտեանց ամէն:

Յիշատակարամ Ար. Աւետարամիս.— Ըստ ամենառատ շնորհացն Այ. անբնապէս Հեղեալ ի մարդիկ, քաղաքիմիք են տեսակք քարեաց եւ ճանապարհք փրկութեան, որովք Հնարաւորին ցիր եւ ճապաղ ախորժակք մարդկան արեւնակա իւրք առ կցորդութիւն բարւոյն յարձակիլ եւ այնու պարճառու ըստ չափոյ կարողութեան յԱստուած մերձենալ եւ բարւոյ մասին իմիք Հանգիպիլ:

Որոյ մեծ եւ նշանաւոր՝ արեամբ չափ նահատակիլն, որպէս վկայիցն, որ է կատարելագոյն առ Ած. նշանակ սիրոյ եւ այլքն ըստ նմանէ կամ անձնական նուէրք Այ. որպէս ճշնողական ժուժկալութիւնք, կամ առ ընկճար բարեգործութիւնք, որպէս սէր, ողորմութիւն, խոնարհութիւն, եւ այլ քաղում ինչ աշպիտի:

Ընդ որս եւ յորոց ի քարեաց մասանցն է եւ զիրս ասուածայինս ստանալ ի փառս Այ., ի ջաՀ անձին եւ յօղոտ Հասարակաց լրման եկեղեցւոյ եւ ի կատարումն աստուածաւանդ կարգք քաՀանայութեան, որ եւ տիրապէս՝ անմիջնորդ յԱյ. տուեալ ի մարդիկ մեծ եւ աստուածային պարգեւ, եւ յետ Այ. փոխանակ Այ. արիւնադրազ մարդկան եւ ուսուցիչ զկամս Այ.: Որոյ ծայրք եւ կատարումն աստուածայնոց տարիցն, Աւետարանս սուրբ, որ ունի յայտնապէս ճշմարտութեամբ բաժնամութիւն աստուածեղէն մարդեղութեանն Բրիտտոսի, այն որ զաստիկ զլրորումն մարդկան ազգի, կանգնեաց վերստին անկասկած Հասաստութեամբ՝ որոց Հուսատացեն աստուածագործ տնօրէնութեան նորա, եւ փրկական ճանապարհաց նորա Հեռեւմամբ ժամանեցեն միջինաբն Համարձակութեամբ տեսանել զնա ի միջնակգամ զալստեան նորա, եւ լսել ի նմանէ զերանական կոչումն: Սմին այս աստուածաւանդ աւետարանիս ճանդնոտ սիրով տնչացեալ Կոստանդին քաՀանայ, ի ձեռն իմոյ նուաստութեան Ստեփանոսի զբնի՝ ստացաւ զսա ի լրումն աստուածասէր փափաքման իւրոյ, եւ ազատամիտ կամաք ստատացեալ ի ծախս պատշաճաւորս զեղապաճոյճ երանգաւք ծաղկազարդեալ եւ զեղեց-

կանկար պատկերագրութեանց յարիւնուածովք շքեղացոյց զսա. զի մի լսելեալք միայն, այլ եւ աչաց տեսողութեամբ զուարճացին Հանգիպեալքն ի խրախճանութիւն սրանչելի տանից աստուածային տնօրէնութեանն Զսի. իբրու Հայեւաւ իմիք անմիջոց տեսանելով ի նկարս կնեղանազրեալս զփրկարար զորոնն Զսի. եւ ի քարի արիւնակէն բարեմտութեամբ ջաՀեալք՝ յաժարամիտք լիցին ի կցորդութիւն զործոցն եւ բանիցն Բրիտտոսի:

Արգ՝ զրեցաւ սա ի լուարանում խցան ի Հիսիսակողմն Թիկունս լերին որ կոչի Արմէն, որ Հուպ կայ յիւրից անմատոյց ամբողջն Լամբրոսի, այն որ երեւելի ճոխութեամբ նստի ի գլուխն Տարսնի՝ յառաջնում զաՀաւանդի աՀաւոր լերինն Տարսոսի:

Ի Թուականիս Հայոց ՉԼԹ, ի Հայրապետութեան տեսուն Ստեփանոսի յառաջնում ամի եւ ի Թաղապահութեան Հայոց խաղաղարար եւ բարեճամբա արքայորդոյն տեսուն Հեթմոյ, որդւոյ Լեւոնի, եւ զրեցաւ յազնիւ եւ յամէնընտիր արիւնակէ.— Հմմտ. Յիշտ. ԺԳ. Դարբի, Երեւան, 1884, Թիւ 686:

Տիւնս՝ եւ յարեւստ բանի ոչ յանշան զբնէ, այլ լի եւ կատարեալ արուեստի ի բանս, ի քառս, ի լծորգս, ի քացատս, եւ ի տրոՀումնս առողանութեանց:

Վասն որոյ ազաջեմ զՀանգիպողոց եւ զվայելողոց աստուածեան տառիս, սրտի մտաւք յիշել ի՝ Զս. զԿոստանդին քաՀանայ զստացող սորին. եւ զկանխադոյն ի Զս. Հանգուցեալ ճնողան իւր, եւ զամենայն զգարմն իւր եւ զուսուցիչս: Եւ առաւել զքարեաց յիշատակաց արժանի Հողեւոր մայրն եւ զսնուցիչ նորին զտիկին Ալիք կրանաւոր՝ Համեստ եւ պատկառելի վարուք ծերացեալ, եւ ամա յառաջ ի Զս. Հանգուցեալ. եւ զիս ըզմեղուցեալ զբիչս Ստեփ. Փոյնըրերիցանց եւ զձեռագան եւ զուսուցիչսն իմ: Եւ Զս. որ մեծն է ի պարբեր բարեաց, զլիշողան եւ զլիշեցնալսս արժանի արասցէ ողորմութեանն իւրոյ, տալով զսա Կոստանդեայ քաՀանայի արժանապէս վայելիլ յաժմուս, եւ յետ իւր յիշատակ բարի Թողուլ զսա ասպազայիցն ի փառս Բրիտտոսի, որ է առՀենալ յաւիտեանս. ամէն:

Թգ. 846բ1. Յիշատակարամ Աւետարամիս.— Որք զեղեցիկ եւ զպատուական

մարզարիտս եւ զլուսաւոր ակունսն կամին ստանալ՝ բազում աշխատութեամբ գտաննն. եւ յորժամ գտանն՝ մեծաւ ուրախութեամբ զուարանան, եւ այսոքիկ մարմնական խնդութիւն է եւ ստածուած: Իսկ որք զհոգեւոր գանձն եւ զպատուական մարգարիտն եւ զպայտաւ եւ զգեղեցկազուարճ գակն ստանան՝ զզիրս աստուածողէնս, եւս առաւել զբանն տէրունական, որ Սք. Աւետարանն կոչի... (Երեք էջ ներքոյ Աւետարանի):

Ք. 847ա Զ.— Ի Թուս. Հայոց ԶՂԴ, եւ Կոստանդին Հայոց արքայ ստացայ զՍք. Աւետարանս, որ է կազմեալ արծաթեղէն եւ ոսկեղէն նկարնկերպ գեղեցկութեամբ զարգարեալ: Որ եւ ստացա զայս յարգար արգենց իմոց, զոր յատաշին նախնեաց մերոց Հասեալ եղիւ առ մեզ նշան բարեաց, եւ նովա ետու զՍք. Աւետարանս ծածկել գեղեցիկ կերպարանօք, եւ շնորհեցի զսա սրբոյ եկեղեցւոյ ըստ փափագանաց սրտի իմոյ եւ մեծ յուսոյ, միշտ յիշատակ լինել ինձ եւ ամենայն զարմից իմոց, եւ Հաւրն իմոյ Պր. Պազտուն մարաշխտուն՝ Հանգուցելոյն առ Քս. Այլեւ վասն յերկար կենդանութեան մերոյ եւ աստուածատուր որդւոց մերոց Աւշնի եւ Լեւոնի [Հմմտ. Լ. Ս. Նաչիկեան, Յիշտ. ԺԴ. 21մտ. էջ 848] Որով մազթեմ զձեզ զամենեանս, որ տեսանէք եւ վայելէք ի սմանէ եւ միխթարիք ի սուրբ քանից Աւետարանիս, Հայցել մեզաց թողութիւն մեզ եւ մեր Հա. ազգատուհին, եւ խնդրել ի Տեսունէ տալ մեզ վարձս քարեաց գերկնից արքայութիւնն. զի Հանդերձեալ աւր պատանս Որդւոյն Աստուծոյն արժանի լիցուք տեսանել զնա պարզ երեսւք, եւ ընդ Հրեշտակս աւրՀնել զԱմենասուրբ Երրորդութիւնն, զՀայր եւ զՈրդի եւ զՍք. Հոգին յախտանս յախտանից ամէն:

Կից. տարբեր գրէւ.— Ջվերջին ներողոյ եւ զկազմող Սք. Աւետարանիս զնուաստ յոգի զիս, զՅովհաննէս կաթողիկոսն Սրտոյ, աղաչեմ սրտի մտաւք յիշել ի Տէր, եւ Ած. յիշողացող ողորմեսցի, ամէն:

Տարբեր գրէւ.— Ըս զարձեալ ի յամին Թուականութեան Հայոց ՊԻԳ, առաւ Սիս ի քրիստոնէից, եւ էր յայն ժամանակն կաթողիկոս Հայոց տէր Կոստանդին Լամբրոնացի, այր իմաստուն եւ Հանձարող, եւ էր Թագաւոր Հայոց Պր. Լեւոն որդի Բրինձին: Սա Թագաւորեաց Հայոց ամիս է. սա

վարեաց զերի յԵզրպտոս Թագուհին իւրով եւ որդւով իւրով: Բայց մեծ Թագուհին Հայոց Մարին Յերտանդմ մեծաւ առաքինի ճշմարտութեամբ ամս Գ. 7, եւ Հանդես ի Քս. ի Թուարբութեան Պ. եւ ի յուլիս ամսոյ ժԸ... (զժուար ընթեռնելի), վասնզի յոյժ ողորմած էր ազգատուսէր: Սա Թագեցալ [աւ] ստաշի գրան Սք. Յակոբայ. սա պարգեւեաց մեզ զՍք. նշան, որ տէր Յակոբ կաթողիկոս: Ի սմանէ ստացայ եւ զսուրբ եւ զաստուածախաւս Աւետարանս, որ է զարդարած յուկոյ սրբոյ եւ յարծաթոյ, ի վայելումն անձին իմոյ, եւ ի ժամ մահուան իմոյ ի յիշատակ Հոգւոյ իմոյ եւ ծնաւոց իմոց եւ ամենայն զարմից իմ, եւ այնոցիկ որ ի Սք. Աւետարանս երախտաւոր են...: Ըս եւ մեղաւոր եւ անպիտան ծառայս Այ. եւ ամենայն զՔս. Ած. դաւանդացոյ, Վահրամ անարժան այսմ պատուոյս զոր ընգալայ, որ անուամբ Աիսայն կոչիմ, բայց զորով Հեռացեալ մեկուսի եմ ի պատուիրանացն Այ.: Բայց իմ յուսալով ի Սք. Աւետարանս, որ է քերան եւ բան Այ. որ եւ ինքն Տէրն մեր եւ փրկիչն Յս. Քս. Հրամայեաց իւր աստուածային քերանովն ի Սք. Աւետարանիս թէ, Ամենայն որ խնդրէ...: Նայ կրկին անգամ յերես անգեալ արաչեմ զամենայն Հուսատացեալս Սք. Երրորդութեանն, որք Հանդիպիք ի Սք. եւ աստուածախաւս Աւետարանիս... խնդրեցէք ի Քրիստոնէ զողորմութիւն մեզ...:

Ք. 18ա, նորագիր. ճակատը կնիք. Յսի. Քսի. ծն. Կիրակոս Կաթողիկոս 1786.— Ըս նուաստ Կիրակոս կաթողիկոս Տս:նն Կիլիկիոյ, ի Թուին Հայոց ՌՄԽԶ, սկիզբն յուլիս ամսոյ ստացայ արդեամբ իմով զայս գեղեցկանկար պատկերով զբնիցայ Սք. Աւետարանն՝ առ ի լինել անջնջելի յիշատակ գերափայլ Սրբոյ Աթոռոյս վասն իմ եւ վասն Հոգւոց նախնեաց իմաց: Ըս զի նախկին երեսն էր Հնոտի սեկիւ եւ տախտակաւ միայն եւ ինչ ինչ ի թղթաց խալտեալ ի կապից իւրեանց, ոյր սակս վերստին ետու կազմել զսա եւ առնել զարտաքինսն ըստ իմ զարմարած արծաթապատ նկարեցմամբ ի վերայ զխորհրդաւոր պատկերս անճառ տնօրէնութեան Փրկչին մերոյ Յսի. եւ այսպէս եղի ի ահեղ սուրբ սեղանն ի փաստ ետամիոյն Այ. եւ ի զուարճութիւն Հոգւոցն ի Տէր Հուսատացուլ եղբայրք Արք. խնդրեմ անձկանօք ի Հոգեմէր պաշտօնէիցք Տեսան, ի Հանդիպիչն ձեռ եւ զմայլիլն ընթերց-

Գրեց 7547



մամբ այսու կենսարդիւ ըստ կենարարին մերոյ, յիշխմիք առ Տէր սրտի մտաւր զվերոյդրեալ անձն իմ անարժան՝ տալով զերի զողորմին ըստ աստիճանի եւ Հաճու- թեան ձերոյ, որով եւ զուր Համայնքդ՝ Հանդիպեալ մեծի ողորմութեան Այ. արժանասիք երանութեան եւ տեսութեան նորին եւ անզբաւ ուրախութեան, ամէն:

Եւ եթէ յետ անցանկելոյ ժամանակի եւ սպառիլ կենաց այնոցիկ մարդկանց, որք ակնատեսք եւ կամ վերահասք են ձեռամբ իմով յիշատակ առնելն իմ զայս Սբ. Ան- տարանս, յետ որոյ յարիցէ որ Աջապահ անուանեալ յազգէ տեղւոյս՝ այլ եւ այլս բաշտեալ կամիցի յափշտակել զաս, եւ կամ ո՛վ եւ իցէ, թիւր մտօք Հանցէ արտաքս ի Սրբոյ Աթոռոյս առ ի վաճառել եւ կամ առ ինչն պահել, զրկեցիք ի փառաց Որդւոյն Այ. եւ լիցի անիծեալ եւ նզդվեալ այն- պիսին յեռանձնեայ Սբ. Երրորդութենէն, եւ ընդ Կայիին եւ Յուդայի մասնակցեալ արքցէ զբաժին բաժակի իւրոյ, զպատիժս յարիտնականս Հոգւով եւ մարմնով եւ ընդ նոսին պատժեցիք, որ պատառէ զայս եւ Հանէ յիշատակարանս. ուստի եւ ասացնն Հրեշտակք եւ մարդիկք, եղիցիք, եղիցի:

Քզ. 1ա, ճակատք, Ղուկաս Կաթողիկոս
 .-Արդ՝ վերստին նորոգեցաւ եւ կազմեցաւ Սբ. Անտարանս ձեռամբ իմով մեղաւոր եւ անար- ժան, սուտանուն տիրաբոյս Ներսէսին, որ է Պէլենկու, զանունն ուեմի եւ զգործսն ո՛չ, որ եւ զՍբ. Անտարանս ետ նորոգել տեսնոս... որ եւ սպասաւոր զրան Սբ. Լու- սաւորչուեւ, եւ զինքն Տէր Աստուածն քա- ռով քարով վայել տացէ, կացէ եւ մնացէ անշարժ յաւիտեանս, ամէն: Որ եւ ետ զՍբ. Անտարանս կազմել եւ նորոգել ի թուա- կանիս Հայոց ՌՃՁՁ ամին, ի ամսեան մայի- սի Թին, ի զուռն Սբ. Լուսաւորչա Աթո- ռոյն իւրոյ, ի վայելումն իւր եւ իւր Հայրն երրունի տէր Կուսիկին, եւ որդւոցն նորա Մուքայէլ վարդապետին եւ Մաթոսին, Գաբրիէլին, տէր Մարկոսին եւ իւրեանց Համօրէն Հաւասար ննջեցեալքն յիշեալ ի Ջս.: Եւ որք Հանգիպիք կարդալով եւ կամ Հարեանցի տեսանելով՝ միով բերան Հայր մեղայալս յիշեցէք եւ զուր այլ յիշեալ լիջիք առաջի Քրիստոսի եւ ամենայն սրբոց նորա, ամէն:

Քանատրներու գիրութեան Համար վերորգեալ յիշատակարաններ կը դասաւորենք այստեղ ժամանակագրական կարգով.-

- Ն.Ա.Պ.
 1.- Ստեփանոս Գոյնէր երիցանց Գրչի .- 1280
 2.- Կոստանդին Արքայի.- 1846
 3.- Նուէր ստացող վաճարմի.- շ. 1876
 4.- Յովհաննէս Աթրէպի Կաթողիկոսի .-1801-1821
 5.- Պէլենկցի տիր. Ներսէսի.- 1787
 6.- Կիրակոս Կաթողիկոսի.- 1797

4.- Անտարան, ՉԶԹ-1888
 Քուրթք՝ 864+4: Մեծութիւն 28x16.2, Գրութիւն՝ նրկսիւն՝ 16X4.8: Տողք՝ 19: Թերթք՝ ԼԱ, իւրաքանչիւրը 12 թուրթ. ա՛ 11, Մատթէոսի նկարին պակասութեամբ. ԼԱ՛ 18: Նիւթ՝ մազաղաթ: Կազմ՝ փայտեայ արծաթապատ, Յարութեան եւ Նաչեւութեան պատկերներով: Պահպանակ՝ թղթեայ, մէկ մէկ նոր եւ դատարկ թղթեր: Հանգամանք՝ ընդհանրապէս լաւ. Համարաբարձուներէն միայն երկու թուրթ կայ. կորուսած է Մատթէոսի նկարը. թղ. 7 նոր գրուած է եւ անարուեստ զբշաւ պակասը լեցուած է. շուրէ կամ խնուութենէ ազդուած նկարն եւ խորակք բաւական զուեւափոխուած են: Գիր՝ բոլորգիր, խոշոր: Զարդագիրք՝ թռչնագիր, ծաղկագիր՝ զուեւաւոր եւ ոսկեզարդ, կարմիր, կապոյտ եւ ոսկեայ երկաթագիր: Խորանք՝ թղ. 1ք-2ա, 6ա, 109ա, 180ա, 288ա: Լուսանցազարդք՝ զուեւաւոր եւ ոսկեզարդ, յաճախ յաշոյղ նկարներ: Խորագիրք՝ ոսկեայ բոլորգիր: Նկարք՝ թղ. 108ք, Մարկոս. ստաշի ոտից ի զուեւ՝ Սարգիս ծաղկաղք քեզ ի յանձին. 179ք, Ղուկաս. 282ք, Յովհաննէս, աջ անկիւնը՝ Առաքել առ քեզ յանձն, զուեւաւոր եւ ոսկեզարդաւ: Դատարկ թղ. 1ա-2ք, 108ա, 178ք մեծ մասամբ, 179ա, 291 մեծ մասամբ, 288ա, 848ք: Ժամանակ՝ ՉԶԹ. Մատեանս է Անտարան, ուր կան Ք. Յ: Զիշատակագրութիւն՝ թղ. 846ա.- ֓առք ...: Որպէս եւ միք Առաքելս եւ ... (մէկ քառ շնջուած) բոցով սիրոյն Աստուծոյ կենդանախարակեալ, ստացաք զՍբ. Անտա- րանս անձին ի վայելս եւ յապալն յիշատակ մեզ եւ որոց ծնան գմեզ: Արդ՝ աղաչեմք անարժանքս արժանի առնել յիշել յաղաւթս, զի մեծ յուսով պէն ունիմք խնամոցն Աստուծոյ այն աղակիցն ձեր միջնորդե- լովն: Եւ մանաւանդ ի սորակի եւ անա- բիւն զծնմանն առաջի. սուրում երկինք

բանի եւ Հայր Հաջտի, Հոգին իջանէ եւ
Հաւատով ակն ունաւզօն նորոգին: Մի
անգամ, կամ աւելի, սրտի մտաւք սասցէք,
Տէր, թող զանեզր զմեզս, զի եւ զձերն
թողցէ, եւ որոց զամէնն սանն:

Ով մանկունք նոր Սիրովնի,
փրկեալք արեամբն Ջրիստոսի,
յիշման առնէք զիս արժանի,
որ զԱւետարանս զծագրեցի:
Արդ աղաչեմ յամենայնի
չլինիլ սմա մեղադրելի,
վասնզի զիր շքիտէի զրազրի
եւ ոչ արուեստ զրազարձի:
Ջի թէ խոշոր զսա զրեցի,
կամ թէ սղալ ի սմա զտանի,
յաւրէնակէն թէ սա լինի,
կամ ի գրչէս անարճեստի:
Յերես անկեալ միշտ առաջի,
Հայցեմ յիշեւ արտասուելի,
զննջեցեալսն որ ի շիրմի,
եւ զկենդանիսն որ կան յերկրի:
զի եւ ձերոցն ողորմեսցի,
Ջրիստոս աւրճեալ յայսմ աւարտի.
բարեաց տուողն յամենայնի
տացէ Տէր կեանս ստացաւզի,
զի ընդ երկայն աւուրս լինիցի,
Ջրիստոս աւրճեալ անլռելի:
Ընդ նման(?) Սարգսի սրբասէր քաճանայի,
Հոգւոյ ծնաւզին իմ ըստ բանի,
զգիրքս մեզ զարդարաւզի,
յիշման առնել զնա արժանի
ի ժամ սոսկալի պատարագի:
Արդ փափագմամք զսա զրեցի
ի վանքս որ Ջորոյ վանք անուն կոչի,
ընդ Հովանեաւ Աստուածածնի,
եւ կենսակիր Սուրբ Նքանի,
(զ)որ պահապանս սա մեզ լիցի,
ի թագաւորութեան Լեւոնի,
որ է տղայ եւ պատանի,
եւ Սուրբ Հոգին իր Հովանի:
Եւ արդ ես աղքատ եւ եղկելի,
անկեալ ի ձեր զարշապարի,
եւ պազատիմ արտասուելի:
որք Հանգիպիք այսրմ տառի,
Հայցեմք ա(յ)րէք զիս արժանի,
լիկոյ միոյ Տէր ողորմի,
այլ եւ իմոցն ամենայնի,
Տէրն եւ նոցա ողորմեսցի:

ՁԱՎարկոս զաստիարակ եւ սպասատր մեր
աղաչեմ յիշել ի Տէր, զի քազում աշխա-
տեցաւ ի սմա. զսրբաւք եւ զպատուական
քաճանայն զՍտեփաննոս եւ զքեորողին իւր

զՊարոն Թորոսն, զամենայն աւրճութեանց
արժանաւոր մայրն իւր զԹոսարովանուշ, որք
յայսմ ամի փոխեցան առ թս. եւ ընկալան
զանթառամ փառաց պսակն, աղաչեմ յիշել ի

տէր. որոց ողորմեացի եոցա օս. Ած., թողցէ զյանցանս եոցա և ջնջէ զձեռագիր յանցանաց եոցա, ցաւն ողորմութեան ցաւեացն յոսկերս եոցա և բուսուցն զնոսա յաւրն վերջին, և արժանի լիցին լսել զերանաւէտ բարբառն, որ ասէ. Եկայք արճնեալք Հաւր իմոյ:

Գրեցաւ ի թվին 22Թ:

Տարբեր գրիչ:— Արդ՝ վերստին և վերջին կազմեցաւ Սր. Աւետարանս ի թվին Հայոց Ռոմ՛, ձեռամբ ոգնամեզ և անպիտան, անարճեստ զրչի, սուտանուն ԶՀյ. Կերպոսի, որ զանունն ունիմ և զգործս ոչ: Ով կողբարք, որք Հանգիպիք ի սուրբ ազաւթս անք զիս և զծնագօս իմ և զամենայն արեան մերձաւորս իմ, Ած. ողորմի ասացէք, և Զրիստոս ձեզ ողորմեսցի իւր միւսանգամ զաւուստն: Եւ զարձակ յիշեցէք ի Ջս. զԿոպիտացի Մկրտիչ երէցն և զԷւր Հոգեւոր որդին զԱստուածատուր սարկաւազն, և ետուն կազմել զսա ի Հալալ ընչից իւրեանց, յիշատակ իւրեանց Հոգւոյն և իւրեանց ննջեցելոցն...:

Կոմալը արծաթիմ վրայ երկաթագրով:— Եիշատակ է Սր. Աւետարանս մաշտնսի Ոսկանին և մ՛հի. Մարիամին, վասն Հոգոցն մ՛Հի. Սառային, մ՛Հի. Եւզաբէին, մ՛Հի. Թուրվանտային, ի զուռն Սր. Աթոռոյն, որ ի Կիլիկիայ:

6.- Աւետարամ, ՌճԻԱ - 1672

Թուղթք՝ 206: Մեծութիւն՝ 8.4x5.9: Գրութիւն՝ երկսիւն, 5.7x2: Տողք՝ 26: Թերթք՝ ժէ=17, իւրաքանչիւր 12 թուղթ, ժէ՝ 18: Նիւթ՝ մազաղաթ: Կազմ՝ փայտեայ արեաթապատ տնօրինական նկարներով: Հանգամանք՝ խոնաւութենէ ազգուած, շատ տեղ զրեղ զունաթափուած են: Գիր՝ բոլորգիր, շատ մանր: Զարդագիրք՝ կարմիր ծաղկագիր և զլիսագիր: Նորանք թղ. 9ա, 65ա, 101ա, 161ա, զունաւոր: Կիսախորանք՝ թղ. 1ք-6ա, Համեմատական տախտակն՝ զունաւոր: Լուսանցաբարք՝ կարմիր: Նկարք՝ թղ. 8ք, 64ք, 100ք, 160ք, անետարանչաց՝ զունաւոր: Ժամանակ՝ ՌճԻԱ: Գրիչ և տէր՝ անորոշ: Տեղի՝ Զեթուն: Երչատակագրութիւն՝ թղ. 206ա:

Մատենա է Աւետարամ, ուր կան

1.- Թղ. 1ք-6ա, Համաբարբառ: Թղ. 6ք, Գուլիք Մատթէոսի Աւետարանին: Թղ. 9ա-65ա, Աւետարան ըստ Մատթէոսի: Թղ. 68ք, Գուլիք Մարկոսի Աւետարանի: Թղ.

64ա, Աւետարան ըստ Մարկոսի Վերջի յաւելուածական Համարներն ունի: Թղ. 101ա, Աւետարան ըստ Ղուկասու: Թղ. 158ք, Գուլիք Յովհաննու Աւետարանին: Թղ. 161ա, Աւետարան ըստ Յոհաննու: Վերջն ունի Իքք կնիշն շնացելոյ:

Յիշատակագրութիւն՝ Թղ. 106ա.-Փառք...:

Յանգ եղեալ աւարտեցաւ ունող անտեսաց արթալութեան, քառափակ զետարուի Սր. Աւետարան, ի թվին Հայոց ՌճԻԱ, ի յերկիրն Գերմանիոյ, ի զեղաքաղաքս Զեթուն, ընդ Հովանեաւ և առ դրան Սրբոյն Գրիգորի մեր Լուսաւորչին և Սրբուհոյ մեծնաւորչեակ Աստուածածնին, Զարխափան յորջորջելոյ մեծնատնին և այլ Ը եկեղեցեացս, որ աստ կան յօգնականութիւն և ի բարխոսութիւն... (չորս տող եղծուած):

6.- Մաշտոց Զնոմարութեամ, ԶԿ-1811:

Թուղթք՝ 226: Նիւթ՝ մազաղաթ, պիտակ և նուրբ: Կազմ՝ փայտեայ սեղանապատ, ոսկեպատ արծաթեայ կողերով: առաջին երեսը Հինգ թազակիրներ և երկու ընծայեալք ենրադիր, ձեռնաղբութիւն կպիկոպոսի. երկրորդ երեսը չորս թազակիրք և աշակիրք և վարկ կողմը զոց աման մը - Օրհնութիւն Ս. Միլոտի: Հանգամանք՝ ընդհանրապէս լաւ. տեղտեղ խոնաւութենէ անվնաս ազգումներ: Ժամանակ՝ կպիկոպոսական վկայական ԶԿ: Տէր՝ Կոստանդին կաթողիկոս:

Մամօք.-Մանրաման նկարազրութիւնը կը զտնուի Հալալայ Զեռ. Յուցակի Բ. Հատորին մէջ. էջ 10-11: Մեծնք օսնի մը տողներ արտագրեցիք տնօրակէն (էջ 24): Յաշորդ մասը. բովանդակութիւնը, նոյնպէս կ'առնենք Համատուակի:

Ա.- Թղ. 1ա.- Կանովն Աւրճնութեան Սրբոյ Միլոտին...:

Բ.- Թղ. 68ա.- Տորժամ Հանդերձեալ լինին կպիկոպոս կացուցանել զօք...:

Գ.- Թղ. 186ա.- Կանովն Կաթողիկոս Զեռնադիլոյ:

Դ.- Թղ. 178ա.- Կարգաւորութիւն Աւրճնութեան Թագաւորի, ըստ մեծի կեկեղեւոյն Հոմովմայ:

Մամօք.-Մկատի աննկով կաթողիկոսներու մանր յիշատակագրութեանց պատմական կարեւորութիւնը կ'արտագրենք զանոնք, պակտոզ մի քանի Հատն ալ վերցնելով Սիւրմէնան Զեռցակէն: Կը ներկայանենք զաստարելով ըստ ժամանակագրական կար-

գրի

1.- Նուաստ Կոստանդին կաթողիկոս գտայ զշարադրութիւնն Հայրապետացն Հայոց, զրեալ ձեռամբ սուրբ Հաւրն մերոյ Ներսէսի Արքեպիսկոպոսի Տարսնի եւ ետու գրել ասու

2.- Երկրորդ Լուսաւորիչ Հայկազեան ազգիս տէր Կոստանդին՝ զանարժան եւ զմեղաւոր ծառայս ձեռ զկազմող սորա՝ զԾաւլիւնս յիշեա առաջի Ջրիստոսի Տեառն մերոյ:

8.- Ի Թուականս Հայոց 94 [=1811], յամսնանն սեպտեմբերի ի ԺԴ, եղև Սինոդոս, Հրամանաւ սրբասնեալ եւ երջանիկ Կաթողիկոսին Հայոց Մեծաց տեառն Կոստանդեայ...

4.- Ի մեծ Թուիս Հայոց ՊԻԹ [=1880] ամի, յազոստոս ամսոյ ԺԵ, ի Ջորեքքաթի աւր, Հանգեալ ի Ջս. պատուական Հայրապետն Հայոց տէր Կոստանդին երկրորդ Լամբրոնացին, որոյ յիշատակ նորին աւր՝ Հնութեամբ եղիցի:

5.- Նուաստ Յովհաննէս Կաթողիկոս նստայ ի յԱթոռ Հայրապետութեան ի Թվականս Հայոց 21Ե [=1486]:

6.- Նուաստ Յովհաննէս Կաթողիկոս Թուլկուրանցի նստայ յԱթոռ Հայրապետութեան ի Թվականս Հայոց 21Ը [=1489], յունվար ամսոյն ի 2, աւր չորեքքաթի:

7.- Նուաստ Յովհաննէս Կաթողիկոս ամենայն Հայոց նստայ յԱթոռ Հայրապետութեան ի Սիս քաղաք, Թվին Հայոց 22Դ [=1525], մայիս ամսոյ Ա, աւրն Բջի:

8.- Նուաստ Սիմեոն Կաթողիկոս Ջեթուցի նստայ յԱթոռ Հայրապետութեան ի Սիս քաղաք, Թվին Հայոց 22Ը [=1589], ապրիլ է, աւրն Բջի:

9.- Նուաստ Ղազար Կաթողիկոս երկրորդ Ջեթուցի նստայ յԱթոռ Հայրապետութեան ի Սիս քաղաքին, որ եմ Հաւրեղէրուր որդի Սիմեոն Կաթողիկոսին, Թվին Հայոց 22Դ [=1545], յիշեցէք յաղաւթս ձեր:

10.- Նուաստ Թորոս Կաթողիկոս Արցի նստայ յԱթոռ Հայրապետութեան ի Թուականս Հայոց 22Է [=1548], փետրուարի ԺԲ, աւրն Գ շաբթի:

11.- Նուաստ Խաչատուր Կաթողիկոս նստայ յԱթոռ Հայրապետութեան ի Սիս, Թվին Ռ [=1551]:

12.- Նուաստ Խաչատուր Կաթողիկոս նստայ յԱթոռ Հայրապետութեան Արսայ, Թվին ՌԹ [=1560], փետրուարի ԺԶ: Փետ-

րուարի Դ առ Ջս. փոխեցաւ Թվին ՌԼԳ [=1584], որոյ յիշատակն աւր՝ Հնութեամբ եղիցի, ամէն:

18.- Նուաստ եւ սեպիտան Ազարիայ վարդապետ Ջուզայեցի, շնորհաւոր Աստուծոյ Կաթողիկոս՝ նստայ յԱթոռ Հայրապետութեան Արսայ, ի Թվականս Հայոց ՌԼԳ [=1584], փետրուարի ԻԵ, աւրն Գ շաբթի, Ղեւոնդեանց Տաւնի մեծ Բարեկենդանին:

14.- Ըս նուաստ Յովաննէս վարդապետս Անթըպցի շնորհաւոր եւ ողորմութեամբն Աստուծոյ յնստայ Աթոռ Հայրապետութեան Արսայ, ի մեծ Թվին Հայոց ՌԻԱ [=1601], զկտր. Հոռոմոց Ի, աւուր Կիրակի:

15.- Ընդ առաջին եւ ընդ միջին աշխատողացն ի սուրբ գիրքս, նայ ի զիս, զվերջին նուաղեալ ծնունդս եկեղեցւոյ, զՅովհաննէս վարդապետս, որ եւ ողորմութեամբն Աստուծոյ Կաթողիկոս, աղաչեմ յիշել ի Տէր, եւ Ած. ողորմի ասել, եւ Ած. ձեզ ողորմեացի ամէն: ՌԻԵ [=1606] Թվին կազմեցի:

16.- Ըս նուաստ Սիմէոն Կաթողիկոսս Սեփաստացի շնորհաւոր եւ ողորմութեամբն Աստուծոյ նստայ յԱթոռ Հայրապետութեան Արսայ, ի մեծ Թվին Հայոց ՌԶԹ [=1689]:

17.- Բերկացի Պետրոս Կաթողիկոս նստայ Աթոռ Հայրապետութեան ի Սիս, Թվին ՌԾԻԷ [=1708], ապրիլ ԻԹ, որ Հինգշաբթի:

18.- Նուաստ Բորոս Կաթողիկոս Արսեցի նստայ Աթոռ Հայրապետութեան ՌԱԼԳ [=1784], եւ փոխեցաւ առ Ջս. ՌԻԽԵ [=1798], սեպ. ԻԴ, յօրն, որոյ յիշատակն օր՝ Հնութեամբ եղիցի:

19.- Նուաստ Կիրակոս Կաթողիկոս նստայ յԱթոռ Հայրապետութեան, որ եմ եղբորորդի վերոյգրեալ Թորոս սրբազան Կաթողիկոսին, ՌԻԽԸ [=1796], փետ. ԺԴ, յաւուր Տեառնընդառաջի:

20.- Ի ՌԻԾԲԹ [=1808] չղոյայ ի Ար. Երուսաղէմ. Դ եպիսկոպոսոք, եւ Դ վարդապետոք, Դ քահանայիք, եւ Ե սպասաւորօք, եւ անտի եկի ի Բերեալ:

էջ 80.- Ծամօթութիւն.- Հետեւեալ զրութիւնը, որ զրկուած է 1806 թուականին Ռուսաց Կայսեր, յետ տարագրութեան 1818, Հոկտեմբերին Սիս այցելելով՝ ցըրուած թուզթերուն մէջ գտայ, եւ աստ օրինակիւ աւելորդ չը Համարեցի ի զիտութիւն ապագայից:

Առ ամենաբարեպաշտ եւ մեծազօր կայսր ամենայն Ռուսաց Նիկոլա Բ, Խոնարհ ա-

զերս:

Տէր Արթայ,

Որպէս ամենայն եպիսկոպոսունք եւ թեմակալք վիճակաց Թուրքիոյ, նոյնպէս եւ մեր եւ ընդ մեզ ամենայն եպիսկոպոսունք եւ թեմակալք Կիլիկիոյ ի վիշտս Քահսեութեան Համակեցաք ընդ լուր Հրատարակութեան նորոգ կարգադրութեան, որով զիրաւունս եւ զիշխանութիւն մատակարարութեան նշարժ ստացութեանց եւ ընչից նկեղեցւոյն մերոյ Հաննալ ի ձեռաց ընդՀանրական Կաթողիկոսին եւ Սինոզին Սրբոյ էջմիածնի եւ ձեռաց ամենայն Հայ եկեղեցական իշխանութեանց, որք ի Ռուսս, տան ի ձեռս պետական նախարարութեան...

Ընդօրինակեցաւ 1919, նոյ. 18:

էջ 86.- 1921, փետ. 19 .- Յիշատակարամ Աջապահեան Մատթէոս էֆ. թով զտեսնած մագաղաթեայ Աւետարանին:

Փառք Ամենասուրբ Երրորդութեան եւ միանական Աստուածութեան Հարս եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յախտեանս յախտենից ամէն:

Ի Թուականիս Հայոց ի ՈՁԲ [=1240], ի Հայրապետութեան տեսնած Կոստանդեայ եւ ի Թազաուրութեան քրիստոսապսակ արքայի Հեթմոյ, զրեցաւ Աւետարանս կենսաբեր, յաշխարհս Կիլիկիոյ ձեռամբ մեղապարտ քահանայի Գրիգորի:

Ով աստուածասէր եւ սրբազան քահանայք եւ սպասաւորք Սրբոյ Եկեղեցւոյ Աստուծոյ, յորժամ աւտուութեան ինչ Հանդիպիք ի սմա ընթերցմամբ կամ ընդ արիւնակելով, կամ տեսնելով, զստացող Սր. Աւետարանիս զսրբասէր եպիսկոպոսն, զտէր Սարգիս, եւ զՀայրն նորա զպարոն Յուսէփ, եւ զմայրն Խորինշահ, եւ զեղբարս նորա՝ Ջարարէ աստուածամերձ քահանայ եւ զԳրիգոր եւ զԼիպարիտ եւ զԵմեճիր, եւ քեռին նորա զտէր Ստեփաննոս, յիշեսչիք ի սուրբ աղաթս ձեր:

Ես նուստ եպիսկոպոս եւ տարաշխարհիկ եղեալս Սարգիս, յերես անկեալ Աստուծոյ եւ աղաչեմ զամենեանս յիշել ի սուրբ աղաթս ձեր զքրիստոսապսակ Թազաուրս Հեթում եւ զՀայր նորա զպարոն Կոստանդին եւ զեղբայրս նորա զսրբասէր Բարսեղ քահանայն եւ զՊարոն Սմբատ Գունգուստապլ եւ զՊարոն Աւշրիս եւ զՊարոն Լեւոն, եւ զժորս նորա, զքրբասէր կրունաւորն Հոնիփսիմէ, եւ Թեֆանն եւ զԿալամառի, զի յոյժ երախտաւոր են լեալ ինձ

ի տունս եւ ի վանս իւրեանց քարերարութեամբ, զոր Հաստուացէ նոցա քարերարն Ած. Հարիւրապատիկ եւ քիւրապատիկ աստ եւ ի Հանդերձեանս ամէն:

Դարեանալ աղաչեմ զվախելոցդ աստուածային տառիս, զի զպափաքումն սրտի իմոյ կատարիցէք, զի ուր կատարումն իմ լիցի եւ զերեզմանն իմ, անդ կացցէ Աւետարանս ի յիշատակ քարի յիշելոցս եւ յիշողացք ի Ջս. Յս. ի Տէր մեր, որում փառք յաւիտեանս ամէն:

Իսկ մանրամասն ծագիկ սորա կատարեցաւ ի մեծ խմբարանիս Միլիճի ընդ Հովանեաւ Սր. Մարտի Լուստ, յառաջնորդութեան տէր Գրիգորի, Հեղի եւ խոնարհի, ձեռամբ սրբանեալ քահանայի Կոստանդեայ եւ Թորոս սարգ[աւազի], որոց ողորմեցի տէր Այլ եւ յոգնամեղ ստացող սորա տէր Սարգիս Արեւելցի ի նահանգէ Սիւական ի մեծածառչակ Աթոռոյ Տաթեւ կոչեցելոյ, եւ տարազեալ վասն մեղաց, ժամանեցի յայս սուրբ ուխտ եւ քաղում ընդունելութիւն եւ Հանգիստ գտի ի վերոյգրեալ Թազաուրահարէն: Ի մեծ Պարոնէն Կոստանդեա, առաւել քան զարժանն մեր, եւ յայլ միեղէն եղբարցս: Արդ՝ աղաչեմ զձեզ, ով մանկունք Սիովնի, կրկին արւհնութեան արժանի առնել զայն:

Մեծութիւմ՝ 18.8x10: Գրութիւմ՝ երկ. սիւմ՝ 8.7x9.1: Տողը՝ 19: Թերթը՝ 9 = 26:

էջ 85-70, զատարկ:

էջ 71.- 1921, Մարտ 7.- ՄՍՄՍՊՊՅ յերուպակամ Ուղեւորութեմ:

Ա.- Առ Ջլէմանտ (նամակով).- Ջսան զարեր [առաջ] ըստած Կիլիկեցի մեծ Առաքեալի խօսքը, Ջքարուք պատերազմն պատերազմեցայ... քսան զարեր յետոյ մեծ եւ արդար Հպարտութեամբ Ձեր Վսմութիւնը կրնայ ըսել...

էջ 72.- Բ.- Առ Պ. Տէօշանէլ.- Ձեր ընտրութիւնը ի նախագահութիւն Ճրանական մեծ Հանրապետութեան՝ Կիլիկիոյ թովանդակ Հայութիւնը խնդութեամբ լիցուց...

էջ 73.- Գ.- Պ. Նախարարապետ Ճրան. Հանրապետութեան.- Կիլիկիոյ Հայոց Թազաուրութեան ժամանակակից եւ խորհրդակից կաթողիկոսութեան իբրեւ յաջորդ՝ Հակոտակ ձերութեանս եւ Հակոտակ աննախընթաց տառապանքերով մաշած եւ քայքայուած ֆիզիքական ուժերուս պարտք սեպեցի զալ ի Ճրանսս...

էջ 75.- Դ.- Վեհաժողովի.- Յետ զինչազարին, յետ արդարութեան յաղթա-

նակին, ժողովուրդի մարտիրոսութեան արիւնը ծովացաւ, և կը սպառնար խեղդել ինձ Հետ Կիլիկիոյ վերապրող բոլոր Հայութիւնը...:

- Ե.- Ազնուաշուք Տիար Գալուստ Կիւլպէնկ.- Տասն և եօթն տարիներու ընթացքին այս երկրորդ գրութիւնն է, զոր Զեր Սիրիլութեան կ'ուզողմ: Առաջինը Համեմատաբար աւելի երջանիկ օրերու մէջ, Կիլիկիան Գոլէթ մը Հիմնելու մտադրութեամբ, զոր իրականացնելու Համար Զեր բաժինը վեհանկեարար շնորհեցիք Ատանայի յայգին, իբրև յարմարագոյնը տրամադրելով: Այն օրէն մինչև և այսօր արեան շատ զետեղէ անցանք և տակաւին արեան մէջ կը քալենք: Նոր ցաւեր, նոր պէտքեր Գոլէթներու ունենալու երազները յօսք ցնդեցին. վերապրող Հայութիւնը լոյսէ աւելի Հացի պէտք ունի. Աստուծոյ լոյսին, արեգակին տակ մերկ ու յօթի՝ լոյսէն և կեանքէն աւելի զերեզմանի խաւարին կը փափագի, ուր Հանգիստը չը վրդովիր սուիեններու, սուրբերու և եաթաղաններու արինակաթ շաշկեններէն:

Անօթի մեռնիլ և քնաջնջուիլ ազգաց պատմութիւնը չուսի, ինչպէս և Հայուն մարտիրոսութեան աննախընթաց օրինակը: Հայուն ճակատը այս սեւ արատով չը խառնուելու Համար կ'կած եմ Եւրոպա արգարութիւն և Հաց մուրախու: Չեմ ըսեր Զրիստոսի նման, "Երթ վաճառեա զամենայն ինչս քո և տուր ազքատաց", և ո՛չ ալ

կը փափագիմ, որ մեր ունեւորները ըսեն Երիթովի մարտաւորին նման, "ԱՀա զկէս ընչից իմոց տաց աղքատաց": քայց իրաւունք ունի ինչորեւիտ և բազանջնելու "յաւելորդաց ընչից" և "զփշրանս անկեալս ի սեղանոյ":

Առաջին անգամ Զեզ կը դիմեմ ազնուաբար Տէր, և կը փափագիմ, որ առաջինն ըլլաք ի Կիլիկիա Համախմբուած բիւրաւոր Հայ կարօտեալներու օգնութեան և զուարթառատ նուիրատուութեան քարերար ձեռք կարկառողը.- Օրհնածիր ողջուելու.- Ապրիլ 8, 1920, Փարիզ:

էջ 76.- Զ.- Նախարար Պատերազմական.- Կիլիկիայէն չը մեկնած մեզի ծանօթ կացութիւնը պարզած ենք թէ՛ վսեմ. Նախագահին և թէ Նախարարպետին...:

էջ 78.- Է.- Պ. Նախարարպետ և Արտաքին Գործոց Նախարար Ծրանսական Հանրապետութեան.- Կիլիկիոյ վերապրող Հայերուն ամենօրեայ տառապանքը, մանաւանդ քնաջնջումի սպառնալիքը պարտաւորեցին զիս ասպետական Ծրանսայի գիմեմ...:

էջ 79.- Ը.- 1920, մայիս 29-ի Լոնտոն, թէյասեղանի վրայ.- Տեարք, Դուք ապրելով մտքի, խօսքի և զազափարի ազատ աշխարհի մէջ, քնական է, որ սպասէք Զեր անկաշկանջ զգացումներուն Համապատասխան խօսքերու...:

էջ 88-86, գատարկ:

3603 Ա

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ.- 4

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ.-

Ծաւալ 20x18.5x2.5: էջք 576: Հանգամանք շատ լաւ: Թուզթ Հասարակ Գրութիւն մանիշակագոյն թանաթով, միասին, 18 տող, կարմիր զիծերու միջև: Ենդազիր մաքուր: Լաթակազմ խաւարտեայ նորադրոջմ: Դատարկ թուզթ սկիզբը 4 թերթ:

ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹԻՒՆ.-

էջ 1.- Եկեղեցական Պատմութիւն: Թօզուած Ա.- Թառաջարեւ.- Սահման և

նպատակ եկեղեցական պատմութեան.- Այն ամէն մարդիկ, որ կը Հաւատան թէ Ես. Նազդովեցին՝ Զրիստոսն էր, որ ըստ կանխասացութեան մարգարէից՝ ի վախճան ժամանակաց երեւցաւ իբրև Փրկիչ աշխարհի, կը կազմեն Զրիստոսի Եկեղեցին...:

էջ 2.- 2.- Եկեղեցական պատմութեան նիւթերը:

էջ 5.- 8.- Եկեղեցական Պատմութեան բաժանումներն ըստ ժամանակի:

էջ 8.- 4.- Եկեղեցական պատմութեան

աղբիւրներն:

էջ 9.- 6.- Նախապատմութիւն: Աշխարհիս վիճակը անմիջապէս նախ քան ըզ-Ջրիստոս:

էջ 177.- 22.- Հալածումն Ջրիստո-նէութեան ի Հայս:

էջ 289.- 27.- Կրօնական զժտութիւնք եկեղեցւոյ մէջ:

էջ 266.- 29.- Մկրտութիւն:

էջ 264.- 30.- Տօնք եւ Պաշար:

էջ 266.- 31.- Կոստանդիանոսէն մինչև Մենն Կարոլոս, 828-767:

էջ 279.- 32.- Տարածումն քրիստո-նէութեան:

էջ 286.- 33.- Հայոց բոլորական դարձն քրիստոնէութեան.- Ա.- Սուրբն Գրիգոր եւ Մենն Տրդատ.- 1.- Ջրիստո-նէութիւնն մի վսեմ եւ սքանչելի յաղթա-նակ կանգնեց մեր Հայոց աշխարհին

մէջ...:

էջ 299.- Յօդուած 84.- Յաջորդք Սրբոյն Գրիգորի:

էջ 318.- 85.- Մենն Սահակ:

էջ 326.- 86.- Յովսէփ կաթողիկոս եւ նահատակութիւն Սրբոց Վարդանանց եւ Ղենոնցեանց:

էջ 331.- 87.- Յաջորդութիւն կաթողիկոսաց ի Մելիտէ մինչև ցՄովսէս Բ:

էջ 349.- 40.- Մահմետականութիւն կամ Իսլամ:

էջ 358.- 48.- Բ.- Արիանոսութիւն եւ Առաջին Տիեզերական Ժողով:

էջ 371.- Կանոնք Նիկիական Ժողովոյ:

էջ 379.- Գ.- Մակեդոնեան աղանդն եւ Երկրորդ Տիեզերական Ժողովն:

էջ 424.- 49.- Ը.- Պատկերամարտից խոովութիւնը:

էջ 481-576, զատարկ:

3603 Բ

ԵԿԵՂԵՅԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ.- 5

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ.-

Մաւալ 19x18x2: էջք 486: Հանգամանք լաւ. վերնագիրներէն շատերուն տեղերը քաց մնացած են: Թուղթ Հասարակ: Գրու-թիւն մանիշակագոյն թանաքով, միասին, 19 տող, սեւ գիծերու մէջէն: Ենդագիր: Կազմ կիսալաթ խաւաքարտեայ: Դատարկ թուղթ սկիզբը 8 թերթ:

ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹԻՒՆ.-

էջ 1.- Այն ամէն մարդիկ որ կը Հաւատան թէ Յիսուս Նազովրեցի Ջրիստոսն էր...:

էջ 9.- Աշխարհիս վիճակն մախ քամ զՋրիստոս...:

էջ 174.- [Յանկ Կայսերաց Հոովմայ]:

էջ 271.- [Տօնք եւ Պաշար]:

էջ 274.- [Կոստանդիանոսէն մինչև Մենն Կարոլոս, 828-767]:

էջ 294.- [Ջրիստոնէութիւնն մի վսեմ եւ սքանչելի պտուղ կանգնեց մեր Հայոց աշխարհին մէջ...:

էջ 364.- 42.- Ա. Դոմատեա[0]ց հերձուածը:

էջ 367.- 48.- Բ.- Արիանոսութիւն եւ Առաջին Տիեզերական Ժողովն:

էջ 379.- Կամոց Նիկիական Ժողովոյ:

էջ 397.- 46.- Ե.- Նեստորականու-թիւն եւ Գ. Տիեզերական Ժողով:

էջ 485.- 49.- Ը. Պատկերամարտից խոովութիւնը:

էջ 441-486, զատարկ:

3604 Ա

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ Ա. ԱԻԵՏԱՐԱՆԻ (ՄԱՍՆ Ա).- 3

Մամբրէ Եպս. Մարիսեան

Երուսաղէմ

1898

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ.-

Մաւալ 20.5x14x2: էջք Ի+406: Հանգամանք լաւ: Թուղթ գծաւոր: Գրիչ՝ Նաչատուր Պէօճիկեան, Կեսարացի: Գրութիւն մանիշակագոյն թանաքով, միասիւն, 21 տող, կարմիր զիծերու միջիւ: Ենդագիր: Կազմ կիսակաշի խաւաքարտեայ նորազրոշմ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.-

էջ Ա-Ձ, Ը, Ժ-Ի, դատարկ:

էջ Է.- Ուսումն Զորից Սրբազան Աւետարանաց, աշխատասիրեաց ի պէտս ժառանգաւոր աշակերտաց Սր. Աթոռոյն Երուսաղէմի, Մամբրէ Եպսկ. Յ. Մարկոսեան, Արարկերցի, 1898, փետր. 12:

էջ Թ.- Ընդօրինակեալ ի Նաչատուր Ս. Պէօճիկեանէ Կեսարացոյ, 1898, մարտ 12, յերուսաղէմ, ի վանս Սրբոց Յակոբեանց:

էջ 1.- Ուսումն Սրբոյ Աւետարանի Յիսուսի Ջրիտոսի Տեսոն մերոյ: Դաս Ա.- Ամենաբարի Ած. իւր քարու-

թիւնն յայտնելու Համար ստեղծեց տինգերքը Համակ քարի, գեղեցիկ եւ կարգաւորեալ...:

էջ 16.- Գլուխ Բ.- Դաս Է.- Գիրք ծննդեան Յի. Ջի. որդւոյ Դաւթի...:

էջ 84.- Գլուխ Է, Դաս Խ.- Փրկչին Գալիլիա երթալը, Թազաւորազնի որդւոյն բժշկութիւնը:

էջ 229.- Դաս Ը.- Յովհաննու Աշակերտներուն Հարցումը:

էջ 291.- Գլուխ ԺԷ: Դաս ԾԻԷ: Գլխատումն Յովհաննու Մկրտչի:

էջ 848.- Գլուխ ԻԱ: Դաս ԾԾ: Խոնարհութեան Խրատ:

էջ 878.- Դաս ԾԿԱ: Իբք կնոջն շնացելոյ:

էջ 882-886, դատարկ:

էջ 897.- Յանկ, կարմրատառ:

էջ 408-406, դատարկ:

Յետնագոյն յիշատակագրութիւն.- 1920

էջ 1, վերի լուսանցքին.- Նուէր ժառ. վարժարանի Մատենադարանին Միք. Մամիկոնեանի, նախկին սան, 1920, Սաղեմ:

3604 Բ

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ Ս. ԱԻԵՏԱՐԱՆԻ (ՄԱՍՆ Բ).- 3

Մամբրէ Եպ. Մաթեոսեմ

Երուսաղէմ

1899-1900

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ.-

Մաւալ 20.5x14x8.5: էջք ԺՁ+887 -1168: Հանգամանք լաւ ընդհանուր առմամբ, թացութենէ վնասուած են էջ 887-478, եւ 1144-1161: Թուղթ գծաւոր: Գրիչ՝ Նաչատուր Պէօճիկեան: Գրութիւն եւ զիր ըստ նախորդին: Կազմ կիսակաշի խաւաքարտեայ նորազրոշմ. կռնակը մաշած:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.-

էջ Ա, Բ, Դ, Զ, Ը-ԺՁ, դատարկ, վեր-

ջինը անմաքուր:

էջ Գ.- Մասն Երկրորդ:

էջ Ե.- Ուսումն Զորից Սրբազան Աւետարանչաց, Աշխատասիրեաց ի պէտս ժառանգաւոր աշակերտաց Ս. Աթոռոյն Երուսաղէմի, Մամբրէ Եպս. Յ. Մարկոսեան, Արապկերցի, Առաքելական Ուխտէն Սրբոց Յակոբեանց, 1898 փետրվար 12, Երուսաղէմ:

էջ Է.- Ընդօրինակեալ աշակերտի նորին Նաչատուր Ս. Պէօճիկեան Կեսարացոյ, 1899, սեպտեմբեր 1-1900, սեպտեմ-

բեր 26, Երուսաղէմ:

էջ 887.- Գլուխ ԻԳ, Դաս ԾԿԲ, Զս. Իր Որդի Աստուծոյ լինելը կը յայտնէ:

էջ 485.- Գլուխ ԻԴ, Դաս ԾԶԶ, Ազօ-թել եւ Ազօթթի զօրութիւնը կը սովորեցնէ:

էջ 488.- Գլուխ ԻԸ, Դաս ԾՂԳ, Առակ անիրաւ տնտեսին:

էջ 515.- Դաս ԾՂԹ, Առակ ազգատ Ղազարոսի եւ ան[ի]զորմ մեծատան:

էջ 522.- Գլուխ ԻԹ, Դաս Մ, Ղազարոս Յարութիւնը:

էջ 802.- Դաս ՄԻԳ, Յետո Յաղթական Հանդիսի Երուսաղէմ կը մտնէ:

էջ 868էն յետոյ սխալմամբ 668 դրած է:

էջ 682.- Գլուխ ԼԵ, Դաս ՄԽԲ, Յս. Թէ Երուսաղէմն ու Տաճարը կործանելու եւ Թէ աշխարհի վախճանին Համար Իր Գալըստեան նշանները կը գուշակէ:

էջ 775.- Գլուխ ԼԵ, Դաս ՄԿԲ, Փրկիչը կը մխրթարէ եւ կը թաջալերէ Առաքեալները:

էջ 868.- Գլուխ ԼԸ, Դաս ՄՁԲ, Պարտիզին մէջ Յի. ազօթթն ու տազնապը:

էջ 1022.- Գլուխ ԽԲ, Դաս ՅԺԱ:

էջ 1068.- Դաս ՅԺԶ, Գալուստ Հոգւոյն Սրբոյ:

էջ 1078, վարք.- Մ. Ե. Մարկոսեան, - Վերջ, 1900, սեպ. 16:

էջ 1074-1148, դատարկ:

էջ 1087ին կը յաջորդէ 1104, կազմի ժամանակ 68րդ պրակին սխալմամբ 57 երոր-զէն առաջ դրուելուն պատճառաւ:

էջ 1144.- Յանկ, կարմրատառ:

էջ 1152-1168, գատարկ:

Յետմագոյմ յիշատակագրութիւն.-
էջ Է, վերի լուսանցքին.- Նուէր ժառ. Վարժարանի Մատենադարանին, նախկին սան Միթ. Մամիկոնեան 1820, Սաղմ:

3605

ՃԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ.- 7

Քրքմ. Յովնաճճէս Վթ. Վաճաճէցի

Երուսաղէմ

1902

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ.-

Ծաւալ 21x18.5x8: էջք ժԱ+652, Հանգամանք լաւ: Թուզթ Հասարակ. Գրիչ՝ Մովսէս Թութլուեան, Այնթապցի: Գրութիւն սեւերակ մեղանով, միասին, 17 տող՝ յաճախ նուազ, սևագրի շրջանակներու մէջ: Ենզգգրի Ուղղագրութիւն տկար: Կազմ կիսակաշի խաւարարտեայ նորագրոջմ: Կնիթ, "Ուսումնական Խորհուրդ Երուսաղէմի", էջ Է, ժԱ:

ՐՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.-

էջ Ա-Դ, գատարկ: Նոյնպէս էջ Զ, Ը-Ժ:

էջ Ը.- Թարգմանեաց ի գլուարէ յաշխարհ[խարար Զմիւրնիացի Յովհաննէս պերճիմաստ վարժապետ Միթգայ Վահանգէցի, զընազրեալ յԱյնթապցի Մովսէս Թութլուեան,

որ է միբան անաթելական Ս. Գահիս Երուսաղէմի Սրբոց Յակոբը[ն]անց, սկսեալ յունվար ամսոյ 18, աւարտեցաւ փետրվար ամսոյ 16, յամի Տեառն 1902:

էջ ժԱ.- Նախակթութիւն Ծարտասանութեան մասանց:

Հ.- Զի՞նչ է Ծարտասանութիւն:

Պ.- Ծարտասանութիւնն է՝ որ կը սորվեցնէ ճարտար խօսելու ձևերը ու Հանձմանքները, եւ ով որ այս ձևերը ու Հանգամանքները ճարտարութեամբ զործածէ ճարտասան կամ քանիքուն կ'ուրի...:

էջ 1.- Հ.- Զանիթ կը բաժանի ճարտասանութիւնը:

էջ 16.- Յաղաք Վիպասանութեան:

էջ 81.- Յաղաք Առասպելաց:

էջ 112էն յետոյ սխալմամբ զրած է 114:

- էջ 120.- Ընդլայնումն:
- էջ 822էն յետոյ սխալմամբ դրած է 824:
- էջ 489.- Յօդուած Եօթներորդ, Յաղագս Մխիթարութեան:
- էջ 566էն յետոյ սխալմամբ դրած է 567:
- էջ 581.- Գլուխ Առաջին. Յաղաքս Յիշողութեան:
- էջ 602.- Վախճան Ճաճտասանութեան Տետրակիս:
- էջ 608-612, դատարկ:
- էջ 618.- Յանկ զլխաւոր իրաց պարունակելոց ի տետրակիս՝ ըստ կարգի այբուբենից:

- էջ 684.- Վախճան Յանկիս:
- էջ 685.- Մոռացեալ Յանկ:
- էջ 686.- Վախճան մոռացեալ ցանկիս:
- էջ 687-688, դատարկ:
- էջ 689.- Սուրբ Սահակայ եւ Սուրբ Մեսրովպայ Գերեզմանք, ընդ օրինակեալ ի Բիւզանդեան Հայ Օրաթերթէ, Ա. Տարի, 207 թիւ, շաբաթ 5, 117, յուլիս, 1897, Երուսաղէմ:
- Յ. Թաթարեան
- էջ 649.- Վախճան Պատմութեան:
- էջ 650-652, դատարկ:
- Յիշատակագրութիւն.- 1904
- էջ 6, կանաչ մեկանով.- Նուէր Այնթապցի Մովսէս Կ. Թութլուեանէ ժառանգւորաց դպրոցի թանգարանին, 1804, Նոյեմբեր 80, յերուսաղէմ:

3606

ՃԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ.- 3

Ստեանկ Եղգ. Նապայեմմ

Երուսաղէմ

1899

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ.-

Մաւալ 20x15x2, էջք Ը+820, Հանգամանք լաւ ընդհանրապէս. կան թացութեան վնասուած էջեր: Թուզթ Հասարակ: Գրիչ՝ Նաչատուր Ս. Պէօճիքեան, Կեսարացի: Գրութիւն մանիշակագոյն թանաքով, կարմիր ընդգծումներով, միասին, 18 տող, կարմիր գիծերու միջեւ. երկրորդ մասին մէջ Սօս եւ Սօնդիպին երկսին: Ենդազիր: Լաթկազմ խաւաքարտեայ նորադրոյմ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.-

- էջ Ա, Բ, Դ, Զ-Ը, դատարկ:
- էջ Գ.- Դասատետր Ծարտասանութեան ծաղկաքաղ Հաւաքեալ Համառօտեան ի պէտս աշակերտաց ժառանգաւորաց Վարժարանի Սահակ Եպիսկոպոս Նապայեան, յԵրուսաղէմ, 1899, սեպտ. 1, ի Վանս Սրբոց Յակովբեանց:
- էջ Ե.- Ընդօրինակեալ աշակերտի նորին Նաչատուր Ս. Պէօճիքեանի Կեսարացոյ, յԵրուսաղէմ, 1899, սեպտ. 1-1900 յունվար 1:

էջ 1.- Ծարտասանութիւն: Նախագիտելից:

1.- Ունկնդիրները Համոզելու Համար քարոզ խօսելու արուեստը կ'ըսուի Ծարտասանութիւն, իսկ քարոզ խօսողը Ծարտասան...:

- էջ 69.- Գլուխ Երկրորդ: Եարժութիւն Կրից:
- էջ 88.- Մասն Երրորդ: Տրամադրութիւն:
- էջ 189.- Գլուխ Երկրորդ: Զեք Արտասանութեան:

- էջ 144.- Վերջ:
- էջ 145.- Դրուագ առաջիմ երգոց: Նկարաչիւր Վահեանեան տօնից.- Սօս զանիւն Հաւաքեալ իւրոյ Սօնդիպայ ամփոփէ յարտեան լերին...:

- էջ 169.- Դրուագ Երկրորդ Երգոց.- Ասողիկ ընդ Սիրոյ եւ Ենորհաց նոր նստի լսել...:
- էջ 205.- Ի Գրոց Սրբոյն Ներսէսի Ենորհաւոյնի:
- էջ 222էն յետոյ սխալմամբ դրած է 224:

էջ 226.- Վերտառութիւն ի սուրբ եւ յերջանիկ զուժարս երկոտասան առաքելոցն Ջի., Հանեալ Հաւաքմամբ ի գերապանն ներբողինէ առաքելոց, զոր արարեալ է Արքայն Գրիգորի նարնկացւոյ:

էջ 265.- Դրուազ Չորրորդ Երզոցն.- Պատմէ Սօս զաստիճիւն Ստրոնաքայ ներփնւոյ...:

էջ 280.- Ջեր ի Սօս եւ Սօնգիպի Երզ Հինգերորդ:

էջ 808.- Վերջ:

էջ 804ին կը յաջորդէ 808:

էջ 808.- Ձիթնեաց Լեւրան վրայ:

1.- Արշալայտ էր՝ արեւթանալ թիւհ-րով...:- 12 մարտ, 1900, Գ:

էջ 808-820, զատարկ:

Յետնագոյն յիշատակագրութիւն.- 1920

էջ 1, վերի լուսանցքին.- Նուէր Ժառ. Վարժարանի Մատենադարանին: Միթ. Մամիկոնեան, 1920, Ազգեմ:

3607

ԺՈՂՈՎԱԾՈՅ (ԿՐՕՆԱՎԱՆ)

ԵԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ.-
Մաւալ 17x10: էջք 40: Հանգամանք լաւ: Թուղթ գծաւոր: Գրութիւն սեւորակ մեկանով, միասիւն, 81 տող, սեւ գիծերու միջեւ: Ենդագիր մանր: Կողք խաւաքարտեայ:

ՐՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.-
էջ 1-2, զատարկ:
էջ 8-10.- Տասը պատուիրաններ:
էջ 10.- Եկեղեցւոյ պատուիրանաց վրայ:

էջ 18.- Ջսան զլուխ խոստովանութեան Հարկաւոր քանք:

էջ 15.- Յաղագս ըզջախոհութեան.- Վասն ըզջախոհութեան Հարցջիր...:

էջ 16.- Վասն ազահութեան:

էջ 28.- Յաղագս Հպարտութեան:

էջ 24.- Յաղագս ծուլութեան:

էջ 86.- Յաղագս վաճառականաց եւ քաղաքացաց:

էջ 89.- Վասն արեակման, եւ ապաշխարութեան:

էջ 40, զատարկ:

3608

ԿԱՆՈՆԱԳԻՐ

Հայոց Կաթողիկոսութեամ եւ Պատրիարքութեամ

[Երուսաղէմ]

[1916]

ԵԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ.-
Մաւալ 21x17: էջք 40: Հանգամանք շատ լաւ: Թուղթ Հասարակ: Գրութիւն՝ խորագիրները կարմիր, մնացեալը սեւորակ մեկանով, միասիւն, 28 տող, կարմիր գիծերու միջեւ: Ենդագիր յստակ: Կողք՝ կապտորակ թուղթ:

ՐՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.-
էջ 1.- Կանոնագիր Հայոց Կաթողիկոսութեան Եւ Պատրիարքութեան:

Յատաշարան.- Ծոգ. 1.- Ստոյ եւ Աղթամարի Հայ Կաթողիկոսութիւնները միացուած եւ Պօլսոյ ու Երուսաղէմի Պատրիարքութիւններն ալ այս Կաթողիկոսութեան

վրայ աւելցուած են...— Հմմտ. Պատմ. ԿՔԶ. Կիլիկիոյ, 1889, Անթիլիաս, էջ 888:

էջ 27-28.— Ներկայ Կանոնագրին գործադրութեան դրուիլը եւ Պետութեան Կանոններուն վրայ աւելցուիլը իրատէ ըրի, 2 ԵէՎվալ, 1884, Մէհմետ Ռէշատ.— Հմմտ. նոյն, էջ 948:

էջ 29.— Հայոց Պատրիարքարանը. — Կայս. Կառավարութիւնը պատրաստեց նոր Կանոնագիր մը, ասիկա կը փոփոխէ Հայոց Պատրիարքարանին կազմական ասպիկին Օրէնքը որ կը տարբերէր ուրիշ Պատրիարքարաններու եւ մասնաւոր Տիեզերական Պատրիարքարանին կազմութիւնը կարգաւորող Կանոնագիրներէն: Արդարեւ, մինչ Տիեզերական Պատրիարքարանը կազմուած է երկու ժողովներէ, որոնց մին Հոգեւոր եւ միւրը Խառն, այս վերջինը կազմուած սահմանափակ թուով անձնաւորութիւններէ, Հայոց Պատրիարքարանը ունէր Կրօնական Ժողով մը, ճազաքական Ժողով մը, եւ Ազգային կոչուած երրորդ Ժողով մը, 140 անդամէ քաղկացեալ: Այս վերջին ժողովը, որուն անդամները կ'ընտրուէին Հայ ժողովուրդէն, կը զուգարուէր Օրէնագիր ժողովներու նըման որոշեալ ժամանակներու մէջ եւ կ'ընտրէր ճազաքական Ժողովը:

Այս կազմակերպութիւնը կարգադրող Օրէնքը պատրաստուած էր 1279 [=1862]ին Հայոց Պատրիարքարանին մէջ զուգարուած Ժողովի մը կողմէ: Այն ատենուս Եպարզոսը առանց Կանոնագիրը ուսումնասիրել տալու Պետական Խորհուրդին կողմէ եւ առանց զայն ներկայացնելու Նախարարաց Խորհուրդին, ստացեր էր Կայս. Իրատէն, անոր զործադրութեանը Համար: Գլխաւոր պատճառներէն մին, որով Հայ յեղափոխական կազմակերպութիւնն այնքան ազէկ կարգադրուած ու այնքան զժխճ հետեւանք ունեցած էր, անտարակոյս խնդրոյ առարկայ Կանոնագիրն է որ ամէն իշխանութիւն կը

կեդրոնացնէր Ազգային կոչուած Ժողովին մէջ: Կրօնական կազմակերպութիւններն այս կերպով ենթարկուած էին ազդեցութեանը յեղափոխական կուսակցութիւններուն եւ ի վերջոյ կղերք Բովիքթիներուն գործակալը դարձած էր: Բաց աստի, իրենց խորհուրդներով եւ քաղաքներով Հայ ժողովուրդին սիրտերը շահած քահանաներն իրենց Հոգեւոր ազդեցութիւնն ի գործ դրին իրենց Հօտին ներշնչելու Համար քաղաքական կանոններ եւ սկզբունքներ:

Այս Հոգեւոր ազդեցութեան շնորհիւ ներշնչուած քաղաքական իտալը խախտեց ըովանդակ Հայ երիտասարդութիւնը, եւ Հրամանը վերէն գալով՝ արեան եւ սուրի մղեց այս երիտասարդութիւնը, որ մերթ անզլիական եւ մերթ վր, ինչպէս այժմ, Ռուսներուն օգնութեանը վրայ յոյս դնելով, կոյր գործիք դարձած էր օտար քաղաքական շահերու եւ զրգոսթեանց: Նոր Կանոնագրով Կայս. Կառավարութիւնը շնչեց Ազգային կոչուած Ժողովը եւ Տիեզերական Պատրիարքարանին նման անոր տեղ Հաստատեց Հոգեւոր Ժողով մը՝ կազմուած Հոգեւոր պետերէ, եւ անոր պաշտօնը պիտի ըլլայ վարել լոկ կրօնական գործերը, եւ ուրիշ Ժողով մը, որուն անդամները սահմանափակ թիւով պիտի ըլլան եւ պիտի առնուին կրօնական պետերուն եւ ժողովուրդին մէջէն: Այս վերջին Ժողովին պաշտօնն է կրօնական ու դպրոցական Հիմնարկութիւններով եւ քարեգործական գործերով զբաղիլ: Կառավարութիւնն այս երկու Ժողովները զրած է Նախագահութեանը ներքեւ Կաթողիկոսին որ ստացաւ Պատրիարքի տիտղոսը: Այս կերպով կառավարութիւնը քնաւ Հարուած տուած չէ Սահմանադրութեամբ ապահովեալ կրօնական ատանձնաշնորհումներուն եւ անձնութիւններին, այլ ընդհակառակն պահպանած է Պատրիարքարանը Բովիքթիներուն ձեռքը խաղալիկ ըլլալէ:

էջ 88-40, զատարկ:

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ.-

Մաւալ 20.5x18.5: էջ 78: Հանգա-
մանք լաւ: Թուղթ գծաւոր: Գրութիւն սե-
ւորակ մեկանով, միասին, 22 տող: Ենզա-
գիւր անարուեստ: Կողք թղթեայ: Ղատարկ
էջեր 10, 14, 22, 80, 88, 50, 52:

ՐՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.-

- էջ 1-2, գատարկ:
- էջ 8.- Տիտղոսաքերթ.-
Յիշատակներ, Սաղմական, Ուղեգրա-
կան, Տեղագրական, եւ Նամականի:
- էջ 4, գատարկ:
- էջ 5.- Բազէջէն մեզ գրուած նամակէ
մը կ'ըսողենք, - "Ուղադրութեան առնուե-
ցաւ Բազէջի շրջակայ կարեւոր գիւղերու
կրթական Հարցը, որոցմէ ամենէն աւելի
գիտելին է Ուուլիթի ատենը..." - Հմմտ.
- Եղիշէ եպօ. Զիլիկիթիան, Արևազանդ Բ.,
Վեր Յուշեր Անցեալէն... 1900-1908, Տպ.
Պէյրուս, 1927, էջ 1:
- էջ 7.- Ի՞նչ կ'ընեն մեր Առաջնորդ-
ներ.- Հմմտ. Նոյն, էջ 2:
- էջ 17.- Բազէջէ կ'զրեն մեզ.- "Թե-
մօրէից կարօտ գիւղացիներուն սերմնցու

- գնելու Համար..." - Հմմտ. Նոյն, էջ 7:
- էջ 88.- Բազէջի լուրեր.- Հմմտ. Նոյն,
էջ 14:
- էջ 87.- Մուշէն Պիթիլիզի Պիթիլիզի Ա-
ռաջնորդութիւնը.- Հմմտ. Նոյն, էջ 16-
42, 1900, Յուլիս 14, Բազէջի Վարդապետ:
- էջ 81.- Ետտախէն քահանայք եւ վիճա-
կայինք Հեռագիր մ'ուղղելով ի Պատրիար-
քարան, կ'իսնզրեն որ Աղթամարայ կաթող.
փոխանորդ Սահակ Վրդ.ի եպիսկոպոսացման
վկայագիր յանձնուի... - Հմմտ. Նոյն, էջ
29:
- էջ 71.- Վերջերս Խիզանի եւ իր Նո-
րահաստառ որբանոցի մասին Հետեւեալ տե-
ղեկութիւններն առած եմ... - Հմմտ. Նոյն,
էջ 85:
- էջ 78.- Բազէջի Առաջնորդ Տ. Եղիշէ
Վ. Զիլիկիթիան, որուն Պուլիս Հասնիլը
եանուցիւնք, քաջողջ վիճակի մէջ է...:
Բազէջը լքանելուն Համար չենք զովեր
զինք, քայց իր ընթացքին անկեղծութիւնն
օրինակելի կը գտնենք.- Հմմտ. Նոյն, էջ
87-88:
- էջ 76-78, գատարկ:

3610

ՏԵՏՐ ԺԱՄՈՒՅՆԵՐՈՒ

Երուսաղէմ

1806-1807

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ.-

Մաւալ 22x15: էջ 52: Հանգամանք
լաւ: Թուղթ գծաւոր: Գրութիւն սեւորակ
մեկանով, միասին, 20-27 տող: Ենզագիր:
Կողք՝ ճերմակ թուղթ:

ՐՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.-

Առաջին կողքի երեսին.
Տետր ժամուցմերու ձեռամբ Ամեն. Սր-

- բազան Պատրիարք Հօր, 1906 Յունվար 1-
1907, զեկտ. 81, Երուսաղէմ:
- էջ 1-2, գատարկ:
Մամօր.- Ժամուցներու սակերն են. Ե-
պիսկոպոսական պատարագին 2 լիբա զագ.,
քահանայական Հանգիսաւոր պատարագին մէկ
մէճիտ, քահանայական պարզ պատարագին կէս
մէճիտ:
- էջ 51-52, գատարկ:

3611

ՈՒՂԵԳՐՈՒԹԻՒՆ

Մ. Կ Միրախարեան

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ.-

Մաւալ 22X14X1, էջք 220, Հանգամանք
լաւ: Թուղթ Հասարակ, Գրութիւն կարմիր
մեկանով, միասին, 20 տող: Ենդագիր:
Կազմ կիսալաթ խաւաքարտեայ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.-

էջ 1.- Տիտղոսաթերթ.

Նկարագրութիւն Տանկահայաստանի այլ
եւ այլ քաղաքաց եւ գիւղօրէից, երկասի-
րեալ ի Մ. Կ. Միրախորեանէ, քաղեալ [ի]
Մասիս լրագրոյ, 1888:

էջ 2, դատարկ:

էջ 8.- Ուղեւորութիւն, Ա.- Տրապի-
զոն կը գտնուի Սեւ Մովու արեւելեան
Հարաւային եզիրքը...:

էջ 18.- Բ.- Վարդահան կամ Իւչ Ջի
լիսէ:

էջ 21.- Գ.- Ծանապարհնիս ջարուեա-
կելով, Հեռզհետէ կը մտնանք Մասաթայ
երկայն լեռնահովիտն...:

էջ 22.- Դ.- Ուղեւորութիւննիս յա-
ռաջ տանելով ի Վերին Բասնէ՝ երթամք ի
Հասան-Գալէ...:

էջ 45.- Ե.- Տուրուբերան նահանգի
սոյն կարեւոր գաւառի (Մշոյ) քուն սահ-
մանն (ինչպէս ուրիշ մի քանիններուն) մեր

նախնի աշխարհագիրներէն որոշուած էէր
ճշգրտապէս...:

էջ 57.- Զ.- Մշոյ արեւելակողմը
11/2 ժամ Հեռու Աստղեքերզ կամ Մոկաց
քերզ կոչուած անրակ մի կայ...:

էջ 81.- Ը.- Բաղեջէն մեկնիմք գնա-
լու ի Աղերզ...:

էջ 114.- ԺԱ.- Դատուանէն Հարք գա-
ւառը մեկնելու Համար մեր առջեւ երկու
ճանապարհ կը բացուին...:

էջ 128.- ԺԲ.- Կարճկան գաւառակն 14
Հայ եւ մի քանի Պուրզ գիւղերէ կը բաղ-
կանայ...:

էջ 148.- ԺԳ.- Այսօր կը մեկնիմք
ղէպ ի Հովիտն Ոստանայ...:

էջ 164.- ԺԵ.- Խորզումէն կամ Հիւր-
գոմէն մեկնիմք ղէպ ի Հարաւակողմն ի
Ջէօզլ...:

էջ 208.- ԺԸ.- Հայոց Ձորոյ Հիւսի-
սային մասն աւարտած լինելով, այժմ
դառնամք ղէպ ի Հարաւ...: Սոյն երծաղա-
քեր Աստուածածին Վանքն ունի վանահայր

վարդապետ մը ընդ Ազթամարայ Կաթողիկո-
սին... ջարուեակնիմք մեր ուղին եւ 20
վայրկեանէն կը Հասնիմք էրէմէրու կամ
Հէրէմէրու կոչուած գիւղը, որոյ վերայ
յաջորդով:

էջ 214-220, դատարկ:

3612

ԿԱՆՈՆ ՊՂԾԵԱԼ ՏԱՃԱՐԻ

Երուսաղէմ

1868

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ.-

Մաւալ 21X14.5: էջք 40: Հանգամանք
լաւ: Թուղթ Հասարակ, Գրիչ՝ Սարգիս Սրկ.
Գէորգեան, Պրուսացի, Գրութիւն սեւորակ

մեկանով, միասին, 18 տող: Նոտր ջեղա-
գիր: Լաթակազմ խաւաքարտեայ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.-

էջ 1.- Կանոն Պզծեալ Տաճարի ի յանօրինաց:

Գիշերն Հսկումն առնեն ի յայն եկեղեցին, եւ ի ժամ Ծաշուն ասն զայս Սաղմոս.- Աստուած մտն Հեթանոսք ի ժառանգութիւն քո, պղծեցին զՏաճար Սուրբ Թո...:

էջ 10.- Եւ ապա սարկաւազն քարոզէ այսպէս...:

- Եւ քաճանայն ասէ զԱղօթս զայս.- Որ ընդունօզ ես ազօթից ժողովրդեան

քում...:

Յիշատակագրութիւն.- 1868

էջ 86, վարը.- Վերստին ընդ օրինակեալ Սրբոյ Առաքելական Աթոռոյ Սրբոց Յակոբեանց միաբան նուաստ Պրուսացի տիրացու Սարգիս Աւագ Սարկաւազէ Գէորգեան: Յամի Տեսուն Փրկչի յմերոյ Յիսուսի, 1868, մարտ 1:

էջ 86-40, զատարկ:

3613

ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆ Ա. ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԱՃԱՐԻ

Երուսաղէմ

1867-1906

ՆԿԱՐԱՆԳՐՈՒԹԻՒՆ.-

Ծաւալ 20.5x14.5x1: էջք 160: Հանգամանք քաւարար: Թուղթ գծաւոր: Գրիչ մեծագոյն մասին՝ Ալէքսան Պօլսեցի: Գրութիւն՝ էջ 8-100 մանիշակագոյն թանաքով, 101-180 սեւ մատիտով, 181-157 այլազան: Ենդագիր: Ուղղագրութիւն արտասովոր: Կազմ կիսալաթ խաւաքարտեայ:

ՐՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.-

էջ 1-2, զատարկ:

էջ 8.- Յիշատակարան...: "Յիշեցէք եւ Ած. ողորմի ասացէք..." - Հմմտ. Պատմ. Երուսաղէմի, թրգմ. Մ. Եպս. Նշանեան, 1981, էջ 1296:

էջ 4, զատարկ:

էջ 6.- Յիշատակարան.- " Ի պատրիարզութեան Տ. Կիրակոսի Վեհեր..." - Հմմտ Նոյն, էջ 1297:

էջ 7.- Ես Ալէքսան Պօլսեցի Մայր Եկեղեցօ Հանգուծեալ տէր Եղիա քաճանաճի որթի, 1887 աշխար կկի. 1877 զօրծերով Պուլկարիեա, Ռումանիեա, Բուսաստան անձուցի. 1884 յունիս 19 Սք. յԵրուսաղէմ կկի, 2, երկու տարի Սք. Յարութիւն,

Ասվածածին, Չամ Դաղ զըրնապան, Սք. Յըրեշտակապետ լուսարար: Հապա եկի 1887, յունիս 5ին Սք. Յարութեան Երկրորդ զարգման, որ է իթիսճի, եւ Սք. Հօճանէս մատրան լուսարար:

Այս տետրակը քըրծի, իմ յաջորդներուս յիշատակեճի եւ զիմ նախօրդիս Վանեցի Սարգիս պա[պա]յին եւ նրվատիս վօղօրմիս խընդրեճի:

Այս տետրակը արգիւղ եւ յաջորդիս ջըտրվօղ անձը անիծեալ լինի:

էջ 90.- Սք. Յարութեան մըշտավար կանդեղները:

էջ 91, զատարկ:

էջ 92.- Ասկեճ իծնուն տարիէն պակաս Մըըըր վալիսի Մէճմէտ Ալի քաշաճին տըզան Իպրայիմ Բաշան եկած է, Մեծ Պարի մէջ լուսի օրը Սք. Յարութիւն կուքա զինուորներու քաղմութեամբ...:

էջ 99.- Լատինաճ Ծաղկագարդ:

էջ 110.- 1902, Ծաղկագարդի Կիրակի...:

էջ 180.- 1906, Ավաք շարաղ:

էջ 158-160, զատարկ:

3614

ՅԱՂԱԳՍ ՊԱՏԱՌԻՄԱՆ ԶԱՏԿԻՆ

Դաւիթ Վրդ. Բարաքեցի

Նիկոսիա, Կիպրոս

1872

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ.-

Ծաւալ 19.5x15, էջք 66, շանգամանք շատ լաւ: Թուղթ Հասարակ: Գրիչ՝ Տ.Հ.Թ. Սաւալանեանց, Գրութիւն սեւորակ մելանով, միասիւն, 21 տող, սեւ գիծերու միջեւ: Ենդագիր մաքուր: Կողք թղթեայ, Դատարկ թուղթ սկիզբը մէկ թերթ:

ՐՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.-

էջ 1.- Դաւթի Սրբազան Վարդապետի ասացեալ ի խնդրոյ Գրիգորի վեհազոյն Վարդապետի՝ որդւոյ Տուտայ, Յաղագս Հակառակասիրաց, ի պատճառս պատանման

Ձատկին, զոր ի խնդրոյն սակս պարզաբար գրեաց:

Ձվեհիղ կատարեւազունի յիմաստս, շնորհաւոր եւ ախորժելի բանից զՀրամանս Հարկեցուցիչ ընկալայ, բնաւորեալս յանբանութեան տուայտանս...

Յիշատակագրութիւն.- 1872

էջ 27, ստորոտը.- Օրինակեցաւ ձեռամբ Տ.Հ.Թ. Սաւալանեանց, ի Կիպրոս Կղզւոջ, ի Նիկոսիա մայրաքաղաքի, յԱռաջնորդարանին, յամի 1872, յամսեանն նոյնմբերի:

էջ 28-68, զատարկ:

3615

ՅՈՒՅԱԿ ԿԱՀՈՒՅ

Երուսաղէմ

1894-1901

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ.-

Ծաւալ 20x14.5x15, էջք 286, շանգամանք բաւարար. վնասուած թացութենէ, Թուղթ գծաւոր: Գրութիւն սեւորակ մելանով, միասիւն, 20 տող, կարմիր գիծերու միջեւ: Ենդագիր վարժ: Կազմ կիսալաթ խաւաքարտեայ:

ՐՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.-

էջ 1.- Յուցակ Եկեղեցական եւ Տնական Կառուց Ս. Ծննդեան Վանուց.- Ա.- Եկեղեցական Ջգեստք եւ Ջարդք:

- 4 Մաշտոց, մին արծաթապատ եւ մի-նէլի, 1894ի յանձման մէն պակաս:

էջ 8.- 6 շապիկ մետաքսեայ, սարկաւազի. Վանք զրկուած:

էջ 6.- Ի Ս. Յակովբ:

էջ 7.- 8 Աւետարան արարերէն:

էջ 7.- ԿաՀք Տեսչական սենեկի:

էջ 9.- Պղնձեղէն:

էջ 10.- Եօրեղէնք:

էջ 11.- Ըստ այսմ յանձնուեցաւ 1894 մայիսին, նորընտիր Տեսուչ Արթ. Եզնիկ վրդ. Պօլսեցւոյն:

էջ 12-18, զատարկ:

էջ 19.- Յուցակ կիկեցեցական եւ Տնական Կառուց Սուրբ Յարութեան.- Ա.- Եկեղեցական Ջգեստք եւ Ջարդք:

էջ 25-28, զատարկ:

էջ 29.- Յուցակ Կառուց եւ Ջգեստք-ղինաց Ս. Աստուծածանի:

էջ 88.- Յուցակ Եկեղեցական եւ Տնական Կառուց Ս. Փրկչայ:

էջ 86, զատարկ:

էջ 87.- Յուցակ Եկեղեցական Սպասուց
 եւ Կաւուց Ս. Հրեշտակապետի Վանուց
 էջ 49-50, դատարկ:

էջ 51, վերնագիր.- Յուցակ Եկեղե-
 ցական եւ Տնական Կաւուց Ս. Նշան Վանուց
 Պէյրութի:
 էջ 52-286, դատարկ:

3616

ԲԺՇԿԱՐԱՆ (ՓՈՔՐԻԿ)

(2. 1833)

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ.-

Մաւալ 16X11, էջք 85: Հանգամանք
 Համարեա բաւարար: Թուղթ Հասարակ: Գը-
 րութիւն սեւորակ մելանով, միասին, 19
 տող, սեւ գիծերու միջեւ: Եեղագիր վարժ:
 Կողք չունի:

ՐՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.-

էջ 1.- Թէրթիպ եսիւրճի:
 էջ 8.- Երեմիա եպիսկոպոսին յիշա-
 տակն է: Մէտաթի Համար Հապի Թէրթիպ:
 էջ 12.- Ի Թիւ Փրկչին 1888 եղեւ
 նոր նէվագիլ, որոյ անունն այս է. արապի

(չաւան), Ֆարսի (պարսամ), որ եւ այժմ
 Հասարակաց ասի՝ անթիթա: Որ Թէպէտ ա-
 նունը նէվագիլ է՝ բայց յոյժ սաստիկ եւ
 անօրինակ. ինչպէս ոմանք Հիւմմայի ձեւով
 մը կը բռնէ գլուխը մէջքը եւ բոլոր ու-
 ճուտը ցանցնելով, միանգամայն դող ծնկ-
 վընները օմուզները կըտըրտելով, եւ ոմանք
 սթմայի ձեւով, ոմանք մէճայի ձեւով, եւ-
 այլն:

էջ 19.- Տէօրտ խրաք սիրթէսի տէնի-
 լին իւաճըն Թէրթիպի պու:
 էջ 88.- Ականջի խօստուկի Համար:

3617

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՅԱՆՁՆԱՆՄԲԻ

Ղալաթա, Կ, Պուլիս

1878-1876

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ.-

Երկու տետրակներ գետեղուած թղթա-
 պանակի մը մէջ:

Ա. Տետրակ.- Մաւալ 87X25: էջք 56:
 Հանգամանք Համարեա բաւարար: Թուղթ Հա-
 սարակ: Գրութիւն մանիշակագոյն թանաքով,
 միասին, 85-46 տող: Եեղագիր:

Բ. Տետրակ.- Մաւալ 84X21: էջք 44:
 Հանգամանք բաւարար: Թուղթ Հասարակ:
 Գրութիւն մանիշակագոյն թանաքով, միա-
 սին, 21-82 տող: Եեղագիր:

ՐՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.-

Ա, Տետրակ.-

էջ 1, վերը.- Արձանագրութիւնք Ե-
 րաժշտական Ցանձնախմբին, 1878, ապրիլ
 22, ի Ղալաթա:

Ներքեւը սեւ մատիտով.-

Երկու տետրակներու մէջ քովանգա-
 րուած, ընդ ամէնը 28 թուղթ կամ 59 էջք,
 կը պարունակէ արձանագրութիւնները Մէ
 նիստերու եւ յաւելուածական երեք նիս-
 տերու, որոնք սկսած են 1878 ապրիլ 22ին

և վերջացած՝ 1876 օգոստոս 22ին:

Մեր խնդրանքին վրայ Պ.Ն. Տնտեսան, Հանգուցեալ մեծանուն երաժշտագէտ Ե. Տնտեսանին որդին, մեր տրամադրութեան տակ զբաւ այս երկու տետրակները, Ա. Աթոռոյս 22նօրաց Մատենադարանին մէջ պահուելու եւ ի Հարկին օգտագործուելու Համար ուսումնասիրութեանց առթիւ:

22 յունիս, 1886, Երուսաղէմ, Պատրիարքարան:

Պ.Ն. Թորգոմ Արքեպս:

էջ 8.- Երաժշտական Ցանձնախումբ:

Ուսումնական Խորհուրդը որոշեց որ եկեղեցական երաժիշտ դասատուաց թննութեանը Համար նոյն իսկ դաստուաց կողմանէ Ցանձնաժողով մը կազմուի եւ նոյն Ցանձնաժողովը քննէ դասատուաց արժանիքը. ուստի Ցանձնաժողով մը կազմուեցաւ 12 անձներէ ըաղկացեալ, որք են...

էջ 54.- ԽԸ նիստ. 76 ապրիլ 25:

Ք. Տետրակ.-

էջ 1.- Նիստ ԽԹ. 76 մայիս 2:

Ներկայք.- Եզիա Էֆէնտի Տնտեսան Ալէքսան » Գրիգորեան Ռէթէոս » Փափագեան:

էջ 5.- Ցուլիս 17, 1876. Նիստ ԾԶ:

էջ 6.- Օգոստոս 22:

էջ 7-44, դատարկ:

3618 Ա

ԲԱՌԱՐԱՆ ՀԱՅԵՐԷՆ ԱՐՄԱՏՈՅ

Սուքիաս Վրզ. Պարսեւոմ

Քաղկեդոն, Կ. Պոլիս

1872-1874

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ.-

 ոչ զործեական արդարութիւն,
 այլ շաղախեալ մեղաւք իլին:
 Տեսեալ զգանն աստուածային,
 զԱստուածաշունչըս մեծագին,
 զՎարժամութիւնս անանցելին,
 ետու զընդ զայն ի քարտին,
 Հոգոյ իմոյ եւ ուսուցչին,
 զի յիշատակ մեզ եղիցին,
 ի կենդանեաց ունկն Հնչին,
 ննջեցելոց տան զոգործին:
 Նախ Հոգւոյ իմոյ ծնողին,
 որ եհաւ յիմաստս սուրբ զրին,
 տէր Սրապիոն բարունին,
 Եզեսիոյ մեծ քաղաքին:
 Եւ մարմնաւոր իմոյ ծնողին,
 Հաւրբոյ իմոյ Ապահարին,
 եւ մարս Ելչիկ վերակոչին:
 Այլ եւ եզրաբոյ իմ ըստ կարգին,
 առաջ եզրաւորս Ապոստոլին,
 որ նա ետ զմեզ յուսումն բանին,
 ինքն ստացաւ վարբս մթին,
 խստակրասն ճզնաւորին:
 Հրամարեալ ի յաշխարհէս,
 քսանեչորս ամ խստագին
 քնակեցաւ յանապատին,
 ըստ անմարմնոցն, որ ի մարմին:
 Միւս եզրաւորս Մախաուտին,
 Մեհերիին եւ Արեւին,
 այլ եւ քվերցըս Հետ նոցին,
 երկու մանտրուտքն ընդ Մարմին,
 եւ Բահրիկին եւ Եուշմանին:

Եւ եղբարս զուստրը Մեհերին,
անուէ կոչի Ազպակիին,
միւս եղբարս Մախսուտին,
որդւոյ նորա Գրիգորին:
Եւ Հաւրեղբարց Կարապետին,
Մախսուտ անուէ եղբար նորին,
որոցց եւ զստեաց նոցին,
յիշատակի մասն եղիցին:
Որք կենդանիք են սատ փրկին,
ւ որք ննջեցեալք անգէն Հանգչին,
արքայութեան արժան լինին,
յաւուր մեծի գառաստանին:
Բարեճալ Աստուած անեղական,
քաղցր եւ զթան ողորմութեան,
Անարժանիս ճար փրկութեան,
այց արասցէ սուրբ զալստեան:
Ը Էնական յոյս Հայրական,
իմ արարիչ Աստուածըջ Բան,
Սըրբեա զՀոգիս ազտեղական,
քանզի եմ զին քո սուրբ արեան:
Ես մեղաւոր թշուառական,
առ քեզ զոչեմ յոյժ լալական,
Ղամբար փայլեայ Հիքոյս մըթան,
արայ արժան զիս քաւութեան:
Արայ զիս յաւուրըն քննութեան,
յորժամ Համար արեւս յանցման,
Ազաչանեալք Խաչին փայլման,
մաւր քո կուսի անապական,
Ը առեալս մեղաւք յոյժ զանազան,
զորժով թափուր ունայական,
Դասաւորայ յաշկողմեան,
Չնջեա զպարտուց զիւս անթվական:
Ապէնիազ յոյս յարութեան,
եկայք՝ ձայնին արայ արժան,
Գարտուց իմոց անյիշական,
յսել զձայնն երանական:
Երրորդութիւն Համարեղական,
մեղաւք մեղկեալս խորհրդական,
Տուր մարտութիւն ինձ շնորհական,
մարմնայ, մտաց եւ Հոգեկան:
Աստուածաշունչըս պատուական,
սկսեալ Ռշ եւ մի թվական,
Ստացայ ըզա ես անարժան,
աւարտեցաւ յեռ թ ամեան:
Աս յիշատակ ինձ ապազայն,
ի Սուրբ Ռազաբըն Տէրուեան,
Յանկացող եղէ սորայն,
ետու զրել յոյժ ըզձական:
Երուսաղէմ տեզ փափաքման,
որ ամենայն ազգ ցանկացան,
Անգէն կացցէ անջնջական,
ինձ յիշատակ անանցական:
Լողք տեսողք ընթերցական,

վան Աստուծոյ տան զողորմեան:
Որ յիշէ զմեզ ժամ սուրբ զենման,
պատարագին անմահութեան,
եկայք ձայնին լինի արժան,
զի աղաթիւք ձեր սրբազան,
պարտուց մեր զիրն Չնջական:
Այլ եւ քաջ քարտազարնին,
տէր Միմաս անՀաս զրէին,
տէր Միքայլլ եման նմին,
որ զայս Սուրբ Գիրքս զընցին,
երանգ երանգ զարդարցին,
ոսկէնկար զայս ծաղկեցին,
կենդանագիր պատկերք արին,
զանազանեալ զեղեցկացուցին:
Որք տեսանէք ընթերցողք ամին,
վերանիք զբան աստուածային,
ինչդիրք ատնէք Տեսոն Յիսուսին,
զի ողորմի Հոգոց սացին:

Դարեճալ կրկին անգամ ազայնմ զգասս
սրբազան վարդապետացք եւ աստուածաբան
մեկնողացք, զասս սանլով, եւ Հողս ի
Հողոյ, բազմավէր մեղօք լցեալս Բարսեղ
անուամբ եւթ վարդապետս զի յիշման զմեզ
առնէք արժանի: Նաեւ զվերոյ գրեալքս ի
սմա, ի ժամ սոսկալի եւ անմահ պատարա-
զին, առջի Սք. Գառինն Այ., եւ Հայցեն
մեղաց թողութիւն ինձ եւ ուսուցչին իմոյ
եւ ծնողաց իմոց: Այլ եւ զբողացն եւ
ծաղկողացն երփերփն զուեով, Բ քահանա-
յիցն Ամթեցոյ, տէր Միքայլլ աւագ երի-
ցուն Սք. Սարգսայ, որ յառաջն սկսաւ
Աստուածաշունչս եւ ԺԴ տետր գրեաց եւ
ծաղկեաց, եւ տէր Միմաս Վարդապետին Սք.
Կիրակոսայ, որ երեսուն տետր գրցոս նա
գրեաց, սկսեալ ի Մեացորդացն մինչ ի
վերջ Աստուածաշունչն Գրոցս եւ ծաղկեաց,
զանազան եւ Հրաշալի զուեներով, եւ քա-
ղամ աշխատութեամբ, Տէր Ած. իւրեանց
վարձահատոյց լիցի, եւ եղիցի սոցա մասն
յիշատակ ի Սք. Գիրքս յերուսաղէմ, ի Սք.
Յակոբ եւ ի Սք. Յարութիւն. եւ ընթեր-
ցողք յիշեցէք եւ Ած. ողորմի ասացէք
սոցա եւ ուսուցանողին իւրեանց, եւ ծնո-
ղաց մարմնաւոր, ամէն: Սկսեալ ՌշԱ եւ
աւարտեցաւ ՌՁԱ թուրն, զոր առեալ ես ան-
արժան մեղաւորս Բարսեղ, բերեալ ի Սք.
Ռազաբ Երուսաղէմ, եղի յիշատակ ինձ եւ
վերոյ գրելոցս ի սմա՝ ի Սք. Յարութիւն
եւ ի Սք. Յակոբ: Յորում ժամանակի Հեղի-
նակ եւ առաջնորդ Սք. Երուսաղէմայ աթո-
ռակալ Սրբոյն Յակոբայ, Տէր Գրիգոր Արք-
եպիսկոպոսն եւ Սրբաբան Հայրապետն Գան-
ձակեցին, յաշխարհէն արեւելեան, որ այս

երեսուն ամ է որ սպասաւորութիւն առնէ Սր. Երուսաղէմայ բազում աշխատութեամբ եւ նեղութեամբ, եւ երախտիք ունի Հայոց ազգին զայս Սր. Տնօրինական տեղիքս շէն պահելով, իբրեւ թաշ ախոյանս Հաւատոյ ընդդէմ այլազգ քրիստոնէից եւ Հարկապահանջութեան մահմանականաց, իբրեւ զկինզանի նահատակ. զեկեղեցիքն շինելով եւ նորոգելով, զԾնունդն, զՍր. Փրկիչն, զՍր. Հրեշտակապետաց Վանքն, եւ Սր. Յակոբ, զՍր. Յուհիուհի եկեղեցիքն, որ եւ յայս ամի- ՌՁԱ թուին, էստ Գ կամար ի Սր. Յարութեան - Վերստուան, եւ խառնեաց ի կողմն Հայոց, եւ կրկին ուրախացոյց զազգս Հայոց, եւ խարճն բնոնելով է թէ Հինն եւ թէ նորս. Տէր Ած. զինքն անասան եւ անփորձ պահեցէ, եւ ազնական լիցի սորայ, եւ զաշխատանքն սորա ընդ Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին եւ Սր. Մարտիրոսացն մասնակից արասցէ, եւ յետ ստտեաց ընդ Սր. Հայրապետանն՝ Վերին Երուսաղէմի արժանի արասցէ ամէն:

Եւ մի՛ որ յանդգնի զՍր. Աստուածաշունչս յԵրուսաղէմայ Հաննի ի Սր. Յակոբայ զողանալով, ծախելով, եւ զբանելով, եթէ յանդգնի զմասն Յուդայի, Կայննի եւ խաչահանողացն առցէ. այլ կացցէ անշինջ յիշատակ ի Սր. Երուսաղէմայ Հայոց եկեղեցիս մինչ ի զաւրեստն Ջի. Եւ լապահողքն, ողորմի ստողքն, ընթերցողք եւ շորով բռնողք արհնութեան արժան լիցին եւ մասն բարեաց առցն ի Աէ. Յէ. Այ. մերոյ, որ է արհնեալ յախտանս ամէն:

Դարձեալ կրկին անգամ եւ .երեքկին անգամ աղաչեմ զպահողքդ եւ զընթերցողք այս Սր. Աստուածաշունչ Գրոցս՝ Ած. ողորմի սասցէք ինձ անարժան Բարսեղ վարդապետիս, եւ որք ի վերայ մեր մարմնաւոր երախտիք ունին թէ Հոգեւոր եւ թէ մարմընաւոր, սպասաւորքս եւ զաշակերտեալ մանկունս, զԿարապետ եպիսկոպոսն, եւ զՅովանէս վարդապետն Մշեցի, եւ զՂազար վարդապետն Սր. Աղբերկցի, զՂուկաս վարդապետն: Որ եւ զայժմուս սպասաւորք զծովհանէս մալազն, եւ զԱռաքել Ո որ զյիշատակս գրեաց, եւ զԱնդրէաս սարկաւազն, որ է ինձ արեանատու: Եւ ձեզ յիշողքդ, եւ մեզ յիշելոցս եւ յուսացելոցս առհասարակ Տէր Ած. ողորմեսցի յիւր միւսանգամ գալտեանս, ամէն:

Գրեցաւ ՌՁԱ թուին, մարտի Ե, չորրորդ շաբաթ պահոց, ի Վերնատունն, Հանդէպ Սր. Գերեզմանին Ջրիստոսի, ամէն:

Քղ. 4ա.-

Եւ Բարսեղ նուստ անուամբ եւեթ վարդապետ, սեփական կայի Արծրունի, ի գեղջին Մարմաճու, վերաստուչ Վանացն Ղազարու յորչորջնալ Մշու Սր. Առաքելս. եւ առաջնորդ մայրաքաղաքին Համթայ, յամի Ռ երրորդի ՁԱ թուին եկի ի Սր. եւ ասուածակոխ Քաղաքս Երուսաղէմ, եւ բերեալ եղի զՍր. եւ աստուածային Աստուածաշունչ Գիրքս յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց եւ ուսուցչի իմոյ վերոյ գրելոցս ի սմա, ի Սր. Յակոբ եւ ի Սր. Յարութիւն, յորում ժամանակ մի էր արժուակալ եւ առաջնորդ Տէր Գրիգոր Արքեպիսկոպոս Սր. Երուսաղէմայ, որ այս Լ ամ է կայ ի սպասաւորութիւն Սր. Տեղաց, բազում աշխատանք եւ երախտիք արարեալ եւ արդիւնաւորեալ Աթոռոյս մերոյ, շինելով եւ նորոգելով զՍր. Յակոբ, զՀրեշտակապետն, զՍուրբ Փրկիչն, եւ զՍր. Ծնունդն, եւ յայս ամի էստ Գ կամար եւ խառնեաց ի Սր. Վերնատունն ի Սուրբ Յարութիւնն: Տէր Ած. իւրն վարձահատոյց լիցի եւ զաշխատանք սորա ընդ Սրբոց Մարտիրոսաց Համթայն եւ վերին Երուսաղէմի արժանացուց ամէն:- Տես փոքր Հատուած մը, Հայ. Ձեռ. Հիշատակարաններ, ԺԷ դար, Բ. Հատոր, թիւ 72Ե:

Ձոր Հայցեմք ի տեսողացո եւ յընթերցողացդ, եւ Հողս ի Հողոյ, յիշել զանթոժան մեղաւորս առաջի զճնմանն անմահ Գառինն Այ., յաղօթս սուրբս եւ ի խնդիրս պատկանաւորս, միով Ած. ողորմայի, եւ զուր յիշեալ լիշիք ի Աէ. Այ. ամէն:

- Միեւեոյս յիշատակարանը կրկնուած է թղ. 24բ 2, 78բ 1, 263բ 2, 406Բ 1, 441ա 2:

Քղ. 80Գա.- Արհնութիւն, զոհութիւն, բարեբանութիւն վերառարեցի միասնական ամենասուրբ Երրորդութեան, Հար եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, որ ետ կարողութիւն եւ զարութիւն փանաթի եւ մեղաւորս, սուտ եւ փուտ, զառաձեղ մեղաւք, նուստ ՄիՈՍԱ զբէի, Հասանի ի յաւարտ գրի: Որպէս զիւրին է նախ ի նաւահանգիստն Հասանի, նոյնպէս զբէին ի յետին զիծն: Ջի թուին ՌԿԱ զսկիւնքն ի յեսայի արարի եւ աւարտելով զնոր Կտակարանքն, զարձեալ յԱռաջին Մնացորդացն զբերով աստ աւարտեցաւ թուին ՌՁԵ, մարտի Ը, աուր ԴՉբի. Նաեւ զյիշման արժանին զստացաւոյ այսմ տառին զտէր Բարսեղ թաշ բարունին, զտեսուչ Համիթ քաղաքին, զերկրորդ Յոր Համբերողն, ի զբնաց ծու-

լուծենէ, յիշել եւ Ած. ողորմի ասել նախնեաքն իւրովք, ամէն Ռ ամէն:

- Ետ զրթբրու վերջը կրկնուած է Հետեւեալը. * Ջյիշման արժանին, զՔարսեղ վարդապետն եւ զԱրթեպիսկոպոսն Համթայ, Յիշեցէք ի Քս. Յս. ով ընթերցողք եւ քաջ փաղերայք, որ եղ յիշատակ զԱստուածաշունչ Գիրքս ի Սք. Յակոբ եւ ի Սք. Յա-

րութիւն, Թուին ՌՁԱ: Ած. ողորմի Հոգւոյ իւրոյ, ամէն:

Նկատ.— Կ'արժէ դիտել տալ որ սոյն Աստուածաշունչին առաջին մասը, Թղ. 8-160, գրած եւ ծաղկած է Միթայէլ Երէց, իսկ մնացեալը, Թղ. 161-589, Մինաս Վարդապետ: Աշխատանքը տեսած է Յ տարի, 1622-1622:

2560-5

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԶ.— 28

Հիգան Զաղաք եւ Աւերդանց Գիւղ

ՌՂԳ=1624

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ.—

Ծաւալ 27X18X8: Թերթք 678: Հանգամանք լաւ. խնամքով կազմուած: Թուղթ նուրբ, ողորկեալ, ղեղնորակ: Գրիչ, Ծաղկող եւ Կապող՝ Կիրակոս երէց, որդի Մովսէսի: Գրութիւն՝ խորագիրները, սկզբնատողերը եւ յաճախ զլիսագիրները կարմիր, մնացեալը սեւ մեկանով, երկսիւն, 46, 47 տող, կարմիր գիծերու միջեւ: Բոլորգիր մանր եւ կանոնաւոր, Համոտագրութիւնք սովորականէն քիչ մը աւելի: Կարմիր կապոյտ զարդագիր եւ լուսանցազարդ կարգ մը զլուխներու սկիզբը, **գիրքերը** Հանդերձ զլիսագրողի: Խորանագարդ իւր սարօք. Թղ. 6ա, 622ա, 640ա, 662ա, 671ա: Լուսանցանկարք քսան Հատ: Նկարք.

- 1.— Մովսէս, Յեսու, Կարապետ Վրդ. Կիրակոս երէց. Թղ. 4ք
- 2.— Տապանակը Անպատի մէջ (մազ.), 188ք
- 3.— Անեա, մար Սամուէլի, 189ա 2
- 4.— Դաւիթ մարգարէ, ոտքի վրայ, 266ք 2
- 5.— Սողոմոն, Նոյնպէս, 299ք 1
- 6.— Սղոցումն Եսայիայ, 665ք 2
- 7.— Մատթէոս Անտարանիչ, 521ք
- 8.— Մարկոս՝ Պետրոսի Հետ, 589ք
- 9.— Դուկաս Անտարանիչ, 561ք
- 10.— Յովհաննէս եւ Պրոֆտորն, 570ք

Կաշեկազմ տախտակեայ թաւչապատ. առաջին երեսին ոսկեջրեալ արծաթէ շրջանակ մէջտեղը խաչ՝ վեց Հասարակ ակերով՝ որոնք այժմ կը պակսին. խաչի պատ-

ուանդանին վրայ երկաթագիր՝ Գրիգոր Վարդապետ. երկրորդ երեսին պարզ խաչ, չորս անկիւնները մէկ մէկ քերովքէ: Պաշտանակ մագաղաթեայ սկիզբը եւ վերջը մէկ մէկ թերթ, մասն երկաթագիր աւետարանի: Պաշտանակ թղթեայ սկիզբը եւ վերջը երկուսկան թերթ, զատարկ քացի առաջին էջէն, որուն ստորտը կը կարդացուի. " Աստուածաշունչս երեք Հարիւր Հ եւ Թ քիւր գիր է, եւ 2 աւելի: Ամէն քիւր ԺՌ է": Կնիք սեւադրոշմ փակագիր. " Զի. Յի. Մո. Կարապետ Վարդապետ", Թղ. 6ա, 622ա, 672ք. այլ կնիք սեւադրոշմ. " Կարապետ Վարդապետ, Մո. Այ", Թղ. 6ա, 622ք: Ստացող՝ Կարապետ Վրդ. Մոկացի:

ՐՈՎԱՆՆԿԱՎՈՒԹԻՒՆ.—

- Քղ. 1-2ա, զատարկ:
- Քղ. 2ք 1.— Նախադրութիւն Ծմողոցմ:
- Քղ. 6ա.— Ի սկզբանէ արար Ած. գերկնի եւ զերկիր...:
- Քղ. 29ա 1.— Նախադրութիւն Ելիցմ:
- Քղ. 48ք-49ք, կան Հատուածներ՝ Որգիկեան նշաններով:
- Քղ. 62ա 1.— Նախադրութիւն Ղեւտակամիմ:
- Քղ. 68ա 1.— Նախադրութիւն Թուոց:
- Քղ. 89ք 2.— Նախադրութիւն Երկրորդ Աւրիմաց:
- Քղ. 108ք 1.— Նախադրութիւն Գրոց Յեսուա՝ որդոյ Նաւեա:
- Քղ. 109ա 2.— Գիրք Յեսուայ Որդոյ Նաւեա:
- Քղ. 121ք 2.— Նախադրութիւն Դատաւո-

յաց:

Քզ. 184բ 1.- Նախադրութիւմ Հոութայ:

Քզ. 186ա 2.- Յառաջաբան մախ կարգ-
եալ վան յերկուս գիրս առ ի Հերբայից ոց
զՊատմութիւն բաժանելոյ...:

Քզ. 188ա 1.- Առաջիմ Գլուխ Քազաւո-
րութեամբ զոր ասացեալ Յեսու Մարգարէ
որդի Ամամիայ:

Քզ. 148ա.- Մէկ Հատուածի կից կան
ութ Որոգիեան նշաններ:

Քզ. 148բ.- Երկու Հատուածներու կից
կան Որոգիեան աստղանիշեր:

Քզ. 156բ 1.- Գլուխք Երկրորդ Քազա-
ւորութեամբ:


Քզ. 162բ.- Մէկ Հատուածի կից կան
չորս Որոգիեան նշաններ:

Քզ. 170բ 2.- Քազաւորութեամբ Երրորդ:

Քզ. 172բ 1-2.- Բաւական երկար
Հատուածի մը կից կան Որոգիեան աստղա-
նիշեր.- Եւ Տէր հոս Սողոմոնի Հանճար եւ
իմաստութիւն ... ապա շինեաց զթաղաքն
զայնոսիկ:

Քզ. 186բ, ստորին լուսանցքին, զբը-
չէն.- Բազաւորութեանց Երրորդ աւարտե-
ցաւ, եւ մեղաւորս մեզօք լցաւ:

Քզ. 187ա 1.- Գլուխք Չորրորդ Քազա-
ւորութեամբ:



15.- Մովսէս եւ Յեսու
թիւ Ջ580, թղ. 4բ

Քղ. 202ա 2.- Յառաջաբան Առաջիմ եւ երկրորդ Մնացորդաց.- Երեւի Գիրք Մնացորդացս յայլ եւ յայլ պատմողաց շարադրեալ...:

Քղ. 216ա 1.- Իններորդ յամսանն Քերորդի Աբիեզեր, որ յԱնաթովթայն, որ ի Բենիամին երկրի, եւ մասն ի բաժնի իրում ԻԴ Հազարք: Մետասաներորդի ամսանն մետասաներորդի Բանահաս ի Փարթանա, յորդոցն Եփրեմի... - Հմմտ. Գլ. ԻԷ. կը պակսի 18րդ Համարը:

Քղ. 216բ 1.- Գլուխք երկրորդ Մնացորդաց:

Քղ. 288ա 2.- Տէր ամենակալ, Ած. Աբրահամու...:

Քղ. 288բ 1.- Նախադրութիւն եզրի:

Քղ. 284ա 1.- Գիրք եզրի Առաջիմ.- Եւ արար Յովսիա թագաւոր զգատիկն Տեառն...:

Քղ. 242ա 1.- Եզր երկրորդ.- Յառաջնում ամի Կիրոսի արքային Պարսից...:

Քղ. 246բ 2.- Նախադրութիւն Նէեմի:

Քղ. 247ա 2.- Եւ եղև յամսանն ցալ-սն...:

Քղ. 258բ 1.- Նախադրութիւն Յորայ:

Քղ. 264ա 2.- Գիրք Յորայ.- Այր ոմն էր յԱւիդ աշխարհի, որում անուն էր Յոր...:

Որոգինեան աստղանիշեր կը գտնուին Քղ. 268բ 2, եւ 264բ 2:

Քղ. 266ա 1.- Երանեալ է այր...:

Քղ. 269ա 1.- Աւրիմութիւն Մովսիսի եւ որդւոցն Իսրայելի:

Քղ. 280բ 2.- Աղօթք Ամմոնի մօրմ Սամուէլի:

Քղ. 288բ 2.- Աղօթք եզեկիեայ Քազաւորի:

Քղ. 296բ 2.- Յառաջաբան Առակացմ Սողոմոնի:

Քղ. 299բ 2.- Ծանաչել զիմաստութիւն եւ զխրատ...:

Քղ. 810բ 2.- Առակ եւ Բամբ Ժողովօղիմ որդւոյ Դաւթի Սողոմոնի արքայի Իսրայելի յերուսաղեմի, եկլեսիաստէս ասաց .- Ունայնութիւն ունայնութեանց ասաց Ժողովողն...:

Քղ. 814ա 2.- Երգ Երգոց, որ է Աւրի-



18.- Աղոցում Եսայեայ թիւ 2560, թղ. 355բ 2

Ուրթիւմ Աւրիճութեամց, ասացեալ Սողոմոն-
Ոի արքայի Իսրայելի:

Քղ. 816բ 1.- * Իմաստութիւն Սողոմոնի*.- Սիրեցէ՛ք զարդարութիւն ոչք զատիք զերկիր...:

Քղ. 828ա Ջ.- Գիրք Սիրաբայ, որ կոչեցաւ Յեսու.- Ամենայն իմաստութիւն ի Տեանէ՛ է...:

Քղ. 826ա Ջ, սիւնակին վարի կէսը մնացած է զատարկ, կը կարդացուի Հետեւեալ ծանօթութիւնը՝ շեղագիր. * ԺԴ. 28 - ԺԵ. 14 պակասի*:

Քղ. 829բ Ջ-880ա 1, պարպ միջոց կայ 14 տող, բայց բնագրական թերոյթ չ'երևիւր ըստ ՁօՀբպպեան Հրատարակութեան:

Քղ. 881բ 1.- Յաղագս արարչական հրամամիմ Տեառմ, եւ պէսպէս խրատու:

Քղ. 882ա 1.- Յառաջաբան Մարգարէիմ Յեսայեայ:

Քղ. 865բ Ջ.- Մահ եսայիայ:

Քղ. 866ա 1.- Նախադրութիւմ Սբ. Մարգարէի Երեմիայ, ասացեալ Միսիթարա Վարդապետի.- Մարգարէացաւ Երեմիայ յաուրս Թագաւորութեան Յովսիայ բարեպաշտ Թագաւորին Յուդայ...:

Քղ. 888ա Ջ.- Երեմիայ Մարգարէի Ողբք:

Քղ. 885բ Ջ.- Եւ այս են բանք Քըղ-Թոյն զոր զրեաց Բարուբ, որդի Ներեան...:

Քղ. 888ա Ջ.- Գլուխք Գրոց Եզեկիելի Մարգարէի:

Քղ. 418ա 1.- Գլուխք Դամիելի Մարգարէիմ:

Քղ. 428ա Ջ.- Նախադրութիւմ Երկրտասան Մարգարէիցմ:

Քղ. 484ա 1.- Գլուխք Յովնամու Մարգարէի:

Քղ. 444բ Ջ.- Նախադրութիւմ Գրոց Եսթերայ:

Քղ. 460բ 1.- Նախադրութիւմ Յուդիթայ:

Քղ. 468ա Ջ.- Տօբիթիքայ է Գիրք այս:

Քղ. 468ա Ջ.- Նախադրութիւմ Առաջիմ Մակաբայեցոց:

Քղ. 482ա 1.- Նախադրութիւմ Երկրորդ Մակաբայեցոցմ:

Քղ. 496ա Ջ.- Նախադրութիւմ Երրորդ Գլխոյմ Մակաբէ:

ԿՏԱԿԶ ԵԱՀԱՊԵՏԱՅ.- 12

Քղ. 602բ Ջ.- Կտակ եւ խաւք Ռուբե-

Ոի, ի ՄՈՎՍՅՈՂԿԱԳ Գրոց.- Հրաման Կտակի Ռուբեհի որպէս պատուիրեաց որդւոց իւրոց ...:

Քղ. 617ա 1.- Կտակ Բեճիամեմի ԹԹՄ էր օրդի:

Քղ. 618ա 1.- Եստիքի՛ կարպիմօսի սիրելի եղբար ի Տէր օղջոյմ:

Քղ. 618բ-620ա.- Կանոնի տախտակներ, կարմրազին աղիւսակներ, առանց զարդի:

Քղ. 620բ 1.- Նախադրութիւմ Մատթէոսի Աւետարանիմ:

Քղ. 622ա.- Գիրք Ժընեղեան Յի. Ջի. ...:

Քղ. 688բ 1.- Նախադրութիւմ Մարկոսի Աւետարանիմ:

Քղ. 640ա.- Սկիզբն Աւետարանի Յի. Ջի. ...:

Քղ. 660բ 1.- Աւետարան ըստ Մարկոսի - Յարուցեալ Յս. առաւաւտու...:

- Նախադրութիւմ Ղուկայ Աւետարանի:

Քղ. 662ա.- Ջանգի բազումք յաւժարեցին...:

Քղ. 670ա 1.- Նախադրութիւմ Յովիամմու Աւետարանի:

Քղ. 671ա.- Ի սկզբանէ էր Բանն...:

Քղ. 684ա Ջ.- Իրք կնոջն շնացելոյ.- Աւետարան ըստ Յովիամմու.- Գնացին իւրաքանչիւր ոք ի տեղի իւր...:

Ջայս յիշատակ բարի ընկալաւ եկեղեցի յԱստուրց Աւետարանէ՛ ըստի Պապիասայ ումմմմմ ՅովՀաննու աշակերտի, որ եւ յետոյ Հերձուած խաւսեցաւ եւ խոտեցաւ...: Եստեբի է սասցեալս:


Քղ. 684բ Ջ.- Յառաջաբան Պաղոսի Առաքելոյ՝ Մախակարգեալ ի գլուխ գրոցս:

Քղ. 687բ Ջ.- Պաղոս ծառայ Ջի. Յի. ...:

Քղ. 628բ 1.- Թուղթ Կորնթացոցմ առ սուրբ Առաքեալմ Պաղոս:

Քղ- 629բ Ջ.- Ամուռք Սբ. Առաքելոցմ որ սփիւս ըմդ ժամանակս կարգեալ եւ յառութիւմ Ջի., թէ ըստի եւ կամ յորմէ ցեղէ [է]իմ.- Պետրոս եւ Անդրէաս ի ցեղէ Նեփթաղեմի...: Ղեբէոս որ եւ Բագէոս ի ցեղէ Եմաւոնի...:

- Վասմ սուրբ Առաքելոցմ որ քարգեցիմ զՔս., թէ օրով մահուամբ կատարեցամ եւ ուր կամ.- Պետրոս ի Հռոմ խաչեցաւ ի Ներովնէ...: Ղեբէոս ի Հայս ի Սանատրկէ արքայէ...: Յովաննէս Մկրտիչ ի Սեւաստիայ սրով ի Հերովդիայ...: Ղուկաս ի Բերբես իւրով մահուամբ վախճանեցաւ:



17.— Պետրոս եւ Մարկոս
թիւ 2580, թղ. 539ր

Քղ. 680ա 1.— Յառաջաբան Գրոցս Գործոց Առաքելոցմ:

Քղ. 682բ 1, ստորին լուսանցքին.— Եղբայր՝ ստուգիւ քննեալ, Քաղէոսն՝ որ ի Մատթէոս եւ ի Մարկոս՝ Յուդայ Յակովբեանն է յԴուկաս:

Քղ. 682բ 2.— Ընթացքն Պաղոսի Առաքելոյ.— Ի Դամասկոսէ սկսեալ, եւ զնաց յերուսաղէմ: Անտի ի Տարսոն: Անտի յԱնտիոք, եւ զարձեալ Երկրորդ անգամ յԵրուսաղէմ...:

Քղ. 688ա 2.— Գործք Առաքելոց Դուկայ Աւետարանչի:

Քղ. 650ա 2.— Յառաջաբան եւ թամեցումն Քղթոցն Կաթողիկեայց:

Քղ. 660բ 1.— Աղերս Եւթաղի:

Քղ. 660բ 2.— Գլուխք Յայտնութեամս Յովհաննու:

Քղ. 661բ 2.— Յայտնութիւն Սրբոյն Յովհաննու Աստուածաբանի:

Քղ. 669բ 2.— Հանգիստ Սրբոյն Յովհաննու Աւետարանչի:

Մամր յիշատակագրութիւնք Գրչի՝ տասնեակ մը. կ'առնենք ընտրովի.

1.— **Քղ. 29ա 1,** վերը.— Բարեխաւսութեամբ աստուածախաւս մարգարէին Մովսէսի ողորմի Տէր Ած. ստացողի գրոցս՝ Մովսէի Կարապետ Վարդապետին, եւ իւր ծրնողացն՝ Մեսրոպին եւ Ալամին, եւ եղբար-

ցն՝ խաչատրին և Հայրապետին, և Հօրեղ-
բարն Արապիտին և որդւոցն նորին, և
այլ ամ. ազգականաց. մանաւանդ Հոգեւոր
Հարն Ապարանից Սիմէոն Վարդապետին, և
ինն մեղապարտ Կիրակոսի, անարժան զժո-
ղիս, և ծնողաց իմոց, և ամ. արեան
մերձաւորաց իմոց. ամէն:

Ձ.- Քզ. 68 ա, վարբ.- Բարեխաւ-
սու թեմամբ մարզարէին Վովսեսի ողորմեա
Տէր Ած. ստացողի գրոցս՝ Կարապետ Վար-
դապետին, և ծնողաց, և եղբարցն, և
ամ. ազգականաց նորին, և ինն մեղապարտ
զժողիս և ծնողաց իմոց և ամ. արեան
մերձաւորացն. և վարդապետին իմոյ Սար-
գիս Քաւանայի:

Թ.- Քզ. 856 ա, մէջտեղը.- Բարե-
խաւսութեամբ ատուածախոս մարզարէին Շա-
յեա ողորմեա Տէր Ած. ստացողի գրոցս Կա-
րապետ Վարդապետին, և ծնողաց նորին՝
Մեարպիս և Ալամին, և եղբարցն Նաչատ-
րին և Հայրապետին, և ամ. արեան մեր-
ձաւորաց:

4.- Քզ. 651 բ, Եկարին ներքեւ, նու-
րակերպ գրով, երկու տող.

Որք Հանդիպիք սամ՝ տնւելան,
կամ վայելէք յայս բուրաստան,
զծաղկոզս առնէք յիշման արժան,
և զուք յիշիք առ Տէրըն Բան,
ձեզ լսել տայ զերեսն ձայն:

Ե.- Քզ. 689 բ, Եկարին ներքեւ.- ըՋ-
մեղաւոր Կիրակոս մի մոռնայք՝ ծաղկող
սորայ, քանզի յոյժ յանցող եմ Այ. պատ-
ուիրանացն. վայ է ինն Ռ քերան:

Մեծ յիշատակարամ Գրչի.- 1624

Քզ. 671 ա 1.- Փառք ամենասուրբ Ե-
րրորդութեանն, անխմանալի էութեանն. ան-
բա զարութեանն, և ամենունակ տերութե-
անն. երից անձնաւորութեանն և եզակի
բնութեանն, չօր և Որդւոյ և Սբ. Հոգե-
ւոյն, այժմ և անկէտ յաւիտենին ամէն:

Արդ զրեցաւ և յանկ ելեալ աւարտե-
ցաւ մատենք աստուածաշունչ զրեցան, Հին
և նոր կտակարանքս բովանդակ, ի թվարե-
րութեան Հայկազեան տումարի քսան և մի
յոթնիկիս, այլ ևս յանկեալ քսան և
երեք թիւ յարաբարդ սմին, ի դառնացեալ
ժամանակիս, ի թագաւորութեանն այլասեռից
մահմետականաց, որք են աղանդոյն Արիոսի
և Կերինթոսի, որք կալեալ ունին զմեծ
մասն տիեզերաց: Ջի զկողմն արեւմտեան
զկլիմն և զզերմասն ասիական տիրեալ է
Հանդերձ Լիբիայիւ, զնահանգն եգիպտական

բովանդակ, ի յԹովպիտոյ ի Հարաւոյ կուսէ
մինչեւ յաշխարհն ըրուուաց ի կողմն Հիւ-
սիսոյ, յորում միջի է Համարէն Թուլ-
ղարքն. նա և ի կողմանէ արեւմտեանէ
սահմանքն մինչեւ յերկիրն լատինացոց,
յորոց միջի է կրծիմ և անշատիչ և խո-
րոց ծայր ծովուն ովկիանու, և ի կողմա-
նէ արեւելեան ունին բազում քաղաքք. ըը-
բովանդակ Պարսկաստան, մինչեւ ի սահմանս
Հնդկաց և Ծնեաց, ի ծովէն Կազբից, որ
ուել մերձ ինքեան զմեծ լեռուն Կովկաս,
մինչեւ ի ծովն պարսից Հարասոյ, յորս
մտանն վտակքն աղենա՝ Տիգրիս և Եփրատ:

Եւ Հաստատեալ են ազգին իւրեանց
կրկին աթոռ թագաւորութեան, զմինն յա-
րեւմուտս և զմիւսն յարեւելս. զի արեւ-
մտեան աթոռն է Կոստանդնուպուլիս, զորոյ
թագաւորն խոնդքար կոչեն, և արեւելեան
զահուն ասի Եաւջ և այժմ կոչի Ապպահան,
որ տիրոջն առասի շահ: Քանզի թէպէտ են
երկրեանն կրակիւք և աւրինաւքն Մահ-
մետի, այլ զոյ բարուր և պատճառ ի մէջ
նոցա խոսովութեան, զի ոմանք զՈւմար և
զԱւաման ընդունեն, և ոմանք Հայոճոյն,
սակս սորին ունին յոյժ թշնամութիւն:

Թէպէտ զբազում ազգս և զլեզուս
նուանեալ և Հնազանդեցուցեալ են ի ներ-
քոյ վազակաւոր սրին իւրեանց, զԳոյնս,
զԱսորիս, զՀայկազնիս, զՂպտիս, զԻսրայէ-
լացիս, և այլ բազումք. և զլուս և
տէր են և ունին զգաւազան իշխանութեանն
ազգն և լեզուն թուրքաց, ի մէջ ամենայն
մահմետականացն, և են ազգ զառն և ժը-
պիրճ և պղծագործ, զոր տիրեալ են ի վե-
րայ մեր վասն մեղաց մերոց. որպէս եղև
երբեմն Հինն Իսրայէլի սակս յանցանաց
նոցա, զոր քացայտէ Աստուած առ Ամթա-
կում, թէ զարթոյցանեմ ի վերայ ձեզ ըը-
Քաղզէացիս՝ զազգն զառն և ժպիրճ: Այլ
և մեղքն մեր ոչ միայն զաւրացոյց զնոս
ի վերս մեր, այլ և երարձ յամենայն
կողմանց զարիս, և յայտնեաց զբազում
պատուՀասա:

Որ ի Հազար և յիսուն թվիս մեր
շարժեցաւ վերոյիշեցեալ զահոյակալն շահ,
արեւելեան բռնաւորն, անուամբ Հաւաս կո-
չեցեալն, որ առաւել էլ յարեօք քան զամե-
նայն իշխանս, բաղդատեալ յեղջիրն փոք-
րիկ, որ էր ի զլուս չորրորդ զազանին,
որ հետս մարգարէն Դանիէլ: Ջի է դիւթա-
տիպ և կիլէսաւճա՛յ, որպէս սաէ մարգա-
րէն Ջարարիս, և զաւրէն մոզաց ընթանայ
յամենայն ժամ և խաբէ զմարդիկ. զի ընդ

հլանելն նորա ամենայն թագաւորք տկարացան եւ եղեն նմա կոխան. յաղթեաց Վրաց եւ էառ աւար զամենայն աշխարհն նոցա, նուաճեաց զտէրն Լաճոտս եւ տիրեաց Ղանդայարա, տկարացան առաջի նորա զօրքն խնդաբարին, զի չորս անգամ զօրք առաքեաց ի վերա նորա, եւ նա կոտորեաց եւ Հալաճական արար զնոսա, եւ քազում ազգ զերի արար, եւս առաւել զազգս Հայոց: Քանզի ըստերիւրեցեաք Հնգիւք զգայութեամբ, վասն այսորիկ պատեալ ունի զմեզ Հինգ մեծագոյն փորձանք:

Նախ սուրն, զի անուանեալ շահ Հաքասն, զոր եւ անքաւ քազմաւք ասպատակեալ զաշխարհս Հայոց, զՎրաց, եւ զԲարեւազացաց, եւ զամենայն արեւելեայս, որ յանկարծ եւ յեղակարծ ժամու Հասանէր զարէն Հեղեղաց ուղիւից խոռվութեանց, զարեաց աստակագին զոչմամբ եւ աճազնատեսիլ սուսերամերկ եւ կորովալիճ նետողացն ճայթմամբ, զոմանս ի գերութիւն վարէ, արք եւ կանայք, եւ զկէսս առաթուր զիւթաւալք սրախողխող զալարեալք, առՀասարակ արք եւ կանայք, քահանայք եւ աշխարհականք, զէջ անկեալ զիակամքք անթաղ ընկեցեալք, եւ զայլս ի քազում տանջանս մաշեալ, եւ ոմամք Հրով կիսայրեայ տոչորեալ, եւ կէսք խստալմրերք չարչարեալք եւ այլք երկիւրիս պատուցեալք:

Երկրորդն է սով աստիկ, որպէս Երեմաս սաէ, թէ ձնոք կանանց ողորմածաց եփեցին զամանկունս եւ կերան, որ եւ զամենայն պիղծ կենդանիս ուտեն, զկատու, զկրիայ եւ զսատակեալ ձիս եւ ջորիս, զգէջ եւ զայլ զարշնչիս, այլ եւ քազումք զգերեզմանս քակեն եւ զնեխեալ մեծեալս Հանեն եւ ուտեն. եւ ոչ միայն զմեծեալս այլ եւ ի քազում տեղիս սովեալ մարդիկք զարան են մտեալ զկենդանիս որսան եփեն եւ ուտեն:

Երրորդ պատուՀաս է զազանաց յարձակմունքն, որ մարդակեր գայքք սովորեալք ի կեր մարմնոց մարդկան, աներկիւր եւ Համարձակ զան ի մէջ մարդկան, թողուն զանաւտուսն, եւ զմարդիկք պատուեն եւ ուտեն:

Չորրորդ փորձանքն էր տարածում մահն, որ եղեւ նախ քան զմահտարածման նշան յերկինս, զի երեւեցան երկու իր գոյացեալ զուրորջեաց երկրէ ի յօգս, մինն ունէր զձեւ թրի, ելանէր յարեւելս եւ

զայր ի վերայ կողմանն Հարաւոյ, իսկ միւսն էր ասող մեծ, եւ ունէր զէսս եւ քաշս, որ երեւեցաւ ի մէջ երկնից, ըզգլուխն յարեւելս ունեւոյ եւ զազին ի մուտս արեւու, զոր տեւեալ մնացին զչափ երկց ամսոց եւ այլ ասելի: Եւ զսինի երեւման սոցա եղեւ սաստիկ մահտարածում, սկսեալ ի յաշխարհն լատինացաց մինչեւ յերկիրն Պարսից, քազում զեղ եւ աւանս անմարդ արար, եւ ի քազար քազում զըրուկք փակեցան, զի շատ Հայք անորդի արար անմարդ արար, եւ քազում մայր անգաւակ, զի ոչ մնաց աչք առանց արտասուաց ի յայս փորձանացս, եւ սիրտ թարց տխրութեանց:

Հինկերորդ փորձանքն է քան զամենայն առաւել, որ ոչ երեւի Համբաւ խաղաղութեան, եւ կամ զուլ եւ զազար խոռվութեանց երկրի, որ այս քսան եւ երեք ամ է որ կու ծփա երկիրս խոռվութեամբ իբրեւ ըծով, եւ ոչ Հանդարտի, վասն մեղաց մեքոց, ըստ մարգարէին՝ թէ անաւրէնքն իբրեւ զծով ծփացին, եւ Հանգիստ մի զըտցեն:

Ջի թվականս մեր էր Հազար եւ յիսուսն, որ երեւեցաւ վերոյ սասցեալ շահ Հաքասն, եւ յայս տարիս կու լինի Հազար եւ եւթասուսն եւ երեք, եւ նա ոչ դադարեցաւ երեքք ի Հարկանելոյ զերկիրս. զեռ եւս պնդեալ կա քազում զարօք ի վերա Բարեւազացաց, եւ էառ զԲարեւոյն եւ այլ քազում աւանս, եւ զեռ եւս կայ ի վերայ այնմ կողմանցն, եւ ասպակնէ զնոսա: Ջի սա քակեաց եւ եճան զքարն, որ կայր ի մէջ Էջմիածնի, որ եղեալ կայր ի տեղիս յորում եճար Տէրն ուսումք ոսկեղէն, յորմէ զարՀուրեալ զողացան դասք սանդարամետիցն: Եւ կաւաւ զՄեծիսէթ յորջորջեալ կաթողիկոսն, Հաքասն այն, եւ Հատանէր զմիս քազկացն, եւ տայր ուտել նմա: Այս ամենայն եկն ի վերայ մեր վասն մեղաց մերոց. զի սիրտ բռնաւորաց ի ձեռին Աստուծոյն:

Այլ եւ միւս բռնաւորն, որ ունէր զաթոռն Կոստանդնուպօլսի, խոնդաբարն անուանեալ, որ զիսկական անուն նորա Ասման յորջորջեն, Հարեալ եղեւ ի զարաց իւրոց եւ սատակեցաւ. եւ կան կողմն նորա քնկեալ եւ տկարացեալ իբրեւ զեղէզն ջախջախեալ, եւ յամենայն սահմանս նորա ոչ գոյ խաղաղութիւն. զի տան քաղաք ընդ քա-

ղաթ պատերազմ, և այդ ընդ ընկերի, որպես սատր Եսայիաս մարզարէ. քան[զի] ոչ գոյ յաղթող արքայ նոցա՝ Փառք Աստուծոյ որ զայս ամենայն փորձանքս և պատուհասս տեսաք աչօք մերովք, զի ոչ ևս կամք յամասնակ անգեղջի մեղս ամենեքեան: Ապա Աստուած միթէ մեզ զշջումն տացէ, և ի փորձանացն վաղվադակի զելս արասցէ, ամէն:

Ի յայսմ քազմարդով ժամանակս, ևս մեղաւք լցեալ Մովսէսի Կարապետ պիտակ եւեթ անուամբ վարդապետս, եղէ ցանկացող Աստուածաշունչ գրոցս, ևս ետու գրել զաս յիշատակ Հոգւոյ իմոյ, և ևաթի փրկութեան ամենայն ողորմութիւն տըւողացն ի ձեռս մեր, զոր զձգեալմ կերպիւս, կողկողաքի պաղտանաւք, Հայցեմ ի յընթերցողացդ և ի տեսողացդ և ի զաղափարողացդ, բոլորով սրտիւ և լի բերանով, Հանդերձ արտասուօք, ողորմի սասցէք ինձ քազմամեղ և եղեռնագործ Կարապետիս, և ծնաղաց մեր ըստ մարմնոյ՝ Մերոպիին և Ալամիին, և եղբարցն իմոց Խաչատրուն և Հայրապետին, և քերցն իմոց՝ Յիսախիին և Վարդիին և Մարիամիին, և Հօրեղբարն իմոյ՝ Սրապիտին, և որդւոց նորա Աւագին և Մխիթարին, և այլ ամենայն արեանտու մերձաւորաց մերոց, արանց և կանանց առհասարակ ամէն:

Դարձեալ կրկին անգամ յերես անգեալ աղաչեմք զՀամօրէն ծնունդս սուրբ աւագանին, զընթերցող այսմ սուրբ գրոցս և զունկնդրող աստուածային քանիս, սրտահառաչ յիշմամբ տուայտելով պաղտանաւք յիշխելիք ի յերկնաթուիչ յաղաւթս, ի ժամ սոսկալի սուրբ պատարագին, զՀոգեւոր ծնաղն իմ. զերիցս երանեալ քաջ բարեկամս՝ զՄիմէն կոչեցեալ պըրիտիլոսն, որ ծնա զմեզ ըստ քանի քազմաջան երկօք, կրթեալ ի մամուլս վարժարանիս, ի յոյսն կենդանի: Մասնաւոց զուսումնակից նորին զԲարսեղ բարեկամս, որ ի միում վարժարանի կացեալք, ևս ելեալ քարոզեալք իբրեւ զՊետրոս և զՊողոս, ամուրք Հոգեւոր անդատանացս, և սերմանողք զքան կենաց ի Հոգիս քանականաց, ի վիճակեալ նահանգս Սրբոյն Գրիգորի, և ի միում ամի վճարեալ Հասին ի կէտ կոչմանն, զնացին զճանապարհս ամենայն մարդոյ, փոխեցան առ Ջրիստոս որոց տացէ Տէր զերկնից արքայութիւն զդասն Հարիւրաւորացն ամէն:

Դարձեալ յերես անկեալ աղաչեմ արտասուելիք զիմաք Հոգս և փռշիս սուրբ

զարշապարաց ձերոց, աղերսսմ ի խորոց սրտէ զՀարազատ զութ Հարց և եղբարց մեր Հոգեւորաց, զի կաթ մի արտասուաց ի կաթիլ մի զուլէ ձերդ մաղթանաց ցաւեցե՞ն ի զերեզման Հոգւոյ իմ ստապանաց, և լուսաւորեցե՞ն զքազմաշարաւ զազրացեալ ոսկերս մեղօք մեծելոյս, զի թերեսս վասն ձեր սխրալիք մաղթանացդ զտայց ողորմութիւն յամէնողորմ Փրկչէն մերմէ:

Նաեւ զարձեալ ժոհմ զՀոյս տեսողացդ, յիշեալիք ի զութ քարերարին Աստուծոյ զՀոգեւոր և զՀուս Հպատակեալ որդեակն մեր, որ կան նպարտութեամբ ի յընթերցումն աստուածային տառից, զՄեղքիսթ եպիսկոպոս և սպասաւոր քանից աստուածականաց, և զտէր Միմէն Ապարանցին, զեղբորդի Հոգեւոր Հօրն իմոյ, և զտէր Ստեփանոս նորընծա կրօնաւորն, և զՄերոպիկն եղբորորդեակն իմ, ևս առաւել զտէր Գրիգոր Հերպետն Սորեցի, որ է մեզ ընդունող և սոսկեջական յամենայն ժամանակս մեր: Այլ և ձեզ յիշողացդ և մեզ յուսողացս առհասարակ ողորմեցիք քարերարն և քազումողորմն և մարդաշէն Աստուած ամէն:

Դարձեալ ի յաղերս մաղթանաց կցորակից առնելով մեզ զՍուրբ Կոստն Մարիամն, Հանդերձ մարզարէիւքս և առաքելովքս, որք յիշատակին ի յԱստուածաշունչ մատենիս, և Հայցեմք զի յամենազաւր արարչէն արարածոց, զի տացէ զպարգեան Եզրաս զպրիին, և զպսակս Մարկոսի Աւետարանչին, և զպատիւս և զարքայութիւն Պրոխորոսին, Տէր Կիրակոս աստուածասէր քահանային, զի որպէս նոքս սիրով յանձն առին Հրամանաւ մարզարէիցն և առաքելոցն զրել զգիրս աստուածաշունչք, սոյնպէս ևս այս Կիրակոս աստուածասէր քահանայս յանձն առաւ յօժարութեամբ զրել զԱստուածաշունչս զայս՝ ծաղկել և կապել: Վասնորոյ տացէ Տէր Աստուած նմա՝ և ծնողաց նորա, և կողակցին նորա, և ամենայն նշխարնից արքայութիւն, և զպսակն Մարկոսի և Պրոխորոսի և Եզրասա՝ մեծի զպրիին: Այլ և պահեցէ զնա Տէր Աստուած, Հանդերձ ամենայն ուստերաք և զստերովք, և ամենայն կենդանի ազգականաւթն, յիշատակ արհուրութեամբ և ժառանգ բարութեան, անսասն և անփորձ, ի կրից քանարկու չարին, ի յայսմ աշխարհիս և ի Հանդերձեալն ամէն:

Գրեցաւ Աստուածաշունչս ի Հիզան ա-

նուն քաղաքիս, ի դուռն է տաճարաց, ձե-
նամբ Կիրակոս Երիցուս, բազում շարժարա-
նօք, որ յամենայն ժամ լինէր շարժմունք
Հինից և ելք Հեծեւոց, որ զգիրքս եր-
բման ասնալ փախչէի ի Հիզան քաղաք զը-
րէի, եւ երբման ի բնիկ գեօշն, որ է
յԱնդանց անուն, որ է ի գաւառն Մայն-
կաց, որ ասի Մամուտանք, որ է Հանդէպ Ա-
պարանից Սք. Նշանին՝ յարեմտից կուսէ,
ի դուռն Գ. Սք. Խորանացա՞ Պօզոսի եւ
Պետրոսի եւ Սք. Գէորգաց զօրավարին: Ապա
փառք Աստուծոյ որ Աստուծոյ ողորմութե-
ամբն ասարտեցաւ:

Եւ արդ ես անպիտանս եւ անիմաստս ի
զրչաց, օտարացեալ եւ Հեռացեալ յամենայն
բարի գործոց, Հող եւ մոխիր Կիրակոսս
մեղօք լցեալ եւ ապականեալ, շնորհիւ
Տեսան սկսայ. եւ ողորմութեամբ նորին
կատարեցի, զսուրբ գիրքս, որ կոչի Աստ-
ուածաշունչ. ի Բվականին Հայոց Ռ. Չ.
Գ. Վասն որոյ երեսս ի գետին զնեւով
կողկողացին պաղատանօք աղաչեմ զձեզ, զի
որք Հանդիպիք սմա կարդալով կամ աւրի-
նակելով՝ զաւելորդն բռնանայ եւ զպակա-
սութիւնն լնուք, եւ խոչորմութեան եւ
սխալանացս անմեղադիր լերուք, զի կար
մեր այս էր:

Պարծեալ յիշեցէք ի Ջրիստոս, եւ
Աստուած ողորմի ասացէք ստացողի գրոցս,
զշնորհալի եւ զշնորհազարդ, զաստուածա-
Հաճոյ եւ զսրբաւէր, զառաքիլի եւ զՀոգե-
ւէր, զբարեշնորհն եւ զբարեբախտն, զաս-
տուածազարդ շնորհօք լցեալն, զՄովսեցի
Կարպետ վարդապետն, որ ստացաւ զայս ի
յաշխատանաց իւրոց, բարի յիշատակ Հոգ-
ւոյ իւրոյ, եւ ծնողաց իւրոց, Մեսրոպին
եւ Ալամին, եւ եղբարցն Նաչատրուն եւ
Հայրապետին, եւ քրւերցն Յինախին եւ
Վարդին եւ Մարմմին, եւ Հաւրեղօրոն Սք-
րապիտին, եւ որոցն նորա Աւագին եւ
Մխիթարին, եւ այլ ամենայն արեան մեր-
ձաւորաց նորին՝ կենդանեաց եւ ննջեցե-
ւոց, ամէն:

Պարծեալ կրկին անգամ յերեսս անգեալ
աղաչեմ, զի բոլոր սրտիւ եւ լի բերանով
Աստուած ողորմի ասացէք ինձ մեղաւոր
զողոզի, եւ իմ ծնողացն՝ Մովսէսին եւ
Թուխկէն, եւ իմ կենակցին Մրաթին, եւ
մեր զաւակացն փոքրիկ Մուսիսին, Գօհարին
եւ Գօզալին, եւ իմ եղբօրն եւ քրւերն
Յուսկին եւ Մրջանին, եւ նոցա որոցցն եւ
զստերացն՝ Ղազարին եւ Սիրունին, Ղարիպ-
շանին եւ Ասիւհանին, եւ իմ Հնազանդեալ

աշակերտին տէր Աւետիսին, եւ իւր ծնողա-
ցն, եւ իմ փեսայ Գրիգոր սարկաւազին, եւ
իմ բարեկամացն՝ Պաշիշ մահադասուն, որ
պատուական ակ մի նտոր Աստուածաշունչին,
խնամի Յոհաննիսին, եւ պարուն Վարդին, եւ
այլ ամենայն ազգականաց իմոց՝ կենդանեաց
եւ ննջեցեւոց, եւ որ ի սուրբ գիրքս աշ-
խատանք եւ երախտիք ունին ամէն:

Եւ արդ ես ունայնս ի բարեաց գործոց
Կիրակոս սուտանուն քահանայ, որ ձայնիւ
բարեբարացեալ եւ Հոգւով կորացեալ աղաչեմ
զընթեքցող այսմ սուրբ գրոցս, յիշեցէք
եւ Աստուած ողորմի ասացէք վարպետին
իմոյ՝ տէր Սարգիս Հիզանցուն, եւ իւր
ծնողացն, որ բազում աշխատալնք կրեաց ի
վերայ իմ եւ ուսոյց զիս զիր եւ ծաղիկ,
եւ իւր որդւոյն տէր Յովանէս վարդապե-
տին, եւ Հիզան քաղաքի քահանայիցն՝ տէր
Իզնատիոսին եւ տէր Գրիգորին, տէր Յո-
հանիսին եւ տէր Մկրտչին, տէր Նաչատու-
րին եւ տէր Վարդանին, տէր Սարգիս եւ
տէր Աւետիսին եւ տէր Գրիգորին: Միթէ
Աստուած ձեզ ողորմեցնի յիւր միւս անգամ
զալուստն ամէն:

Պարծեալ յիշեցէք ի Ջրիստոս զԿարա-
պետ Վարդապետն, ստացող սորա, եւ զիւր
աշակերտեալ մանկուսն, զՄելքիսէթ եպիս-
կոպոսն, եւ զտէր Սիմէոն վարդապետն, եւ
զտէր Ստեփանոսն, եւ զԲաբիկ սարկաւազն,
որ կան յօժարութեամբ յընթեքցումն աստ-
ուածային գրոց. եւ ձեզ յիշողացդ լիցի
ողորմութիւն ամէն:

Եւ արդ գրեցից զենդութիւնն որ
Հանդիպեցաւ գծողիս. երբ սկսա ի գրել
զաստուածային գիրքս Գ անգամ կողոպտեցին
եւ թալան արարին զինչսն իմ, եւ մերկա-
ցուցին զիս անօրէնքն, եւ գրեցի բազում
նեղութեամբ մինչ Հասա ի գիրքն Երեմիայ
մարգարէին, այլ պատուհասի Հանդիպեցաւ,
զի աջ ակն իմ խփեցաւ եւ եղեւ իբրեւ
զփայտ չոր, մինչ ամենեքեան ասէին թէ
կո[ւ]րացաւ, Դ ամիս այնպէս մնաց, եւ
յիտոյ քացաւ, տեսին զի գնացեալ էր
լուստուն ի դէպ աջ ականջս, ամենայն ինչ
երեւէր ինձ Բ. Ռ. երկինք Բ տակ տեսա-
նէի, որ բազակն եւ լուսին Բ Բ երեւէին
ինձ՝ Հեռի ի միմեանց, նոյնպէս մարդ եւ
անասուն եւ ամենայն ինչ որ կայ ի ներ-
քոյ արեգական. եւ մնաց այնպէս ամիսս է,
եւ ես Հանապազ լայի եւ ափսոսայի զպապ-
կանեալ աչս իմ, մինչ զի ի ձեռն Սրբոյ
Նշանին Ապարանից եւ Ջրիստապիտի եւ այլ
սրբոց ողորմեցաւ ինձ Ջրիստոս Աստուածն

իմ, եւ վերստին նորոգեաց եւ լուսաւորեաց զակն իմ, եւ եւ ուրախացեալ գրէի. Հասս ի յՈղբ. Երեմիայի, դարձեալ կրկին եկն ի վերայ իմ ողբ նորա, տարածամ մահն, որ տարածեալ էր ի վերայ ամենայն երկրի, եկն ի զեղիկն իմ եւ ոչ եթող ամառք առանց արտատւաց, յաւուր Ը. Թ. Ժ, Թաղէինք, մինչեւ երկոյն. Երբ լուսանայր նոյն չափով մեռանէին. Բ շարքաթ աշակէս մնաց: Եւ ես սիրասունեղ որդեակ մի ունէի Ստեփանոս անուն, նա այլ զնաց ի զրկաց մերոց ի ճանապարհ ամենայն մարդոյ եւ փոխեցաւ առ Քրիստոս, այս ամենայն եկն ի վերայ իմ վասն մեղաց իմոց. որոց տացէ Տէր զերկնից արքայու-թիւն: Եւ ես անմխիթար սզով զրեցի, Հասս ի զիրթն Պօղոսի առաքելոյն, դարձեալ ազգամեցաւ եւ մխիթարեաց զիս Քրիստոս Աստուածն իմ, եւ ետ զՄուսէս տղայն ինձ ի մխիթարութիւն, եւ ես խնդութեամբ եւ ուրախութեամբ սրտիւ զրեցի զԱստուածաշունչս բովանդակ կաման Աստուծոյ, եւ ծաղկեցի գոյնզգոյն եւ երանգ երանգ զու-նով, եւ զարդարեցի ոսկով եւ լազար-ղով, եւ կազմեցի զօրութեամբ Սք. Հոգ-ւոյն եւ աջողութեամբ նորին, ի վայելու-մն Կարապետ քաջ ըստունապետին եւ յիշա-տակ Հոգւոյ իւրոյ ամէն:

Դարձեալ կրկին անգամ աղչեմ զձեզ, ով եղբարք, որ քնակեալ էք ի Սք. Քաղաքն Երուսաղէմ, ընդ Հովանեաւ Սրբոյն Յակոբայ, լի սրտիւ եւ բոլոր Հաստով յիշես-չիք ի Քրիստոս միով ողորմայիւ, ինձ տա-տախով Կարապետ Վարդապետիս, որ բազում ծախիւք եւ արդեամբք ետու զրկն եւ ծաղ-կով զարդարել զԱստուածաշունչս, ոսկով եւ լաճվարդով, եւ երանգ երանգ զունով, եւ ետու յիշատակ ի Սուրբ Երուսաղէմ, ի զուռն Սք. Յակոբայ, ի յառաջնորդութեան տեսուն՝ տէր Գրիգոր Հայրապետին, որ քա-զում երախտիք եւ աշխատանք ունի ի վերայ վիճակիս Հայոց, եւս առաւել ի վերայ մեզ եւ ի վերայ աշակերտաց մերոց, զոր խնդ-րեմք ի Քրիստոսէ, որ զինքն ընդ սրբազան Հայրապետացն դասեցէ, եւ ընդ անուանակ-ցին իւր Սք. Լուսաւորչին մերոյ պսակե-ցէ:

Եւ ոք Հանդիպի Սք. Աստուածաշունչ զորոցս, կարդալով եւ կամ օրինակելով, կամ յարեանցի տեսանելով, Աստուած ողորմի ասացէք ինձ Կարապետ վարդապետիս, եւ ծնողացն իմոյ՝ Մեսրոպին եւ Աւամին, եւ եղբարցն իմ Նաչատուրին եւ Հերապետին,

եւ քրեբքն Յինախին, եւ Վարդին, եւ Մարիամին, եւ Հօրեղբարն իմոյ Մարպիո-նին, եւ որոց նորա՝ Աւագին եւ Մխիթա-րին, եւ այլ ամենայն արեանառու մերձա-ւորաց մերոց, կենդանեաց եւ ննջեցնուցն ամէն: Եւ ձեզ յիշողացիք եւ ողորմի ասա-ցողացի ողորմեցի Քրիստոս Աստուածն մեր յիւր միւսանգամ զալըստեանն ամէն:

Եւ թէ ոք յանգզնի սուրբ զորոցս թէ ծախելով կամ զողանալով Հեռացուցանէ ի Սք. Երուսաղէմայ, ի զբանէ Սք. Յակոբայ, զպատիժն Գէիզի առջէ, եւ զպատուհասն Դա-դանա կրեցէ, եւ ի Քրիստոսէ անմասն ել-ցէ, ամէն: Եւ զինամ տանօղ Սուրբ Գրոցս եւ զլուս պահաւոյն աւրճեալ լիցի ի Տեսու-նէ Աստուծոյն Իսրայէլի, որ աւրճեալ յախտեան ամէն:

Յիշատակարամ Մովսէսի Կարապետ Վար-դապետի.— 1681

Քղ. 4ա 1, բոլորգիր.— Ի Թվին Հայոց Ռ եւ Զ ի ժամանակ յորում էր Հայրապետ Սք. Երուսաղէմի Գանձ[ակ]եցի տէր Գրի-գորն սրբասեալ, որ զամենայն տնօրինա-կան տեղիս Քրիստոսի վերստին նորոգեաց, որպէս Ջօրաբաբէլ ի Հնումն իսրայէլի:

Ես նուաստ Մովսէսի Կարապետ պիտակ անուամբ վարդապետ, Ե. պատուական զիրք տուի յիշատակ Սք. Երուսաղէմայ, ի զուռն Սք. Յակոբայ, Նախ Աստուածաշունչն Հին եւ նոր Կտակարանքն ի մի տուփ: Երկրորդ զիրքն Ե. պատմագիրք եւ մեծ Հարանց Վար-քն ի մի տուփ: Երրորդ զիրքն է արտաքին եւ Սահմանքն Դաւթի, քովանդակ քնարանքն եւ մեկնիւնքն եւ լուծմունքն ի մի տուփ: Զորրորդ զիրքն Գրիգոր Ստաթեւացոյ շինան նոյն արտաքին է Գրոց Լուծմունքն ի մի տուփ: Հինկերորդ զիրքն Կանոնգիրքն եւ Դատաստանագիրքն եւ Տասն Ասացուածքն ի մի տուփ: Եթէ՛ Տէր կամեցի Սազմոսի Մեկ-նիչն եւ Քաղուածոյն ի մի տուփ տամ զը-րել, եւ զայն ես տամ. ապա որքան եւս կենդանի եմ եւ աշակերտքն իմ՝ կարգամք, եւ յամէն տարի նոցա (նոցա) փոխան եւ վարձ Ա ոսկի Սք. Երուսաղէմայ լուսզին տամք, եւ վերջն առ տէրն իւր ի Սք. քա-ղաքն Հասուցանեմք, զի անդ անխափան եւ անարգել ընթեռնուցուն եւ աւտոյն ամ. խնդրողքն, եւ ողորմիս տացեն ամենեցուն, որք մասն ողորմութեան եւ աշխատանք ու-նին ի նոսա, եւ ինքեանք ողորմութիւն գտցեն ի Քրիստոսէ:

Եւ թէ ոք այսուհետեւ Հակառակի այսմ

բանիս, եւ զայս գրեանքս շտայ Աք. Երուսաղէմայ, թէ յիմոց եւ թէ յօտարացն, եւ կամ զողանայ՝ նա զպատիժ զողոյն Աքարայ կրէ, որ զԱստուծոյ բաժին զողացաւ, եւ կամ թէ որ վասն ազաւութեան ծայխէ, առանց Երուսաղէմայ առաջնորդի կամացն, եւ կամ Հնոացուցանէ անդառնալի, նա մասնակից լինի Յուդայի, որ զՈրդին Աստուծոյ վաճառեաց վասն ազաւութեան, եւ ջրոտի իբրեւ զՔեեզի, եւ կցորդի անիծիցն Կայնի: Եւ եթէ ոք զստա խնամով պաճէ, եւ յօժար սիրով ընթեռնու, եւ անխնայ տայ սիրով եւ յօժար ընթերցողացն, եւ զնոցա Հոգեւոր քաղցն եւ զծարաւ կարատութեանն

լնու, նա փոխանակ այս վեց գրոցս՝ ի յաւուր զատաստանին, ի Աք. Երուսաղէմ, զողորմածաց վեց աւրՀնութեան բարբառն լսել տացէ Ջս. Ած. որ ասէ. Եկայք աւրՀնեալք Հօր իմոյ, զի քաղցեայ եւայլ ամ. ամէն: Եւ դարձեալ եթեւալիք աւրՀնութեան ձայնին արժանաւորեսցի Հանդերձ ամ. ննջեցեովք ամէն:

Մամր յիշատակագրութիւն.—

Քղ. 678բ 1, ստորոտը, մանրատառ.— Յիշեցէք ի Ջս. եւ Ած. ողորմի ասացէք Աւամիւն, որ Ա շայի ետ զծողիս ճաշ. Աստուածաշնչին Համար:

2561 – 6

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ.— 29

Կ.Պոլիս

1654-1670

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ.—

Ծաւալ 29X21X10: Թերթք 669: Հանգամանք շատ լաւ. մի քանի թերթերու ստորին լուսանցքները փոքր ինչ ցեցոտած. լուսանցքներու վրայ յայտնի են խոնաւութեան ազդեցութեան Հետեբերը: Թուղթ ողորկեալ եւ զեղնագոյն: Գրիչք՝ Մեւիտոն երէց, Եղիա, Ագարիա: Գրութիւն՝ խորագրերով կարմիր, սկզբնատողերը ոսկեգոյն եւ կարմիր, զլիսագրիները ոսկեգոյն, մընացեալը սև մեղանով, երկսիւն, 49 տող, զոյգ գիծերու միջև: Բոլորգիր մանր եւ կանոնաւոր: Համառօտագրութիւնը առատ: Սրբագրող՝ Յովանէս ԱՀն. Երկան: Նկարող՝ Մարկոս պատկերահան: Գունաւոր զարդագիր, լուսանցազարդ, տեղտեղ Հանդերձ լուսանցանկարով, ոսկեխառն եւ շքեղ: Կիսախորան, թղ. 88ա 1, 64բ 1, 70բ 1, 81ա 1, 108ա 1, 120բ 2, 151բ 2, 165ա 1, 180բ 2, 194բ 2, 208ա 2, 264ա 1, 872բ 2, 419բ 1, 441ա 1, 470բ 2, 481ա 2, 697ա 2: Խորանազարդ իւր սարօթ, 7ա, 186ա, 81ա, 847ա, 896ա, 618ա, 685ա, 647ա, 664ա 680ա, 695ա, 604ա, 628ա: Լուսանցանկարք, Ծննդոց Գրքին մէջ 15 Հատ. Եւլից 7, Թուոց 4, Յետուայ 4, Դատաւորաց 6, Հռութայ 1, Ա – Գ Թագաւորութեանց 4, Սազմոսաց 28, Երզոյ Երզոց 1, Իմաստ.

Սողոմոնի 1, Յովքայ 1, Եսայեայ 1, Երեմիայի 8, Դանիէլի 4, Եզեկիէլի 2, Մատթէոսի 88, Մարկոսի 27, Ղուկասու 89, Յովհաննու 24, Գործոց 1, Եղիշէ Վարդապետի 1 (660բ 1):

Նկարք՝ ոմանք յարակից արձանագրութիւններով.

- 1.- Վեցօրեայ արարչութիւն, թղ. 6բ
- 2.- Անցք Կարմիր Ծովէն, 82բ
- 8.- Խորանը Անապատին մէջ, 65ա
- 4.- Տապանակը եւ ԺԲ. ցեղերը, 66բ
- 5.- Տըւչութիւն Տասնաբանեայ Պատուիրանաց, 90բ
- 6.- Հեղի Աւանանայպետ եւ Աննա, 185բ
- 7.- Արտաշէս Արքայ եւ Նեեմի, 248ա
- 8.- Արտաշէս, Եսթեր եւ Համան, 261ա 2
- 9.- Հողոփեռնէս զլիսատուած, 267ա 2
- 10.- Հրեշտակ, Տուրիա եւ ձուկ, 260ա 2.
- 11.- Աղեքանաղը Մակեդոնացի՞ ձիւաւոր, 268բ 2
- 12.- Դաւիթ մարգարէ ձերաղիր, 810բ
- 18.- Սողոմոնի Դատաստանը, 846բ
- 14.- Տեսիլ Եսայեայ, 896բ
- 15.- Եւսեբիոս , 604բ

ՋՕՅԷԻ-Ե.-Մ. Տ Ո Ւ Տ Ա Կ Ջ Ե Ռ Ա Գ Դ Ա Ց

ՅՅԶ



18.- Աղջեւի Կողք
թիւ Ջ581



19.- Տուչուֆիւմ Օրիմաց
քիւ 2561, թղ. 80բ

- 16.- Կարպինոս , 606ա
- 17.- Ս. Ծնունդ, Ս. Մատթէոս, Մարտ.
- Վրդ. Ղրիմեցի 617բ
- 18.- Խաչելութիւն, Ս. Մարկոս, 684բ
- 19.- Թարութիւն Տեառն, Ս. Ղուկաս, 646բ
- 20.- Ս. Երրորդութիւն, Ս. Յովհ. եւ Պրոխ. 668բ
- 21.- Համբարձումն Տեառն, 679բ
- 22.- Ս. Յակոբոս Տեառնեղբայր, 694բ
- 23.- Ս. Պետրոս Առաքեալ, 697ա 1
- 24.- Տեսիլ Յովհաննու Աւետարանչի,

- 608բ
- 25.- Ջսանչորս երիցունք, 606բ
- 26.- Երիցունք եւ Գառն, 606ա
- 27.- Չորս Հեծեալներ, 606բ
- 28.- Վեցերորդ կնիք, խաւարումն լուսաւորաց, 607ա
- 29.- Չորս Հրեշտակներ, 607բ
- 30.- Տէրը չորհրդերգեանն աթոռոյ վրայ, 608ա
- 31.- Առաջին փոզ, անկումն արեւու,

- 608բ
- 32.- Զիբր օձանման ազիով, 609ա
- 33.- Հրեշտակ սինակերպ ոտքով, 609բ
- 34.- Աստղապսակ կին եւ եօթնազլուխ վիշապ, 610բ
- 35.- Եօթնազլուխ զագանին էլքը ծովէն, 611ա
- 36.- Սպիտակ Գառն եւ Հետեւողներ, 611բ
- 37.- Որդի Մարգոյ ի ձեռին գերանդի, 612ա
- 38.- Կին նստած կարմիր զագանին վերայ, 618ա
- 39.- Սպիտակ ձի եւ Հեծեալ, 614ա
- 40.- Սատանան շղթայուած, 614բ
- 41.- Պօղոս Առաքեալ եւ Եղիմաս մոզ, 622բ

Կաշեկազմ տախտակեայ արծաթապատ ոսկեջրած. առաջին երեսին բարձրաքանդակ՝ յարուցեալ Քրիստոս եւ չորս անտարանիչներ, վերջին երեսին խաչեալ Քրիստոս * ՅԵՔԶ * արձանագրութեամբ: Ստացող՝ Մարտիրոս Վրդ. Ղրիմեցի:

ԲՈՎԱԼՆԴԱԿՈՒԹԻՒՆ.-
 Քղ. 1-8, դատարկ:
 Քղ. 4ա 1.- Նախադրութիւմ Ծմողոց:
 Քղ. 5բ-6ա, դատարկ:
 Քղ. 7ա.- Ի սկզբանէ արար Ած. զերկին եւ զերկիր...
 Քղ. 29բ 1.- Նախադրութիւմ Ելից:

Դիտ.- Ելից գրքին լուսանցքներուն վրայ կան Որդինեան Նշաններ, տեղտեղ միայնակ, այլուր խումբով:
 Քղ. 62բ 1.- Նախադրութիւմ Ղեւտա-կաթիմ:

Քղ. 69ա 1.- Նախադրութիւմ Մուրցմ:
 Քղ.- 89ա 1.- Նախադրութիւմ Երկրորդ Աւրիմաց:
 Քղ. 109ա 1.- Նախադրութիւմ Գրոցմ Յետւայ որդոյ Նաւեայ:

Դիտ.- Ցեսուայ Գրքին լուսանցքներուն վրայ եւս կը գտնուին Որդինեան աստղանիշեր: Նոյնպէս յաջորդ Դատարաց Գրքին մէջ:

Քղ. 120ա 2.- Նախադրութիւմ Դատաւորաց:
 Քղ. 122ա 1.- Նախադրութիւմ Գրոցս Հոռութայ:

Քղ. 188բ 2.- Յառաքեալն Նախակարգեալ Մագաւորութեամբ:
 Քղ. 186ա.- Մագաւորութեամբ Առաջիմ: Դիտ.- Քագաւորութեանց Առաջին Գրքին վրայ կան բաւական թուով Որդինեան նշաններ:

Քղ. 161բ 2.- Մագաւորութեամբ Երկրորդ:
 Քղ. 165ա 1.- Մագաւորութեամբ Երրորդ:
 Քղ. 180բ 2.- Մագաւորութեամբ Չորրորդ:

Նկատ.- Դ. Քագաւորութեանց Գրքին լուսանցքներուն վրայ յաճախակի նշանակուած են Սիմաքոսի եւ Ակիզասի տարբերակները:

Քղ. 198բ 2.- Նախադրութիւմ Առաջիմ Մնացորդաց:
 Քղ. 208ա 2.- Մնացորդաց Երկրորդ:
 Քղ. 224ա 1.- Նախադրութիւմ Եզրի Առաջիմ:

Քղ. 224ա 2.- Գիրք Եզրի Առաջիմ.- Եւ արար Յովսէս թագաւոր զգատիկն Տեառն յերուսաղէմ...:

Քղ. 230բ 1.- Եզրայ Երկրորդ.- Ցատաղնում ամիս Կիւրոսի արքային Պարսից...:

Քղ. 234ա 2.- Եզր Երրորդ.- Ես Սաղաթիէլ որ Եզր կոչեցայ...:

Քղ. 242բ 2.- Նախադրութիւմ Գրոց Նենմայ:
 Քղ. 248ա 1.- Բամբ Նեանմիա որդւոյ Աքաղիայ:

Քղ. 248ա 2.- Եսթեր:
 Քղ. 252բ 2.- Յուդիթ Է գիրքս այս:

Քղ. 258բ 1.- Տովբիթ:

Քղ. 262բ 1.- Նախադրութիւն Առաքիմ

Մակարեացոց:

Քղ. 264ա 1.- Առաջին Գիրք Մակարեացւոց:

Դիտ.- Քանաքին խստութենէն զհծերը պատճառ եղած են որ թերթերուն վարի ծայրերը քիչքիչ ճեղքուին:

Քղ. 278բ 1.- Գլուխ երկրորդ Մակարեացոց:


Քղ. 289ա 1.- Գլուխ երրորդ Մակարեացւոց:

ԿՏԱԿՐ ՆԱՀԱԳԵՏԱՅ.- 13

Քղ. 298բ 2.- Գիրք Մնացորդաց, խաւար Ռուբենի Կտակ Առաքմայմ.- Հրաման Կտակի Ռուբենի, զոր պատուիրեաց որդւոց իւրոց...:

Մամօք.- Իւրաքանչիւր Կտակին կից լուսանցազարդը կը պարունակէ նաեւ յիշեալ նահապետին մանրանկարը:

Քղ. 808բ 1.- Կտակ Յովսեփայ, Վասմ Նախամծու.- Հրաման պատասխանեաց Կտակի



20.- Դատաստամ Սողոմոնի
թիւ 2581, թղ. 948բ

Յովսեփայ...:

Քզ. 806ա 2.- Կտակ Բեմիամեմի ԲԺ ա-
Ուերորդ.- Լրաման Կտակի Բենիամինի, զոր
խօսեցաւ որդեց իւրոց ի չորրորդ ամի
Հիւանդութեան իւրոյ, կացեալ ամս Ծ եւ
ԻԵ...:

Քզ. 806ա 1.- Յամկը Դաւթայ Մարգա-
րէութեամբ:

Քզ. 808ա 1.- Երամելւոյմ Եպիփամու
Եպիսկոպոսի Կիպրացւոյ Յաղագս Երգոց
Սաղմոսարամի:


Քզ. 811ա.- Գիրք Սաղմոսաց Դաւթի.
Սաղմոս ի Դաւթ.- Երանեալ է այր...:

Քզ. 846բ 2.- Նախադրութիւն Առակա-
ցմ:


Քզ. 847ա.- Առակը Սողոմոնի, որդւոյ
Դաւթի թագաւորի Իսրայելի Յերուսաղէմի.-
Ծանաչել զիմաստութիւն եւ զխրատ...:

Քզ. 857ա 2.- Նախադրութիւն Ժողո-
վողիմ:

Քզ. 862ա 1.- Նախադրութիւն Երգոյ
Երգոցմ:



21.- Երկրպագութիւն Մոզոց
Մարտիրոս Վրդ. Ղրիմեցի
բիւ 2581, թղ. 517բ





ՁԳ.- Օգոստոս Կայսր: Հովիւներ
թիւ 2561, թղ. 548ա

Քղ. 864բ 1.- Նախադրութիւն Իմաստութեամբ Սողոմոնի:

Քղ. 872ա 1.- Տեառն Ներսէսի Յիշատակ Առականց Սողոմոնի, զոր իւրով ձեռամբն գրեաց, զարթուցամել ըզքմբրեալս մեղաց. - Աստուածեղէն Հոգւովն ի սմա...:

Քղ. 872բ 2.- Իմաստութիւն Սիրաքայ - Ամենայն իմաստութիւն ի Տեառնէ է, կայ եւ մնայ յաւիտեան...:

Քղ. 880բ 2.- Այս խաւսց Սիրաքայ կարծեմ որդւոյ կատարելոյն Սիմէոնի. - Միտք Հնազանգ՝ եւ որկոր պարկեշտ՝ փառք են մարդոյ...: Մաշին եւ Հալին արք ամպս բիշտք ի միտս իւրեանց...:

Քղ. 881բ 2.- Նախադրութիւն Յորայ: Մամօթ. - Յորայ գրքին լուսանցքնհրուն վրայ յոյժ բազմաթիւ են Որոզինեան աստղանիշերը:

Քղ. 894ա 1.- Ցառաջարմ Եսայայ Մարգարէի:

Քղ. 896ա.- Մարգարեութիւն է Եսայայ. Տեսիլ Եսայայ որդւոյ Ամուսայ, զոր ետես ի վերայ Հրեաստամի եւ ի վերայ Երուսաղէմի, ի թագաւորութեամբ Ոգիայ եւ Յովաթամայ եւ Աքազու եւ Եզեկիայ, որք թագաւորեցին Հրեաստամի. - Լուր երկին եւ ունկն ղիր երկիր...:

Քղ. 418բ 2.- Նախադրութիւն Երկուտասան Մարգարէիցմ: Մամօթ. - Իւրաքանչիւր Մարգարէութեան կից գեուան լուսանցազարդը կը պարունակէ նաեւ յիշեալ Մարգարէին մանրանկարք:

Քղ. 489ա 2.- Նախադրութիւն Երեմիայ Մարգարէի:

Քղ. 465բ 2.- Մուղթ Բարուայ:

Քղ. 467բ 1.- Ողբ Սրբոյն Երեմիայ Մարգարէի:

Քղ. 470ա 1.- Նախադրութիւն Դամիելի Մարգարէի:

Քղ. 480ա 1.- Նախադրութիւն Եզեկիէ-



24.- Ուրացութիւն Պետրոսի թիւ 2581, թղ. 581բ

լի Մարգարէի:

Քղ. 508բ Ձ.- Մահ Եզեկիէլի Մարգա-
րէի.- Եզեկիէլ էր ի յերկրէ Սարբրայ, ի
քահանայիցն...:

Քղ. 504ա, զատարկ: Նոյնպէս 505բ,
506ա, 507բ, 508ա, 509բ, 510ա, 511բ,
512ա, 518բ, 514ա, 515բ, 517ա:

Նորանի տախտակներ, ներքեւը նրկա-
թազիր իւրայատուկ քաջատուրութիւններով.
Քղ. 506բ, 507ա, 508բ, 509ա, 510բ,

511ա, 512բ, 518ա, 514բ, 515ա:

Քղ. 518ա.- Չիբբ Եննդեան Յի. Ջի.

...:

Քղ. 584ա, զատարկ:

Քղ. 585ա.- Աւետարան ըստ Մարկոսի
- Սկիզբն Աւետարանի Յի. Ջի. ...:

Քղ. 544բ Ձ.- Աւետարան ըստ Մար-
կոսի.- Ցարուցեալ Յս. առաւատուն...:

Քղ. 546ա, զատարկ:

Քղ. 547ա.- Աւետարան ըստ Դուկայ.-
Ջանգի քաղուժ քաւթարեցին...:



25.- Յովհաննէս եւ Գրոխորոմ
թիւ 2581, թղ. 583բ

Քզ. 664ա.- Աւետարան ըստ Յովհաննու Ի սկզբանէ էր բանն...:

Քզ. 676ա Ձ.- Աւետարան ըստ Յովհաննու.- Իրբ կնոջն շնացելոյ.- Գնացին իւրաքանչիւր որ ի տեղի իւր...:

Քզ. 676բ 1.- Այս իմչ է ի գիրս: Ա - Է:
- Յառաջարան Գրոց Գործոց Առաքելոց:
Քզ. 678ա, զատարկ:

Քզ. 680ա.- Գործք Առաքելոց Ղուկայ Աւետարան[չ]իմ.- Ձբանն առաջին զոր արարի...:

Քզ. 694ա 1.- Յառաջարան եւթանցումը թղթոցմ Կաթողիկեայց:

Քզ. 695ա.- Յակոբոս Այ. եւ Տեառն Յի. Զի. ծառայ...:


Քզ. 696բ Ձ.- Նախադրութիւմ Առաջիմ թղթոյմ Պետրոսի:

Քզ. 604ա.- Յայտնութիւմ Սրբոյմ Յովհաննու Առաքելոյ եւ Աստուածարան Աւետարանի.- Յայտնութիւն Յի. Զի. ...:

Քզ. 616բ Ձ.- Այս Յայտնութիւն Աստուածարան Աւետարանչին Յովհաննու, սրբոց Հարցն մերոց վարդապետութեամբ պատուեալ ի պէտս վկայութեանց...:

Քզ. 616բ Ձ.- Յառաջարան Պաւղոսի Առաքելո խախկարգեալ ի գլուխ գրոցս:

Քզ. 628ա.- Առ Հոռովմայեցիս Բուխթ.-



26.- Յակոբոս Տեառնեղբայր թիւ 2581, թիւ 584բ

Պաւղոս ծառայ Յի. Զի. ...

Քղ. 628բ Զ.- Առ Կորնթացիս Առաջիմ թուղթ:

Քղ. 656ա 1.- Թուղթ Կորնթացւոցմ առ Սր. Առաքեալմ Պաւղոս:

Քղ. 656բ Զ.- Համզիստ Եղամելոյմ Զո- համձու Աստուածաբան Աւետարանչի.- էր ընդ հըրարսն...:

Քղ. 657բ Զ.- Յառաջարան Յայտնութ- եանն Յովհաննու:

Քղ. 658ա 1.- Գլուխք Զայտնութեամ Զովհաննու:

Քղ. 658բ Զ.- Երկիմք, եկեղեցի: Ա- րեգակմ, Գս. եւ Աւետարանմ: Լուսիմմ, Աւրեմքմ...:

Քղ. 660բ 1.- Մեծի եւ հրաշափառ Պայ- ծառակերպութեամմ Զի. Այ. մերոյ, Եղիշէի Վարդապետի ասացեալ Յաղագս թափօր Լերի-

ձմ.- Վասն լերինն զհզեցկութեան եւ վարուց վայելչութեան եթէ կամ էք ախորժելով ուն- կն զենլ...:

Ոտանաւորք Աւետարանիչներու նկար- ներուն ներքեւ, մութ կապոյտ յատակի վրայ: Տողակիզքի տառերը կը յօգեն * Մարտիրոս Վարդապետ*:

1.- Քղ. 677 բ.

ՄըշտաՀասան զետոցն յԱզին, Անզէս փիտն է' սա նախկին, Բախարար երզ կենաց բանին, Տըպազ, սուտակ ակունք սորին:

Զ.- Քղ. 584 բ.

Իբր ըզԳեՀոն զուարթարար, Բամից Հանուրց քարոզ ճարտար, Ուստի կոչի քարէր պատուար,



27.- Եղիշէ Վարդապետ թիւ 2581, թղ. 680բ

- Սա է յասպիս գիւտըն դժուար:
 8.- Թղ. 546 բ
 Վերաքերի առ որ Հանգոյն,
 Ակըն Տիգրեայ երրորդ գետոյն,
 Բաքեաց կոչի սա յարութիւն,
 Դա է շափիւղն ծիրանեզոյն:
 4.- Թղ. 568 բ.
 Այլ սա չորրորդն է Եփրատէս,
 Պտղաքերոզ քուսից պէսպէս,
 Եւ է Հնազանդ ի կողմանէս,
 Տիպ գմբըխտեա փայլողապէս:

Մամբ յիշատակագրութիւմ Գրչի.-
 Թղ. 422բ 2, ստորութը.- Զմեղաւոր եւ
 գանարժան գԱզարիայ գրիչս յիշեցէք ի Տէր
 միով Հայր մեղա. եւ.:

Մեծ յիշատակարամ Գրչուքեամ, առաջին
 մասը տաղաչափեալ, Թղ. 661բ 1-664ա 1,
 որուն տնակիզքի ոսկեզոյն տառերը կը
 յօդեն, " Փրկչին ծառայ Մարտիրոս Վար-
 ղապետ Ղըրիմեցի ըստացաւդ սուրբ զանձիս
 պատուականազունոյ". իսկ տնամիջի՞ այս-
 ինքն երրորդ տողերու կապոյտ գլխատառերը
 կը յօրինեն, " Աշակերտ տեսն Ասուրա-
 ծատրոյ սուրբ Երուսաղեմայ Հայրապետին
 մեծի տիեզերալոյս պետի": Ապա կը յա-
 ջրողեն այբուբենական գլխատառեր Ա-Ջ,
 եւ Ջ - Ա: Վերջին Հատուածին սկզբնատո-
 ղերուն վերջին տառերը, գրուած կարմի-
 րով, իրենց կարգին կը յօդեն, " Մարտի-
 րոս Վարապետի է":

Թղ. 661բ 1.- Յիշատակարամ Գրոցս.-
 1670

Փառք պատիւ եռակի էին անսահման,
 եւ երկրպագութիւն բնութեանն եզական:
 Անեղ անճառ անծին լուսոյն Հայրական,
 լի լուսոյ ծնունդ բանին եւ Հոգոյն քղխմանն:

.....
 Զրիստոս Փրկիչըն մեր օրհնեալ,
 զձեռս ի վերայ յոցա եղեալ,
 Փառք առ Հայր վեր Համբարձեալ,
 եւ ընդ յաջմէ նորա բազմեալ:
 Բրիստոսի փրկչիդ նրկիր պագամեմ,
 զանբաւ գթութիւնդ զոհութեամբ աւրհեմմ:
 փառակցի Հոգւոյդ ընդ Հօր զուգանմ,
 զարհնութիւն եւ զփառս միշտ վերնեմայմ,
 Իհիծելոյս մեղօք քաղցրութեամբ զըթա,
 քիւր յանցաւորիս զգիր պարտեաց ջնջեա:
 Յօղոյդ քաղցրութեան արժանի արա,
 բուսոյ միւսանգամ զիս եւ նորոգա:
 Բարունոյդ քանի տունն եւ տաղավար,
 անեղիդ ծընօղ իսկուհին եւ մայր,
 Տաղանդակորոյս ծառայիս վատթար,
 աղերսեմ լինել միջնորդ Հաշտարար:
 Վասն իմ մաղթեցէ եւ թոյլ Կարապետ,
 եւ պակաւոր վկայն քարափետ,
 Աոցին Համածայն Հայկազնեայցըս պետ,
 այն որ ըզտաճարն ետես լուսակերտ:
 Թաքի կոչեցայ յարզող քանթարի,
 զտայ կորուսիչ զանձուց տէրունի,
 Զահ անունեցայ տալ լոյս ի մըթի,
 խարխափուն շրջիմ ի գործ խաւարի:
 Պարտապան զբտայ քանթարացըն քիւր,
 զործել ոչ կարեմ չիշխեմ առնել մուր,
 Զուեիմ ինձ պաշար Հոգոյս կերակուր,
 եւ ոչ Աքրահամ տա ինձ կաթ մի ջուր:

Ուր ոչ ընձեռի ողորմութիւն քո,
 քանզի արդար ես ի դատելըն քո,
 Եղթալասնեռ կապիցքս զերծո,
 առ իս ցոյց ըզգութ աստտ սիրոյ քո:
 Նշանի խաչիդ յե՛րբ ծագես ըզլոյս,
 զի երկըրպազուաց քոյին նայ է յոյս,
 Յայնմ աուր ջնջեա զմեզաց աղտ Հոգւոյս,
 ի քեզ եմ յանձին Աստուած իմ Յիսուս:
 Միւսանգամ գայցես նախընթաց Հրոյով,
 զի զգործըս մարզկան անդ արկցես ի ըով,
 Ետագայթափայլ լուսեղէն ամպով,
 վերաթեւեցես զյուսացեալս Հոգւով:
 Ղամպար լուսածաղ փայլեալ զերակա,
 զզանձս աստուածածիր յաւէտ մշակա,
 Ձօնեցի ի սէր Փրկչիդ առ յապա,
 զքոյս ի քեզ նուէր ի՛րբ այրոյն լումա:
 Հանեցիս ի փառսդ Տէր իմ բարերար,
 որպէս զԱբելին նուէր Հաշտարար,
 Կամ զԱբրահամուռ որ ընդունեցար,
 ընկալցիս եւ զիմս ընդ նոսին յարմար:
 Ծաղկազարդս այդի ցանկալի զբախտ,
 տեաննատունկ ծաղկոց անուշահոտ վարդ,
 Խանդակաթ սիրով Հոգիազուարդ,
 զմայլեցայ ի սէր սորին փառազարդ:
 Լաւ վարկայ ստանալ զմեծութիւն սորա,
 քան զանիրաւեալն ունել զմամոնա,
 Իսկապէս լթի ես ի սէր սորա,
 զմթերբս զանձից ծախելով ի սմա:
 Ժամ է ինձ զարթնուլ ի քընոյս անղէպ,
 զի սա ընդոստուցեալ խթէ զիս ըստէպ,
 Թէ ինձ շնորհաց Հասցես անվըրէպ,
 եթէ մեղուօրէն ջանայցես Հասցենպ:
 Ընդելուզեցի ահա զրեթե,
 զակունս ընդ ոսկի յեռեալ իբրու թէ,
 է այս մեծութիւն շնորհեալ ի Տեառնէ,
 զանձ երկնածածուկ անահ ի կերչէ:
 Ջի թէ յարգեցից է սա ինձ օգուտ,
 Ըստ որում Հրամայեաց Փրկչին իմ անսուտ,
 եթէ Հեղզացեալ լիցիմ երկընչոտ,
 յետ յայնմ արգարեւ կորընչիմ անզիւտ:
 Դուք ով Հոգեկիր սպասաւորք քանի,
 եւ Հոյլք բարունեաց բոլորով սորի,
 Գըթացեալ ի Հէքս տայցէք ողորմի,
 ինձ ունայնարան սոսկ Մարտիրոսի:
 Բանքս իմ անյարմար աստէն կա՛յ առցէ
 թէ եւ լսելիացդ ախորժ ոչ իցէ,
 Արամեանըս թիւ յաւել Հազար է,
 Հարիւր տասն եւ Թ ի նոյն բարդեալ է:

Ամենապատեճառ եւ սկզբնական էութիւն
 երանական Երրորդութեանն Սրբոյ, որ քո-
 լոր գոյիցն է պատեճառ, եւ Հանուր էացե-
 լոցս սկիզբն...:

Իսկ ես յետինս ի Հոյլս քարոզչաց,
 եւ Համբակտիպս ի խումբս ըրարունեաց,
 տնանկս ի Հոգեկեցոյց Հարստութեանց, եւ
 վրիպեալս ի քնաւիցն մասնէ բարութեանց,

ունայնաբան շաղակրատու ե թուազարդ թզե-
նիս, Մարտիրոս հեթ անուամբ վարդապետս
Ղրիմեցի, աշակերտ տեան Աստուածատուրոյ
հումահեթին, տիեզերալույսու ե աստուածաբան
պետոս պետին ե Սր. Երուսաղէմայ երջնե-
կապտիւ Հայրապետի, յորոյ ոչ գտայ աշա-
կերտ արժանի ե Հնտեոզի խառակրուն վա-
րուց նորին ե առաքինութեան: Այլ Հակա-
միտեալ ի սէր անցաւորիս սնտեոց ե պա-
րաւանդեալ զանազան տեսակօք մեղաց, ե
զառեցեալս քանքար ոչ ի Հող այլ ի տիղմս
զարշութեան ընդոտնեալ աղտեղացուցի վա-
րազօրէն:

Ըստ Սբրոյն Գրիգորի նարեկացւոյ վա-
սն իմ գրեալ քանիցն աղէտայեաց՝ բեմական
ստորնաքարը, մշակ Հեղզացեալ, սպառազէն
անժուժ, դպիր կշտամբեալ, տատասկացան
երկրագործ, մատակարար կամակոր, վերա-
տեսուչ կարկամ, վաճառական վատնիչ գան-
ձուց, ոստիկան երկմիտ, շահարար շուայ-
տեալ, ե այլովք յուղվազունիւք շարեօք
զառածեալս եղկելի, զմտաւ անեալ սակս
յայքանեացս մեղանաց զղբ ե սպեղանի
զտանել ե սրբել ի Հոգեկանիս վիրաց
շարաւալեաց, ե ոչ երբէք զօրեաց ոք ի
մարմնեղէն բժշկապետաց:

Յաղաքս որոյ կարօտացայ յայսմ սխրա-
լի ե տեկնելի, բազմորակ ե յօքնատա-
րազ, զեղզեղափայլ ե մամեսպայծառ բու-
րատանիս, ե ծաղկահաւաք մեղանեոցիս
աստուածայնոյ, ստանալ զսա ե թողուլ
յետ ինձ յիշատակ անշինչ, ե յաւէտակե-
նաց զուակ ի Սուրբն Սիոն, զի թերես
սովաւ գտից ողորմութիւն ի բարերար Տ-
եառնէն յաւուրն յետնում, որում փառք
յաւիտեանս:

Իսկ զրութիւն սորին եղեւ ի Հոյակապ
մայրաքաղաքս Կոստանդնուպօլիս. զառաջին
Հինգ տետրն գրեաց Մելիտոն անոււ ոմն
երէց՝ աշխարհիկ, ե Հասեալ ի Թիբեք փո-
նիցաւ յաստեացս յերիտասարդական Հասակի
բարի վարութ, որոյ Տէրն ողորմեսցի, ե
ջնջեսցէ զգիր պարտեաց նորին:

Եւ յետ նորա ծեղունի մի գրիչ Եղիա
անոււ սկսաւ յլուսելին Եզրանս գրեալ յԳ
տետր ե նա փոխեցաւ աստի կենաց: Եւ
զմնացեալն գրիչ ոմն ճարտար յարուեստն
ե ոչ ի վարս, Ազարիա անոււն, գրեալ ա-
ւարտեաց ի մի լրութիւն:

Իսկ նկարող սորին, զարմանալի ե
անհաս արհեստաւորն Մարկոս, որ էր նոյն
քաղաքէն Կոստանդնուպօլսոյ, բայց յոյժ
ստասաց ե խաբուսիկ, ե իբրեւ անյազ

տգրուկ եկեր զամ. զկեանս իմ, ե ոչ ա-
սաց շատ, ըստ առակաւորն քանի Իմաստ-
նոյն:

Ձանգի սկիզբն սորին զծագրութեան
եղեւ ի ՌՃԳ Թուականիս մեծոր, ե մինչ ի
Ծժ թիւն Հազիւ աւարտեալ կարմեցաւ միան-
գամ ե յղեցաւ առ իս յերկրին Ղրիմու, ի
մայրաքաղաքն Կաֆայ, զի մեզ էր Հուստա-
ցեալ յայնժամ տեսութիւն ըրուր նահան-
գին: Եւ ի զայն ի մերս կոյս պատահամբ
ձմեռանն խոտաշունչ սառնամանեաց՝ Հան-
դիպի նաւաբկութեան ուստի աղաւաղեալ
քայքայեցաւ, ե մասն ինչ ծաղկանց եղծ-
եալ տեղեցաւ. վասն որոյ Հարկեալ միւս-
անգամ բերի ի Կոստանդնուպօլիս:

Բայց յազգմանց շարին զքաղեալ իմ ե
աղմկեալ ի խոզութիւնս մեծի Աթոռոյն
Երուսաղէմի, յորոյ սակի մնաց անխնամ
յայսմ ոչ սակաւ: Եւ ասկ ետու նորոգել
վերստին զզխաւորազոյնս խորանացն ե
զերեւելիս յայլոց ծաղկանց. բայց մնաց
ուրեք ուրեք սպի ինչ մանրատիպ ծաղկան-
ցն, զի կարի ձանձրացոյց զիս վերոյ զբը-
եալ անյազ Մարկոս՝ անցեալ զչափ ե
զՀամար որքանութեանն ծախուց, թողում
ասել զվշտակրութիւնս վեշտասան ամաց
ժամանակի. որոց ամենեցուն թողզէ Տէր
զարդանս զոր ինչ մեղան ի ամա յազահե-
լով յինչս իմ՝ գրիչքն ե ծաղկողն, ե
ողորմեսցի ըստ մեծի գթութեան իւրում
ամէն:

Եւ արդ՝ յերեսս անկեալ աղաչեմ
զերջանիկ դասս եղբարցդ սրբազանից
քանիբուն վարժապետացդ, նա ե գրոց
աշակերտեալ կորովաբիբ ե ընթերցասէր
որոցդ խոհականագունից, որք աստուա-
ծայնոյք առլցելովք շնորհիւ տեսականօք
ե զործնականօք, իբրու երկօքին թեւօք
թոռցելոց՝ երամասիրացդ աղաւեստիպ
Հեղաբարոյից, աղաչեմ կրկին ե երեքկին,
որք վայելիցէք քաղցրամաշակ ե Համեղա-
ծասք աստուածացոյ ռետնոյս քաղցրութեան,
յիշեալիք ի Ձս. զվերոյ յիշատակեալ
զբազմերախտ Հայրն իմ ըստ Հոգոյ զբաժա-
նին յիշատակի զտէր Աստուածատուր վար-
դապետն գեթամաբուն ե Հրեշտակն ի մար-
մնի սրբազան Հայրապետն Երուսաղէմի, ո-
րոյ մաքրափայլ աղաւթիւքն Փրկիչն մեր
Ձս. ձեզ ե մեզ ողորմեսցի, ե յետ աս-
տեացս ընդ երկրուսանից սրբոց վարդապե-
տացն դասեսցէ ի դասս յաջակողման ե ի
խորանն երանական ամէն:

Նա ե Հուսկ յետոյ ցյտեանեալ ե

ղոչ արժանիս յիշատակի, զՄարտիրոս վարդապետս Ղըրմացի եւ պիտակ ստաշնորդ Սք. Երուսաղէմայ, ստացող ոսկիազարդ սուրբ տառաս, յիշեցէք ի Ջս. եւ լի սրտի Ած. ողորմի ասացէք մեղաւած քարոզիկ սորին փափաքօզի, Հանդերձ մարմնաւոր ծեօզիւք եւ եղբարբք, քերքք եւ ամ. ազգայնօք, որոց անուանքն ոչ աստ զըչաւ միանաւ, այլ Հայցեմ յամէնառատ Փրկչէն Յիսուսէ Ջրիստոսէ յիւրումն զբիւլ զարութեանն Եւ որք յաղթեալք ի սիրոյ մերովս թախանձանօք միով քանի լի՛ սրտի Ած. ողորմի սսիցէք, եւ կամ շէթ մի յարտասուաց ձերոց ցօղիցէք ի նծմայարկ մերս տապան Հողապատ՝ ցօղն քաղցրութեան եւ ողորմութեան ցօղեսցի ի ձեզ յաւուրն այցելութեան յորտընդոստ եղանակս Համաքայն ժամու գարնանայնոյ յայնչ, որ իբրեւ զանձերն էջ յիմանալիզ զգմն, եւ նորին օթնալիբ աւրՀնութեամբն զալարաքայն զուարեացեալք անեալք ատորացեալք կասեալք եւ պարզեալք, եւ ի պակս տարոյն աւրՀնեալք եւ յիշտմարանս Աստուծոյն երկնաւորի արժանասջիբ Հաւաքիլ ըստ իւրն Հանձոյցք. ամէն:

Այլ եւ յիշեցէք ի Ջս. զտէր Յովաննէս ՀեղաՀոգի եւ առաքինասէր քահանայն, մականուն կոչեցեալն Երկան, զի քազում աշխատութիւնս կրեաց ի սրբազրելն սորին եւ ի վերակացութիւնզ զըչաց եւ ծաղկոզի, նսսե զթղթի պատրաստելն եւ քնսւից ինամարկութիւնն մեծաւ շանիւ, որոյ Տէրն ողորմեսցի եւ լիցի վարձահատոյց ըստ վաստակոց իւրոց, եւ ջնջեսցէ զգիր պարտեաց նորին՝ ողորմութեամբ մեծաւ ամէն:

Այլ եւ յիշեսջիք ի Տէր զձեռնասուն աշակերտն իմ, զԱստուածատուր սարկաւազն Ըստասօլացի, զի նա եւ քազում աշխատեալ է ի սպաս զորին, զի այս երեք տաս ամ է որ առ իս է յաշակերտութիւն զրոց սրբոց, եւ վասն սորա Հայցեմ ի շնորՀաքաշխ Աըբրոյ Հոգոյն, զի Հեղցէ ի սա առաստապէզ զշնորՀս եւ զիմաստութիւն՝ Հասուցանելով ի կատարելութիւն՝ զիտութեան եւ աստիճանի, եւ յետ աստեացս ընդ օթնանասիցն ընտրելոց աշակերտացն զաստուրեսցէ ամէն:

Ընդ նմին եւ զՅովաննէս միակեց զպիր, որ այժմ ի սպասու կայ մեզ մտերմաբար ծառայելով: Եւ զՈսկան տնտես, որ ի տիս մանկութեան իւրոյ թողեալ զվայելչութիւն ներկայիս, անՀանգիստ տընութեամբ աշխատի զորն իսՀարարութեան, եւ մեզ ի ժամու պատրաստէ զՀարկաւոր կերակրիկն: Որոց

ամենեցուն լիցի այցելութիւն յամենայնամ Տեառնէ մերմէ յայնմ որ առատ է ի տուրս քարեաց:

Կատարեցաւ աստուածաշունչ Կտակքս յամի կենարարին մերոյ Հազար եւ վեց Հարիւր օթնանասնի, եւ յաքթթականս տումարի Հազար եւ Հարիւր եւ տասն եւ յընի, ի Հայրապետութեան Սրբոյ Աթոռոյն էջմիածնի տեսուն Յակոբայ Ձուղայեցոյ ամ. Հայոց Կաթողիկոսի, որոյ մաքուր սրբութեանն եւ անտանելի ճշունութեանն, անքաւ Հեզութեանն եւ շնաշխարհիկ վարուցն եւ առաքինութեան Հրեշտակ զարմանան ոչ միայն մարդիկը: Եւ յստաշնորդութեան Սք. Երուսաղէմայ՝ իմոյս նուաստութեան եւ աղկազկի. զի ա՛ւս այս ամ չորրորդումն է որ Հրաւիրեցաք յայս կոչումս: Իսկ ի թագաւորութեան իմայնիական տոճմին սուլթան Մահմետին որդոյ Իպրահիմին, որոյ ԻՌ ամ է յորմէՀեոէ նստեալ է ի զահն կայսերականի, եւ յայս ամ ի առին զմի քաղաքն Կրիտէս Կըզգոյն՝ Գաստուր կոչեցեալն ամրոց:

Ձանգի յետ ԻՌ ամաց տալոյն պատերազմ յնդ Ձոսանկան յըեաց թագաւորն թուրքաց վերոյ յիշեցեալ սուլթան Մահմէտն՝ զԱՀ՝ մէտ փաշայ վէզիրն, Ձեօփրուուր կոչեցեալն ըստ իւրեանց լեզուին, անթիւ Կեծեւլազօրօք, կացեալ ի կղզոջն յամս չորս, եւ տայր պատերազմ ընդ Վէնէտիկու պարտնին, եւ այնքան աստուկացաւ մարտն մինչ զի անյոյս մնային ազգն թուրքաց եւ անդ ջնջիլ բոլոր ազգին մտաբերէին անՀրաժեշտ կորստեամբ, քանզի աւելի քան զՀարիւր թիւր մարդ անկաւ կոտորածէ տանկացն: Յետոյ նենգութեամբ զործեալ զարան Ձոսանցու թագաւորի պղծոյն եկն ի վերայ սոցա զՃ կտոր մեծամեծ նաւերովք սկսաւ երկոցունցն տալ պատերազմ եւ ինքն տիրել բոլոր կղզոյն. յորտ սակի տարակուսան Վէնէտիկցին ետ զքաղաքն թուրքին՝ արարեալ Հաշտութիւն, իւրաքանչիւր ոք զարձան ի տեղիս իւրեանց: Թայց մեզ քրիստոսադասանիցս սուգ անՀնարին թողին սակս անթիւ եկեղեցեացն ամամս եւ անբմանն, զումամս մզկիթս եւ զայլս քաղանիս եւ տունս քնակութեան իւրեանց արարեալ բերկրին անպատմելի խնդութեամբ: Իսկ Ջրիստոսին իսփանեցաւ փառաբանութեանս պաշտօնն եւ անյայտացաւ. մանաւանդ թէ եպիսեալ այպանի աւրՀնեալ անուն նորին յազգացն անՀաւատից: Փառք ներողութեան երկայնամտութեան իւրոյ: Եւ այս ամ. զայ ի վերայ մեր վասն ծովացեալ եւ անթիւ մեղանաց մերոց,

և նմա միշտ փառք:

Արդ ժամանեալ սորին յաւարտ,
Թուականս ոչ զոյգ ալ զիպա Ֆարտ,
Հազար Հարիւր տասն է զումարտ,
և յինն աւել՝ ամիսըն մարտ:

Մամր յիշատակագրութիւնց պատկերահամ Մարկոսի:

1.- Բզ. 504թ և 505ա, Եւսեբիոսի և Կարպիանոսի բռնած Թերթերուն վրայ. " Մարտիրոս Վարդապետն զՍբ. Գիրքս բարով վայելիլ". * ՁՄարկոս պատկերահանս յիշեցիք ի Տէր":

2.- Թուրք 608թ, Եկարին Ենթքիւ, կապոյտ թանաքով. * Սբ. Աւետարանիչը Ջի. Յոհաննէս, յիշեայ զմեզօք զատածեալ Մար-

կոս պատկերահանս ի Տէր. ամէն":

Յիշատակարամ կազմողի.- 7144

Արծաթեայ փակարանին վրայ, որ այժմ կը պակսի. ուստի կ'առնենք Մեսրոպ Արք. Նշանեանի 1886 թուին կազմած Յուցակէն (էջ 820).- " Ոսկեծաղիկ սուրբ Աստուածաշունչս, որ յիշատակ է Ղրիմեցի Մարտիրոս [ի] մեծի վարդապետին, արծաթապատ յօրինեցի ի յիշատակ Գրիգոր պատրիարզ վարդապետին, ծնողաց և Համայն զարմից իւրոց. յԵրուսաղէմ ի մէջ Սրբոյն Յակոբայ երկնամասն տաճարին, ի Թվ. ՌՃՂԳ. յիշեցէք ի Տէր, ամէն":- Հմմտ. Նոյն արծաթեայ փակարանին լուսանկարը՝ քաշուած 1861-1862ի ընթացքին, Օր. Սիրարփի Տէր Ներսէսեանի ձեռքով:

2562 - 7

ԱԻԵՏԱՐԱՆ.- 77

(ԺԱ Դօք)

ԵԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ.-

Մաւալ 89X29X10: Թերթք 2+218, Ի՛ւ պրակներու վրայ բաժնուած անհաւասար թիւով: Հանգամանք բաւական լաւ. նորոգութիւն կրած. կան անմաքոր թերթեր: Մազաղաթ թանձր: Գրութիւն՝ սեւ մեկնով, երկսիւն, 21 տող: Անկիւնաւոր մեծ երկաթազիր: Համառօտագրութիւնք սովորական: Կաշեկազմ տախտակեայ դրոշմազարդ, արծաթապատ, ոսկեջրուած, առաջին կողքին խաչելուութիւն. Սբ. Աստուածածին. և Սբ. Յովհաննէս, չորս անկիւններուն չորս Աւետարանիչներու խորհրդանշանները՝ կլոր շրջանակներու մէջ: Վերջին կողքին Ջրիստոս յարուցեալ, չորս անկիւններուն Աւետարանիչները՝ դարձեալ կլոր շրջանակներու մէջ, կուրծքին պահպանակ, երկաթազիր արձանագրութիւններով, չորս կապիչներէն կը մնայ մէկը միայն: Կոնակի մասը կոտորուած բաժնուած է, կարօտ նորոգութեան:

ՐՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.-

Բզ. Ա, մազաղաթեայ պահպանակ, մասն երկաթազիր Աւետարանի:
Բզ. Բ 1, ճերմակ թուղթ.- Յիշատա-

կագրութիւն նորոգողի:

Բզ. Բ 2, դատարկ
Բզ. 1-2, Կանոնի չորս տախտակներ, Ա-Ե: Խորանագարդք արուեստով նախնական և ոչ նուրբ.- Համեմատէ թ. 1924, 2. Հատոր, էջ 898:

Բզ. 8ա.- Խորանագարդ երեք սիւներով, երկու վարագոյրներով:

Բզ. 8բ, բազմագոյն կամարի մը ներքեւ չորս Աւետարանիչներ ոտքի վրայ:

Բզ. 4ա 1, աւելի փոքր չափով դեղնորակ թուղթ, բուրգիւր.- Գիրք ծընընդեան Յի. Ջի. որդոյ Դաւթի...:

Բզ. 6ա 1.- Սրբոյ է. ծնցի որդի և կոչեցեան զանուն նորա Յս. ...:

Բզ. 65ա.- Աւետարան Ըստ Մարկոսի:

Բզ. 66, նոր թուղթ, գրչութիւն ըլլողի, կարմիր սկզբնատողերով և գլխատառերով:

Բզ. 76-78, նոր թուղթ և գրչութիւն, մասամբ կամ ամբողջովին արմատէն կտրուած:

Բզ. 101բ 2.- ... Եւ ոչ ումեք ինչ ասացին, զի էրկնչէին:

Բզ. 102ա 1.- Աւետարան Ըստ Ղուգայ:

Քզ. 118-119, նոր թուղթ եւ գրչու-
թիւն: Նոյնպէս թուղթ 188, 162:

Քզ. 164ա.- Աւետարան Ըստ Յովհանն-
նու:

Քզ. 185, նոր թուղթ եւ գրչութիւն:
Նոյնպէս թղ. 188:

Քզ. 211բ Զ.- ... Եւ ոչ աշխարհու
բաւական էր տանել զգիրսն զոր եթե գրել
եին:

Քզ. 212, զհղին թուղթ, առաջին երե-
սին՝ յիշատակարաններ, երկրորդը՝ զա-
տարկ:

Քզ. 216, մազադաթեայ պահպանակ, մա-
սն երկաթագիր Աւետարանի:

Յիշատակագրութիւնք.

Ա.- Գրչի.

1.- Քզ. 101բ Զ, ստորոտը, երկաթա-
գիր.- Ջգրողս յիշնջէր ի Զս.:

2.- Քզ. 211բ Զ, ստորոտը, 'երկաթա-
գիր.- Փառք ամենասուրբ Երրորդութեանն
յաժմ եւ միշտ եւ յաւիտենս ամէն [Այս]-
չափ. յաջորդ թերթը մոր թուղթ է]:

Բ.- Գմոզ Թաւաքալի.-

Քզ. Ես, ստորին լուսանցքին, գու-
նաթափ թանաքով, բոլորգիր նորակերպ.-
Ես Թաւաքալս որ գնեցի զՍք. Աւետարանս ի
յայնազգեաց յիշատակ ինձ եւ ծնաւոյց ի-
մոց, Հաւր իմ Յակոբին, եւ մաւրս իմ Նո-
րային, եւ յորդոյն իմ Աբրահամիսին, եւ
զստերաց իմոց Այմեխէթին, եւ Հանկուցեալ
ի Զս. Սայմեխէթին, եւ կողակցին իմ Եամա
խաթունին, փոխեցնոյն ի Զս., միով Տէր
ողորմեայիս, եւ ձեզ յիշողացող ողորմեացէ
Զս, Ած. ամէն ամէն:

Գ.- Նորոգող Յովհաննու Երեցի.- 1677

Քզ. 212ա 1, բոլորգիր.- Դարձեալ
նորոգեցաւ Աւետարանս ձեռամբ աներկիւզ
եւ անհաւատ Յովանէս իրիցուս, որ ըստուգ
էրէցա յայս ամս, ի Քվին Ռիճ: Յիշատակ

Դարձեալ յիշեցէր յաղաթս ձեր զվար-
պետ Բրահմշայն, եւ զկողակիցն իւր
որ եղն կամակից նորոգման սորա:

Դարձեալ կրկին անգամ յիշեցէր ի
մաթրափայլ յաղաթս ձեր զվերջին նորոգող
սորա, զիտջա Առաքելն, եւ զեղբայրն իւր
զՍքանդարն, եւ զամ. արեան մերձաւորքն
իւր, յիշեցէր ի Զս. Ած., եւ որք յիշեն
եւ նոթա յիշեալք լիցին առ Զս. Ած.ն
ամէն:

Քզ. 212ա 2, վերը, բոլորգիր տար-
բեր.- Յիշատակ է Սք. Աւետարանս տապազ
Ըսքանտարենց եւ իւր որդուցն ուստայ
Ապտուն եւ իւր որդուցն, զի սոցա յիշա-
տակն է այս, եւ այլ որ չունի իշխանու-
թիւն տիրելոյ ամա, զի սոցա Հայրենացն
է. Ած. լուսաւորէ զիրեանց ծնողաց Հո-
գին. ամէն:

Դ.- Նորոգել տուող խոճայ Աստուա-
ծատուրի.- 1656

1.- Քզ. Բ 1, մէջտեղը, նոտր շեղա-
գիր.- Յիշեցէր ի Զս. եւ Ած. ողորմի ա-
սացէք չուխաշի որդի խոճա Աստուածատու-
րին, եւ իւր Հարսն Անայ խաթուն, որք
տեսին սքանչելիս ի Սք. Աւետարանէս ի
վերայ պատանեկի իւրեանց՝ զեռարոյս Պազ-
տասարին, որ արգահաս ազատեաց զինքն ի
ցաւոցն իւրոց. եւ եւս յիշեցէր եւ Ած.
ողորմի ասացէք խոճա Սարգսին, որ տարա-
ժամ պանտըրտութեամբ փոխեցաւ ի Զս. ի
Պուրսայ քաղաքին, Ած. լուսաւորէ զիր
Հոգին, եւ զյիշատակն իւր ի խաղաղութեան
պահեցէ ընդ երկայն աւուրս ամէն. Քվին
Ռիճ:

Որ ետուր նորոգել զՍք. Աւետարանըս.
ով որ կարգաւ, եւ տանի ի պէսպէս ցոց
բժըշկութիւն, եւ Ած. ողորմի ասացէք
չուխաչու ողորուն՝ խոճա Աստուածատուրին,
եւ իւր Հարսին Անայ խաթունին:

2.- Քզ. 212ա 2, վարը, նոտր շեղա-
գիր.- Յիշատակ է Սք. Աւետարանիս վերջին
նորոգել տէր Առաքելին, ձեռամբ, խոճա,
չուխաչու ողորուն Աստուածատուրին, եւ
ուր եղբորորուն խոճա Սարգսին, որ ի
Պուրսայ քաղաքն փոխեցո առ Ած. զարիպուկ:
Ով որ կարգաւ, եւ տանէ ի պէսպէս ցաւոց
առողջութիւն, ասացէք Ած. ողորմի իւր-
եանց Հոգոյն, ամէն: Քվին Ռիճ, ամէն ա-
սացէք:

Ե.- Գրիգոր Պատրիարքի.- 1788

Կուրծքի արծաթեայ պահպանակին վրայ,
Հինգ բոլորակներու մէջ, երկաթագիր,
վերջին կտորին կէսը կը պակսի.- Հրաշա-
գործ Սք. Աւետարանս արծաթապատ զարդարե-
ցաւ ի յիշատակ, ի փրկութիւն եւ ի բը-
ժշկութիւն Հոգոյ եւ մարմնոյ Հանայ Յով-
հաննէս աթոռակալ վարդապետին եւ նպիսկո-
պոսին Երուսաղէմացոյ, Հոգաբարձութեամբ
Գրիգոր Պատրիարք Վարդապետին: Յիշեցէր
եւ Ած. ողորմի ասացէք վերգրելոցս եւ
ծրնողաց սոցա եւ ամ. ողորմութիւն տուո-

դաց, եւ աշխատողաց յերուսղէմ ի Սուրբըն Ծակոր, Թվին ՌՃՁԲ: Յիշեցէք եւ զՄարտի-

րոս [Եպիսկո ?]պոս Երուսղէմայ [շարունակութիւնը կորսուած]:

2563 - 8

ԱԽԵՏԱՐԱՆ.- 78

[Սխո?]

ՉԻԱ=1272

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ.-

Մաւալ 81X28X3: Թերթթ 884, Հանգամանք ջատ լաւ, մեծ խնամքով նորոգուած: Մազաղաթ ընտիր, Գրիչ՝ Աւետիք Քահանայ: Գրութիւն՝ Հատուածներու սկզբնատողերը եւ զլիստատոները ոսկեգոյն երկաթագիր, մընացնալը սեւ մեկնաով, երկսիւն, 17 տող: Բոլորգիր պատուական: Համառօտագրութիւնք սովորական: Գունաւոր ոսկեխառն նըքագեղ զարդագիր եւ լուսանցազարդ իւրաքանչիւր Հատուածի սկիզբը: Նըքագիծ ինքնատիպ լուսանցանկարթ, Մատթէոսի 24, Մարկոսի 14, Ղուկասու 42, Յովհաննու 10: Խորանազարդ իւր սարօթ, 18ա, 116ա, 181ա, 287ա: Նկարք՝

- 1.- Սուրբն Մաթեոս, Թղ. 17բ
- 2.- Ծնունդ Տեառն, 21ա
- 8.- Մկրտութիւն Տեառն, 26ա
- 4.- Այլակերպութիւն Տեառն, 68ա
- 5.- Վերջին Ընթրիք, 166ա
- 6.- Իւղաքեր Կանայք, 176ա
- 7.- Սբ. Ղուկաս եւ Թեոփիլէ, 180բ
- 8.- Աւետումն Գարրիէլի, 184ա
- 9.- Ընծայումն քառասնօրեայ ի տաճարն, 191ա
- 10.- Ս. Յոհաննէս Աստուածաբան եւ Պրիլոռ, 286բ
- 11.- Յարութիւն Ղազարոս, 888ա
- 12.- Յս. Քս. լուանայ զօտս աշակերտացն իւրոց, 840բ
- 18.- Գալուստ Հոգւոյն Սրբոյ, 849ա
- 14.- Խաչելութիւն Տեառն, 862բ
- 15.- Յուցանէ Յս. Քս. զկողն Թումաի, 868ա
- 16.- Քրիստոս քաղմեալ, եւ արքայական ընտանիքը, 88ա

Կաշեկազմ տախտակեայ ոսկեպատ, առաջին երեսին՝ խաչելութիւն, վերջին երեսին՝ Աստուածամայրը ոտքի վրայ, մանուկ Յի-

սուսը զրկին, շրջապատուած Թեւատարած Հրեշտակներով: Կուրծքի փակարանին վրայ չորս Աւետարանիչներ եւ արձանագրութիւն: Ունի երեք փակիչներ: Պատուիրատու Կեռան Քազուհի:

ՐՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.-

- Քղ. 1, դատարկ Թուղթ:
- Քղ. 2, 8, մազաղաթ:
- Քղ. 2ա, դատարկ:
- Քղ. 2բ, բոլորգիր տարբեր.- Աւետարանացոյ բեմիմ ըմբեմւոյ:
- Քղ. 8բ 2.- Յիշատակագրութիւմ Գրչի.- Աստուածամերձ Հարթ, զորդի սորա Թողութիւն մեղաց խնդրեցէք:
- Քղ. 4, դատարկ Թուղթ: Դատարկ էջեր, 6ա, 6բ, 7ա, 8բ, 9ա, 10բ, 11ա, 12բ, 18ա, 14բ, 15ա, 16բ, 17ա:
- Քղ. 6բ, Եւսեբիոս, 6ա, Կարպիանոս: Կանոնի Հրաշագեղ տախտակներ, Թղ. 7բ, 8ա, 9բ, 10ա, 11բ, 12ա, 13բ, 14ա:
- Քղ. 15բ, 16ա, 20ա, ոսկի յատակի վրայ կապոյտ երկաթագիր:
- Քղ. 18ա.- Աւետարան Ըստ Մատթեոսի.- Գիրք ծընընդհան 8ի. Քի. որդւոյ Դաւթի՝ որդւոյ...:
- Քղ. 58ա 2.- Դըշխոյն, լուսանցքին՝ արքայակինն:
- Քղ. 104բ 1.- անկանիցին, լուսանցքին՝ կորընչիցին:
- Քղ. 114ա 2.- 114բ, դատարկ:
- Քղ. 115, արմատէն կտրուած տարուած, նկար Մարկոս Աւետարանչի:
- Քղ. 116ա.- Աւետարան Ըստ Մարկոսի.- Սկիզբն Աւետարանի 8ի. Քի. ...:
- Քղ. 168, զրչութիւն քիչ մը տարբեր:
- Քղ. 167բ 1.- Հարկ, լուսանցքին՝ զզլիսահարկն:

Քղ. 168ա Զ.- անցցէ ի նմանէ բաժա-
կո, լուսանցքի վրայ՝ ժամմ:

Քղ. 177ա Զ.- Յարուցեալ Յս. ընդ
առաւատս միաշարթուն, երեւցաւ նախ
Մարիամու Մազարդեանացոյ, յորմէ՛ նճան
զեւթն զնւն, եւ նորա գնացեալ պատմեաց
այնոցիկ, որ ընդ նմայն էին մինչ զգա-
յին եւ լային: Իսկ նոցա լուեալ եթէ
կենդանի է եւ երեւցաւ նոցա ո՛չ Հաւա-
տացին:

Յետ այսորիկ երկուց ոմանց երեւցաւ
այլ կերպարանով, մինչդեռ երթային յազա-
րակ ուրեմն: Նոցա լուեալ զնացին եւ
պատմեցին այլոցն, սակայն եւ ո՛չ նոքա
Հաւատացին:

Իսկ յետ այսորիկ մինչդեռ քազմեալ
էին մետասանթն երկեւցաւ նոցա, եւ նա-
խատեաց զանՀաւատութիւնն նոցա եւ զխտա-
սրտութիւնն, զի տեսնամբն իւրեանց յա-
րուցելոյն ո՛չ Հաւատացին:

Եւ ապա ասէ ցեոսա - Գնացէք այսու-
Հետեւ ընդ ամենայն աշխարհ, քարոզեցէք
զաւետարանն ընդ ամենայն տեղիս, որ Հա-
ւատասցէ՛ եւ մկրտիցի՛ կեցցէ, իսկ որ ոչ
Հաւատասցէ՛ դատապարտեսցի:

Եւ նշանք Հաւատացելոցն այս զկնի
երթայցէ. զի անուամբ իմով զեւք ելանի-
ցեն, եւ լեզուս խաւսեսցին, եւ զաւճըս
կալցին, եւ եթէ մահու զեղս արքցեն՝ ո՛չ
մեղիցէ նոցա. ի վերայ Հիւանդաց ձեռս
դիցեն, եւ բժշկեցն զեոսա:

Արդ Տէրն յետ խաւսելոյն ընդ նոսա՝
վերացաւ յերկինս եւ նստաւ ընդ աջմէ Աս-
տուծոյ:

Իսկ նոցա գնացեալ քարոզէին ամենե-
ցուն՝ Տեառն զործակցութեամբ, զքանն
Հաստատէին ի ձեռն նըշանացն զոր ասնէին.-
Նմտ.- բուրովիկն տարբեր թարգմանութիւն
մբ, Սիոն, 1961, էջ 841:

Քղ. 178բ, դատարկ: Նոյնպէս 179բ,
եւ 180ա:

Քղ. 181ա.- Աւետարամ Շտո Ղուկայ.-
Ջանգի բազումք յաւժարեցին վերըտիին
կարգիլ...:

Քղ. 211ա Զ.-... որ հաժողերծեսցէ զճա-
նապարհ քո. լուսանցքին՝ յարդար:

Քղ. 249ա Զ.- Լուսանցքին նկարուած
երկու դրամ մին արծաթ, միւսը ոսկի, ար-
ծաթին վրայ՝ երկաթագիր՝ * Լ, Արթայ *,
ոսկիին վրայ՝ * ոս, Լեոն, Ա *:

Քղ. 284. Համբարձման նկարը կը պակ-
սի:

Քղ. 286բ- 286ա, դատարկ:
Քղ. 287ա.- Աւետարամ Շտո Յովհաննու
... Ի սկզբանէ էր բանն...:

Քղ. 809ա Զ.-...գի Հաւատասջիք յայն
որ առաքեաց զիս.- Լուսանցքին՝ զոր ա-
ռաքեաց զա:

Մեծ յիշատակարամ Գրչի.- 1272

Քղ. 872բ 1.- Փառք ամենասուրբ
Երրորդութեանն յամենայն յարարածոց
յերկնաւորաց եւ յերկրաւորաց, յիմանա-
լեաց եւ ի զգալեաց, եւ յամենայն շնչոց,
եւ յամենայն եղականաց, ի գոյից եւ յու-
գոյից:

Որ զձանր՝ եւ զմթացուցիչ խորՀուրդս
ի բաց եղեալ՝ ոչ յայլ ինչ քան յլև., եւ
յաստուածայինսն խոկալ փութան բանիք եւ
արդեամբ, երկրորդ զստորեւ կացեալս
վարկանելով, զի ցըղզիլիք են եւ անկա-
յունք, եւ վերնոյն եւ արդարեւ անապա-
կանին քաղձան բարոյոյ, ի զլուիս ըստ ի-
մաստնոյն զակն ոգւոյն ունելով, յորմէ՛
ամենայն, եւ որով ամենայն:

Ջոր է տեսնել յերանուՀիս այս բամ-
բիշ, ի մաքուր արիորդ փեսային սուրբ,
ի թագուՀին Կեռան, որ զյոյով մասունս
առաքինութեան կրելով յինքեան, փութա
այլս ի վերայ այլոց բարոյի, զի Հա-
մայնիւքն պակս բիրակնեա յարինեսցէ
ինքեան, եւ զանկապուտն թագ ի վերայ այ-
սր կալցի, զի ամենագեղ վայելչութեամբ
Հանձնացի Որդւոյն Աստուծոյ:

Սոյն վասն ողջախոհ մուլութեամբ վա-
րէր, եւ Հանապազար կանխէր յերկրպագու-
թիւն Տեառն, ի զիրկս մաւր մեր Սիովի
Սրբոյ, ունկն զնէր զրոց սրբոց, եւ լու-
եալ զբանն եթէ՛ Երանի՛ որ ունիցի զաակ
ի Սիովն: Եւ ելեալ ի խնդիր իմոյ նուսա-
տութեանս՝ Աւետեց գրչի, յանձն արարեալ
ստանալ զճժժարիտ զաակս զայս, զոր Հո-
զին Սուրբ թնչադրեալ ի շրթունս երանեալ
Աւետարանացն, իաւսել վասն տնարէնու-
թեան մարդացելոյ Բանին, նաեւ վասն փըր-
կաւետ վարդապետութեան նորին Որդւոյն
Աստուծոյ, եւ նշանաց եւ արուեստից, զոր
առ մերս քնութիւն, եւ վասն իջման Հոգ-
ւոյն Սրբոյ, առ ընտրեալ զասս առաքելո-
ցն, եւ զեոսին առաքեալ քարոզս եւ աւե-
տարանիս տիեզերաց, եւ տալ իշխանութիւն
որոց կամիցին:

Եւ իմ յանկ Հանեալ զաս, ետ ի ձեռն
այլում Հմուտ եւ յարգի յարՀեստ զըչութ-

հան՝ զարդարել զսա խորանաւք եւ ծաղկաւետ վայելչութեամբ եւ ոսկիատիպ պայծառութեամբ, եւ ետ ի վասն որ կոչի Ակննր:

Վասն որոյ աղաչեմ զտեսողսդ եւ զվայելողսդ սորա՝ յիշել ստի մտաւք զերիցս երանեալ թագուհին զԿեոանն, զարմիւք իւրովք կենդանեաք յաղաւթս ձեր, զի երկար ժամանակաւ ուղղեցէ զթագուհիւն իւր, եւ յետ ելից աստի՝ թազակից եւ պսակակից լիցի սուրբ թագուհեացն: Յիշեսջիք եւ զառ ի Քս. Հանկուցեալն զՀայրն իւր զՀեթում, Հանգիստ եւ ողորմութիւն շնորհելով նմա ի Տեառնէ, եւ ընդ աջեայն իւր զասեցէ, եւ կենդանեացն իւր՝ աջովն իւրով պաշտպանեացէ, փրկելով յարժանահաս նեղչաց եւ վշտաց, անդորր տալով ամպրոպ խոյութեան կուտակեալ ալեացս յորում շրջապատեալ սուգանիմք:

Արդ գրեցաւ սա ի թուականութեանս Հայկազնեա տումարիս, ի ՁԻԱ, ի թագաւորութեան Հայոց Լեւոնի սատուածասիրի, եւ ի Հայրապետութեան սեռան Յակովբայ:

Յիշել այժմ աղաչեմ առաջի զնման անբարտ գառինն Քի. զամենայն քարեծնութեամբ զարդարող զարքայն Հայոց զԼեւոն, զկենաց կցորդ եւ կքանից ընկեր, նաեւ թագակից երանուհոյն Կեոանի, երկար ժամանակաւք աշխարհավարել զթագաւորութիւնն իւր արդար իրաւամբք, եւ յետ աստի ելից ընկալցի զերկանային խորանսն թագաւորել ի նմա ընդ սրբոց թագաւորացն Քեոզոսի եւ Կոստանդիանոսի, նաեւ զԺիրանածին որդեակն իւրեանց զՀեթում, զի Հասցէ ի չափ Հասակի կատարման, եւ աջն աստուածային ի վերայ սորա լիցի, ի նստել ի տան, եւ ի գնալ ի ճանապարհի, ի նշնել եւ ի յառնել, ժառանգել զթագն Հայրենի, եւ կեցեալ ըստ արիւնացն Աստուծոյ՝ վարժեալ զբոլք աստուածայնովք, եւ զինուք սպառազինաւք, յաղթող լինել ի վերայ թշնամեաց խաչին Քրիստոսի:

Ընդ յիշտակելովքս աղաչեմ յիշել առաջի Քի. Այ. զանդրանիկ զուստր սոցա՝ Ջապիլ, զփոխեալն ի Քս., զի ընկալցի զսա ի կենդանեացն իւր խորանս՝ պայծառացեալ լպտերաւք մուծանել յառաջաստն ընդ իմաստուն կուսանսն:

Դարձեալ յիշման արժանի անիցէք եւ զերկորդ թոյր սորա՝ զԱպիլ, ըզննջեցեալն ի Քս., զի փոխանակ զգալի վայելմանցս ունայնութեան, զոր ոչ վայելեաց, վասն

զի ստընդիս զուով. ընկալցի զանթառամ փառաց պսակն, եւ զգոստն անկողպուտ՝ ըզլոյսն մշտընջնաւոր:

Ննդրելով եւ զայս եւս ի Քրիստոսն՝ յառատածիր պարգեատուէն, զի զկենդանիք որ սոցին՝ պահեցէ անվրդով, նաեւ երկար ժամանակաւք տալ զսա Հար եւ մաւրն լընուլ եւ փարատել զուզ տրամութեանն, զոր ի ծննդոց իւրեանց ընկալան:

Վասն որոյ աղաչեմ զզս սրբազանից՝ զվայելողք որոյ Աւետարանիս, նաեւ ըզպատահեալ տեսողք սորա, առնուլ ի մտի զբան վարդապետութեանն Քի. որ ասէ. Նընդրեցէք եւ տացի ձեզ, Հայոցեցէք եւ զըտջիք: Ննդրեցէք ի յԱստուծոյ՝ ի Հասարակաց կենաց տուողէն, զի զղեարքոյս որդեակն՝ զկոչեցեալն Քորոս, զմխիթարութեան որդին, որ այժմ տուեալ եղիս պարգեք աստուածային, առնուլ զՀասակ երիտասարդական, եւ Հասանել մինչեւ ի խորին ծերութիւն, զարութեամբ Հզարին զարացեալ, եւ ստաւել քան զառուել մեծացեալ, լնուլ զտեղ նախնոյն իւրոյ զմեծն Քորոսի, ընդարձակել զաշխարհս Հայոց, առնուլ զվրէժս քրիստոնէից ի քաննասարա, նկուն լիցին ի սրոյ դորա ընկալեալք ի յԵզպտոս, այնպէս փառաւոր լիցի յաստուածայնուստ յաշխարհի, իբր զարեգակն ծագեալ նուազեցուցանել զլոյս ճրագաց:

Աղաթս ձիզս մատուցանել առ Ած. մանաւաղ յիշմամք եւ սրտահառաջ ողբով յիշել զաղբերոյ յորդապան, զմայրն իմաստութեան, զերախտաւորն Հայաստանեացս, զարքայն Հեթում, որով սոքայոս յառաջ ասեան. զի այնչափ սիրեաց զքրիստոնեայս եւ զկեդեցիս Հայաստանեաց մնալ Հաստատուն, մինչ զի զանձն իւր եզ ի մահ ըսզում անգամ. կեցեալ սորա քարեպաշտութեամբ, եւ ուղղութեամբ թագաւորութեանն, կատարեալ զընթացս իւր փոխեցաւ ի Քս., տացէ սմա Ած. փոխանակ անցականիս զանանց թագաւորութիւնն, ասելով սմա՝ Ծառայ քարի եւ Հաւատարիմ, եկ մուտ յուրախութիւն Տեառն քո, լիցի սա թագակից եւ պսակակից սրբոց թագաւորացն, վայելել եւ թագաւորել յերկնային քաղաքն ի վերինն Երուսաղէմ:

Չողորմածն, զՀեգանազն, քարէբարոյ, զաղքատասէրն, զբազմաբաշխն, զլլցեալն ամենայն քարութեամբ, զճշմարիտ ժտանզն Հայաստան աշխարհիս, Ջապիլ թագուհի ըզհանկուցեալն ի Քս. յիշեցէք յաղաւթս մաքուրս, զի եւ սա ըսզում Հոգեբարութե-

եամբ նախանամեաց զաշխարհս նաե զկեկե-
 ղեցիս եւ զվանաւրեայս. Եւ ի վերա ամե-
 նայն բարեացն զոր զործեաց՝ յաւել եւ
 զայս, զի ետ Հայաստան աշխարհիս ժառանգ,
 զի ոչ շրջեցաք անտիրուես, եւ կամ վա-
 րատեալս, այլ զքնակութիւնս մեր կալաք.
 տացէ մաւ Ած. սեփականն Հայրենիք զըրախ-
 տն եղեմական՝ զուարճանալ եւ բարգաւաճիլ
 ընդ Հեղինեանսն եւ ընդ այլ սրբոց թա-
 զուհեացն:

Երբեւ աղաչեմ ի միշտ զենեալ եւ ան-
 մահ կենդանուցն զենումն՝ զմեծ զարակա-
 նն Աի., զթաջ սպառազնէս, զարիւն ողջա-
 միտ, զզեղաղէշն քաջակորով, զարեամբ նա-
 Հատակեալն զԹորոս՝ որդի սոցիւն, որ սրա-
 խողող եղեալ ի Մառի. վասն զի մեծ եւ
 անպատմելի ոճիրս զործեաց յանաւրիւնացն
 զարս, ընդ որս մախացալ, սրախոց եւ
 կտտամահ արարիւն՝ յոլով նիզակակցաք
 Համադէիւք նորին, որո յիշատակն աւրՀ-
 նութեամբ, անուռ նորա ի զպրութիւն
 կենաց զբնացի Աի անսուրբ եւ ամբարիշտ
 ձեռաք նուիրեցաւ ընդունելի պատարագ
 Այ. Հաւր ի Հոռ անուշից, ի վերայ խաչին
 սեղանոյ, յորս Հաճեացի Տէր իբր յԱբե-
 լին, ի Նոյին եւ յԱբրահամուռն, քուրբա-
 պտուղ զՈՒ, այս, ամէն:

Որ թէպէտ եւ Հաճոյ զուա Այ. սակա
 աւուրքք, եւ կատարեալ քան զբազմամեայ-
 սն, զի ցանկալի էր Տեառն անձն նորա,
 վասն այնր ի միշտ մեղաւորացս փոխեցաւ
 անաղաւտ լպպտեալաք, զի մի մոռայ ինչ
 նսնմութեան զճանչն նշողից նորա մղտա-
 ցուցէ: Եւ այժմ թագապնեալ ընդ Համա-
 սեռսն ինքեան զեղապարէ զեռահիւսակն
 նուազ երիցն եւ միոյ Տեառն մատուցանէ,
 սփոփութիւն իւրայոցն անմխիթար սրտից՝
 խնդրելով զերեաց զարե, կապիւղս արեա-
 կումն, կորուսելոց զիւտ, վարատելոցս եւ
 աստանդելոցս կարգուրումն եւ խաղաղու-
 թիւն:

Ընթերցողք այսմ մատեան աստուածաբան
 Աւետարանին՝ զսոյնս քառնալ ի ձեռս,
 խնդրել ի Բրիտանոսէ՝ միջնորդութեամբ սո-
 րին, զի միշտ զազուտն մեր, եւ զհաճոյ-
 սն իւր, տնաւորինեցէ թագաւորութեանս
 մեր, ներել եւ անխակալ լինել յանցանաց
 մերոց, եւ մի՛ ըստ մեղս մեր տալ մեզ,
 այլ ի մեղս եւ յանարեւոթիւնս վերա-
 կացու իւրագինն նառայիցս լինի, եւ յիշո-
 զացոլ եւ յիշելոցս Տէր ողորմեսցի:

Այլ եւ զեղիկէիս զԱւետիս զրիչ յի-
 շել յաղաւթս մի՛ մոռանայք:

Կը շարունակուի քիչ մը տարբեր գրով.

Ով աստուածազարդ եւ սրբանեալ քա-
 Հանայք, որք յայսմ աստուածայիսս մատե-
 նիս խրախանայք, եւ յոսկիանկար ծաղկոց
 եւ պատկերացս բարգաւաճիք, զհանգուցեալն
 ի Աս. զՊարոն Կոստանդին, զտէր Լամբրու-
 նին, զմեծ Հայր բարեպաշտուհոյս Կեռանի,
 յիշեցէք յաղաւթս, զի տացէ նմա Ած. Հան-
 զիստ յանըպտո կեանսն՝ դասակցելով սըր-
 բոց իշխանացն, որք վասն Աի. նահատակե-
 ցան: Աի ազգանովք ընդիր գոլ նմա, եւ
 Հարազատութեամբ զերիվերոյ, որդի մեծին
 Հեթմոյ Սեաստուսիոսի, եղբար տեառն
 ներսէսի, եւ աստիճանաւ պատուելալ, զի են
 թագադիրք թագաւորութեանս Հայոց, զի շը-
 նորՀնացէ նմա Ած. Թագ արքայական, քրա-
 քիոն պսակ ի զուրի նորա, եւ փոխանակ
 անցականիս թագաւորեցնելոյ. ընկալցի ի
 Բրիտանոսէ թագաւորութիւն մշտընջնաւոր:

Ի թուարբերութեանս Հայոց ՁԻԳ
 [=1274], յամսեանս մայիսի Հրիզեւոսեան
 աւրն յԱծ. փոխեցաւ ըմբողքէն որդի երա-
 նուհոյս Կեռանի, եւ եթող սուզ մեծ. զի
 յոյժ զեղազարդեալ էր տեսակով: Ընդ որս
 եւ զուք ցաւակից գոլով սրբեամբ դասք
 յաղաւթս յիշատակել զստեղիսայն զայն, զի
 ընդ անմեղ մանկուսն, որ Աստուծոյ Հաւր
 նուիրեցան, զասակցեցցի, եւ սփոփանս
 Հաւրն եւ մաւրճ արացս՝ ի խոր տրտմու-
 թենէն ազատիլ:

Յաղաքս յիշել աղաչեմ զԱբմբատ,
 զմխիթարութեան որդեակ սորա, որ ձեռնալ
 եղեւ յետոյ մահուանն ըմբոքենի, երկար
 ժամանակաւ վայելել ի տես սորա, խնդալ ի
 տուրս աստուածային, զի ոչ եթող թերի
 զտեղի, զոր առ իւրն տարաւ:

Այլ եւ մաղթանս առ Ած. մատուցուք,
 զի զգնուարոյս քոր սորին զԱպիլ պահեցէ
 Ած. անվրդով երկար ժամանակաւ մնալ սմա,
 զի յոյժ սիրեցեալ եղեւ յաչս Հաւրն եւ
 մաւր:

Սրտի մտաւք աղաւթս արարէք եւ միւս
 այդ քաւր սոցին Ջապիլի, որ է ամաց
 երրորդի, կեալ յաստիս երկայն աւուրքք,
 Հասանել ի չափ Հասակի, բարիոք աշխար-
 Հավարիլ, սրբամիտ եւ ողջախոհ մարմնով,
 տալ փոսս ամենասուրբ Երրորդութեանն:

Ով եղբարք, խնդրեցէք յաղաւթս ձեր
 զստեղիս տղայոս արքայուհոյն՝ զԿոստան-
 դին, զՆերսէս, զԱւշիւն, եւ զԸմբողքէն,
 մնալ անասանելի յամենայն պատահմանց:

ՁՈՍ, կապոյտ երկաթագիր, ոսկի յատա-

կի վրայ, թղ. 16բ, 16ա:

Տէր իմ Ջրհատոս փրկիչ մարդկան, եւ թագաւոր միշտ յաւիտեան, զարժանացնելոյն ի քէն անձման, զԼեւոն արքայն ի Հայաստան, Եւ զթագուհին նորին Կեռան, որ եւ ստացաւ ըզբոյս մատեան, յորժամ փառաք զաս Հայրական, ընգալ ի դասս շնակողմեան:

Եւ զձեթում սոցին որդի, թագաժառանգ Հայոց սեռի, պաշտա կենաւ յերկարելի, Հանդերձ եղբարքք իւրաք բարի: Եւ զձեղզաց սոցին Հոգի, իւրեանց նախնեաւքն եւ այլ զարմի, ընգալ ի լոյսըզ գերարփի, եւ քեզ Տէր փառք յամենայնի:

ՅետՈւազոյմ յիշատակագրութիւնը.—

Ա.— Մարտիրոս Արքեպիսկոպոսի Երուսաղիմայ.— 1441

Քղ. 880 ք, վերը, բուրգիբ.— Ջվերջին ստացաւ Սր. Աւետարանիս այս, զտէր Մարտիրոս Երուսաղիմայ Արքեպս. յիշեցէք ի սուրբ աղաւթս ձեր, որ զնեցի յիմ Հալալ արդ[ե]ամբքն զՍր. Աւետարանս, եւ արժաթեցի զինքն, եւ դրի ինձ յիշատակ, եւ իմ ծնաւոցն, ի Սր. Յակոբ որք: Եւ ով որ Հանէ զինքն ի Սր. Յակոբայ կամ ծախէ, կամ գրաւկնէ, նա առնու զՅուզայի եւ զխաչահանուացն զմասն եւ բաժին: Կազմեցաւ Սր. Աւետարանս արժաթով, ի թվ. Հայոց ԳՂ, ի փասս Աստուծոյ:

Գ.— ՀարսՈրքեֆցի Յակոբի.— 1517

Քղ. 880ք, վարը, շեղագիր նոտրակերպ.— Ջվերջին բտացաւ Սր. Աւետարանիս Հարսթեֆցի մղտեսի Յակոբ, որ Հանդիպեցո ի Ստէպու, որ արպպ մի տարաւ զԱւետարանս յԵրուսաղէմայ ու զնաց ծախեց ի Ստաւպու: Այս մղտեսի Յակոբն տեսաւ զԱւետարանս, ազատեց ու ըրր ի Հալապ քաղաք, որ տանէր յԵրուսաղէմ: Հեծելութիւն էր ու ճանապարհ չկէր երթալոյ: Ասաց թէ տանիմ Հետ ինձ իմ աշխարհ: Եկան ու ժողովեցան Հալապայ քաշանայք եւ տանուաէ[ր]քն, աղաչեցին զմղտեսի Աղուքն թէ գայս Աւետարանս մի տանի ի Հետ քեզ, ի մօտ մեզ թող. այս Երուսաղէմայ դուռն է, Հանց Համարէ թէ Երուսաղէմ է: Ած. աւրահն զմղտսի Աղուքն, որ զմեր խօսքն լըսեց ու զմեր արտի կամք արաւ: Թող ի ձեզ

ի մօտ ամանաթ կենայ, ինչ որ երթամ իմ տեղն, Ած. յաշողէ որ զամ ու առնում տանիմ Երուսաղէմ, իմ Հոգու Համար եւ իմ ննջեցիւնց Համար: Թէ ես զամ կամ որդին զայս առնուք ու տանիք քարով Երուսաղէմ, ու դնեմ ի Սր. Յակոբ որք: Ու թէ ես չեմ ի գար՝ իմ նշանայ գայ, նայ զուք տարէք: [Շար. թղ. 381. վարը]: Հալապայ քաշանայք եւ տանուէրքն վկայեցին ի վ[երայ] այս բանիս, որ մղտեսի Աղուքն Հասանթէֆցին յիշատակ երթր զՍր. Աւետարանս ի Սր. Յակոբն որք, յիշատակ իւր եւ իւր ծնաւոց: Ած. ողորմի իւր Հաւրն էնպարաքին, եւ մաւրն Մարիամին, եւ որդուն էնպարաքչին, եւ զայլ ամ. ազգայինս, զկենդանիսն եւ Հանգուցեալս առ Ջս., եւ Ած. զձեզ յիշէ իւր միտանեցամ զալստեան ամէն. ի թվականիս Հայոց 242, ապրիլ ամիս ԺԲ: 25նդաւոր եւ զանաթան Մանսուր զրիչս յիշեցէք ի Ջս., եւ Ած. զձեզ [յ]իշէ, ամէն:

Գիտութիւն լիցի քաշանայք եւ տանուէրացն, որ եղիր խուճայ Ակոբն զԱւետարանս յԱստուածատուրն ի մօտ ամանաթ ինչուր ինքն գայ, կամ Նշան գայ: Մարդ անի պակաս չի խաւսի, բաւ է: Ի թվ. 242, ետաւ Աւետարանս ի Հալապ քաղաքի Աստուածատուրն ի մօտ ամանաթ ինչուր Ած. զբարին առաջնորդէ:

Բ.— ԳՈՒՂԱԳ.— 1516

Քղ. 881ա, վերը, գիր անՀարթ, ուղղագրութիւն տկար.— Ջվերջին ստացաւ Սր. Ավետարան Երուսաղէմի էր, իրեր Ա առապ Ըստամպուր, ծախեց Մ [= 50] ֆլորի, Ա միր կասեն՝ Ա Հայ զնեց, ետով վաղջանեցաւ Ամիր: Ավլի մալի մայիդն ծախեցին Ըստամպուրցի, անուս Ուսէր էր, ավլի զնեց Մ Ֆլորի, թվին Հայոց 25Ը [= 1509], վոր Երուսաղէմ տանեմ [յ]իշատակ զնեմ, Ած. ճանքայ չէ երեզ: Ետով Ա գիտունի [= Զրրիստոնեայ] մղտեսի, Համիտցի տեսաւ Սր. Ավետարանը, ասաց թէ զանի տառի է կու պահես, առի ինձի տուր, ասաց, աղաչեց, ընա ալ խոսկէն չի ելայ, երդամ ասաց Երուսաղէմ, Սր. Ակոբ զողում ասաց [յ]իշատակ: Զու ողորմութիւն Հետ ընայ ասաց: Ընա ալ նարայ Համար առել էի վոր Հոն տանէի իմ ձերոթքս, նասիպ չէ եղաւ: Ավլի Սր. Երուսաղէմի Համար ան մարդուն խոսկէն չի ելայ տվի: Խ Ֆլորին երեզ, ասաց թէ Ժ Ֆլորին քու ող(ր)որմութիւն ընայ, ասաց ան մղտեցի Համիտցի, վոր երդամ Սր. Ակոբ [յ]իշատակ] թողում.

ասաց գիտոսին Յուսէփնս: Ղայիլ եղաւ երբոր: Թվին Հայոց ԶԿԵ [=1616], ղկկտեմբեր ամսուն է ն էր:

Դ.- Թուլկուրամցի Յովհաննէս Կարողի-կոսի.- 1628

Քղ. 881թ, մէջտեղը, բուրգիբ.- ըջ-վերջին ստացաւ Սր. ոսկիապատ Աւետարանիս՝ զտէր Յոհաննէս Կարողիկոս Թուլկուրընցին աղաչեմ յիշել ի սուրբ յաղաթս ձեր, որ ստացաւ զսայ յիշատակ իւր ի Հալալ արղեանց իւրոց, եւ որ զսայ յիշատակ անջինջ, որ կենայ ի Սր. Յակոբս սեփական: Արդ մի՛ որ իշխեսցէ Հանել զսայ ի Սր. Յակոբայ կամ զողոտանով կամ ծախելով կամ զբաւ ղնելով: Եւ որ յանդէսի եւ Հանէ նայ զպատիժն Կայենի եւ զՅուդայի մատնչին եւ զխաչահանուացն ընկալցի: Եւ ինձամով պահուի արհնի յԱստուծոյ եւ ի Սր. Յակոբայ, եւ որ սրտի մտաք զմեզ յիշէ՛ յիշեալ լիցի ի Զրիստոսէ Աստուծոյ մերոյ ամէն: Արդ զնեցի զՍր. Աւետարանս ի Թվին Հայոց ԶԶԲ, եւ եղի յիշատակ ինձ ի Սր. Յակոբս: Արդ ով որ Հանդիպիք սմայ կարդալով կամ տեսնելով կամ զաղափար անելով՝ լի թերետով Ած. ողորմի ասացէք Յոհաննէս Կարողիկոսին, եւ Ած. ձեզ ողորմեսցի յահեղ ստենին ամէն եւ եղիցի եղիցի:

Ե.- Գրիգոր Պատրիարքի.- 1727

1.- Քղ. 179թ, նոտրագիր .- Ենորհօք ամենատուր Երբորդութեանն եւ միոյ Աստուածութեանն շօր եւ Որդոյ եւ Հոգոյն Սրբոյ՝ արթայական սուրբ եւ մաքուր Աւետարան վերստին կազմեցաւ եւ ոսկիապատ զարդարեցաւ՝ արղեամբք եւ զոյիւք՝ մեծաւ աշխատութեամբ եւ ջանիւք, Հաւատով, յուսով եւ սիրով, եւ յոյժ փափազմամբ, մեր նուաստ պետաց, տրուպ սպասարարաց Սըրբոց Տնօրինական Տեղեացս ԶԻ. Այ. մերոյ որ յԵրուսաղէմ, եւ աստուածադիր Սրբոյ Աթոռոյ Տեառնեղբօր, Գրիգորի եւ Յովհաննէս պատրիարգաց Սրբոյ Երուսաղէմիս եւ Քիւզանդիոյ, եւ կրկին եղաք յիշատակ ի մէջ աղինասարս Սրբոյ Տաճարիս Սրբոյն Յակոբայ Մեծի Առաքելոյն որդոյն Ջերբեհայ, եւ Սրբոյն Յակոբայ Արդարոյ, Աթոռոյ ամ. Հայոց, ի փրկութիւն Հոգւոց մերոց, եւ Հոգեւոր ծնողին մերոյ Տեառն Վարդանայ մեծի Վարդապետի Բաղիշեցոյ, եւ մարմնաւոր ծնողաց եւ Համայն զարմից մեր, եւ ամ. միաբանից Սրբոյ Գահիս, եւ

ողորմութիւն տուողաց, եւ որք զաշխատանս ի սմա ունին, եւ բովանդակ արհնեալ ազգիս Հայոց:

Արդ՝ արտասուօք խնդրեմք ի բարեմիտ ընթերցողաց՝ զի Ած. ողորմի սախցէք մեզ եւ ամ. վերգորհուցս, եւ սիրովն Աստուծոյ եւ Հարկիւ մեծաւ պատուիրեմք ձեզ՝ զի լաւ նախնայ պահչիցիք զաստուածաբոս զՍր. Կտակս՝ զզարդարեալս սսկով ներքոյ եւ արտաքոյ, զի զօրհնութիւն Տեառն ծառանդիցէք վայելչապէս: Իսկ թէ որ ազահ մտօք ձեռնամուխ լիցի ի Սր. Աւետարանս՝ ծախելով կամ զբաւ ղնելով, եւ կամ թէ զզարդ սորա քակտեսցէ, զներքին կամ զարտաքին՝ այնպիսեացն Հոգի եւ մարմին քակտեսցի եւ որոշեսցի յԱստուծոյ՝ եւ ի կենացն յաիտեմից: Իսկ իս պահուող՝ եւ պատուով խնամարկողք՝ զվարձս բազումս յԱստուծոյ անուցուօք եւ արժանի լինիջիք ամ. օրհնութեանցն որք ի սմա գրեալք կան մի ըստ միոջի:

Այլ եւ սրտի մտօք աղաչեմ յիշել ի Տէր զպատուելի որդին իմ եւ զարեանկից զՏարօնոյ Սր. Կարապետի Առաջնորդն զԱրարահամ աստուածաբան Վարդապետն եւ զԱրթապիսկոպոսն, եւ զԱթոռակալ Սրբոյ Գահիս՝ զԵրուսաղէմացի Յովհաննէս մեծի-մաստ վարդապետն զվրտակիցն մեր, եւ զԹովմաս եւ զՅակոբ խոհեմ վարդապետք, որք երբքեանքս որդիքս մեր ի՛ միասին ձեռնադրեցան եպս.՝ ծառայք Սրբոյ Աթոռոյս՝ զոր Տէրն պահեսցէ աշովն իւրով: Եւ զսիրելի եղբայրն մեր՝ զՍր. Յարութեան ըլիզն զԵր Յովհաննէս վարդապետն, որ բազում աշխատանօք զՍր. Աւետարանս գեղեցկապէս կազմեցաւ: Եւ զՋուդայեցի Բեղարթն ոսկիբիք, զմահտեսի Ստեփանոսն, եւ զմահտեսի Գէորգն, որք զկողեր Սրբոյ Կտակիս յօրինեցին, եւ Ած. ողորմի ասասջիք ամենեցունս՝ ամէն:

Կազմեցաւ եւ զարդարեցաւ Սր. Աւետարանս ի Թվ. ՌՃԶԶ ամին, ի Սր. յԵրուսաղէմ, ի փառս Աստուծոյ:

Գրեցան յիշատակարանս ձեռամբ իմս Գրիգոր մեղապարտ վարդապետի՝ յիշել ի Տէր ծոնմ:

Ձ.- Քղ. 881թ, նոտրոտը, նոտրագիր.- Ի Թվ. Հայոցս ՌՃԶԶ ամին կազմեցաւ եւ ոսկիապատ զարդարեցաւ Սր. Կտակս աստուծային, ջանիւք եւ արղեամբք Գրիգոր եւ Յովաննէս տուալ վարդապետացս՝ զոր յիշել

ձեզ զմեզ ի Տէր աղաչեմք. եւ զԱք. Աւետարանս խնամով պահել՝ զի եւ դուք զվարձս ի Տեառնէ առնուցուք: Եւ զկազմող սորա զՅովաննէս ծեր վարդապետն ի Տէր յիշեցէք. ամէն:

8.- Թղ. 88Ձա 1, վերը, նոտրագիր. Ոսկիպատ զարդարեցաւ, Աւետարանս, եւ կազմեցաւ, արդեամբք, ջանիք, սիրով մեծաւ, իմա Գրիգոր տրուպ պետաւ, եւ ձայն եղբորս բարեւամբաւ, ալ եւ Հէննէ ընդ յորունս խմբաւ, եւ յիշատակ յԱթոռս եղաւ,

որ Տեսնեղբոր Գաւ կոչեցաւ: Տեսողքը ըզս փրղնուկ անկաւ: զմեզ յիշեցէք աւ է նն անբաւ, ի Թին ՀԱՅԱՌՆԻ կատարեցաւ, ի փստս Փըրկչին որ է անզրաւ:

4.- Կուրծքի փակարանին վրայ, շուրջանակի, երկաթագիր.

Կազմեցաւ եւ ոսկիպատ զարդարեցաւ Աք. Աւետարանս ի յիշատակ Գրիգոր եւ Յովաննէս եւ Աքրաւամ վարդապետաց եւ ծնողաց նոցա, եւ միաբանից եւ ամ. ողորմութիւն տուողաց, եւ աշխատողաց ի սմա յերուսաղէմ, ի Սուրբն Յակոբ, ի Թվին ՌՃՀԶ, յիշեցէք ի Աս. ամէն:

2564 - 9

ԱԻԵՏԱՐԱՆ.- 79

Մանձրէս Գիւղ

ՌժԸ = 1668

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ.-

Ծաւալ 81XՁ1X8: Թերթք 277, Թուագրում ոչ անսնալ: Հանգամանք լաւ. լուսանցքի ցեցաւարութիւն շատ թեթեւ. կը պակսի առաջին պրակին առաջին թերթը, որ Հաւանաբար կը պարունակէր Մատթէոսի նկարը: Թուղթ կոկեակ, զեղնորակ: Գրիչ՝ Յովհաննէս երէց: Գրութիւն՝ սկզբնատողերը սրճագոյն եւ կարմիր, գլխատառերը սրճագոյն, մնացեալը սեւ մեղանով, երկսիւն, ՁՕ տող: Երկրորդ յստակ: Համառօտագրութիւնք սովորական: Գունաւոր զարդագիր եւ լուսանցագրող Հատուածներու սկիզբը: Խորանագրող իւր սարօք թղ. 1ա, 81ա, 181ա, 218ա: Լուսանցանկարք, սրճագոյն եւ կանաչ, Հովիւ թղ. 186բ 1, կոյր ի ծնէ 288բ: Նկար՝ պարզ եւ նախնական արուեստով, Ղուկաս Աւետարանիչ, թղ. 180բ: Կազմող՝ Պարտասար Սարկուսազ: Կաշեկազմ տախտակեայ, առաջին կողքին մեծ խաչ՝ արձանագրութեամբ, շրջանակի մէջ. երկրորդ կողքին մէջտեղը փոքր խաչ՝ կեղծողնը կանաչ սկի Ստացող՝ Խաթունփաշայ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.-

Թղ. 1ա.- Գիրք ծնընդեան Յի. Զի.

...1

Թղ. 80ա 1-բ, դատարկ:

Թղ. 80-81 միջեւ արմատէն կտրուած մէկ թերթ, ըստ երեւոյթին Մարկոս Աւետարանչի նկարը:

Կտրողը վնասած է նաեւ նախորդ երկու թերթերուն: Այս անճաւ արաբքը կատարուած է իջարուութենէն առաջ:

Թղ. 81ա.- Սկիզբն Աւետարանի 8ի. Զի.

Թղ. 127 կրկնուած:

Թղ. 128ա 2.-... Եւ ոչ ումեք ինչ ասէին զի երկնչէին:

Թղ. 129բ- 180ա, դատարկ:

Թղ. 181ա.- Քանգի բազումք...:

Թղ. 212-218ի միջեւ կտրուած մէկ թերթ, անտարակոյս Յովհաննէս Աւետարանչի նկարը:

Թղ. 218ա.- Ի սկզբանէ եր Բանն եւ Բանն...:

Թղ. 274ա 1.- Գնացին իւրայօրանչիւր ի տեղի իւր...:

Թղ. 276 եւ 277, դատարկ: Յիշատակարամ Գրչի.- 1668

Թղ. 275.- Փառք Համագոյ եւ զուգափառ Աք. Երրորդութեանն Հաւր եւ Որդոյ եւ Աք. Հոգոյն յաւիտեանս յաւիտենից ամէն:

Տարտամս յամենայնի, մեղաք տառապեալ, խելեաք ցընորեալ, սուտանուն Յո-

Հաննէս երէց, ցանկացող եղեալ եղեմա-
բուխ քաղցրաճաշակ Սք. Աւետարանիս:

Արդ զրեցաւ սա ի յերկիրն Ընկելին,
ի զիւզն որ ստի Մանճիխ, ընդ Հովան[ճ]աւ
Սք. Թորոսու եւ Սք. Յակոբայ եւ Սք. Նը-
շանացն, ի Թուին Հայոց [Ի] ԺԸ ամին, ի
Հայրապետութեան տէր Խաչ[ա]տրին:

Արդ աղաչեմ զամենեանն, ով զասք
քահանայից, կարգաւով կամ աւ[ր]ինակե-
լով, յիշեսցիք ի մաքրափայլ աղաթս ձեր,
զմեղաւոր գրչակս եւ զձնաւզան իմ, եւ
զեղբարս եւ զորդիս եւ զիրիցակիկն զՔառ-
նուկն, եւ զուսուցիչսն իմ զտէր Ալէքսի-
անոս արեղայն եւ զՈվսէփ եպիսկոպոսն, եւ
մեղաց Թողութիւն խնդրեցէք յԱստուծոյ,
եւ Ած. մեզ եւ ձեզ (եւ ձեզ) ողորմեացի
ամէն:

Մանաւանդ սրտացողի Սք. Աւետարանիս՝
աստուածասէր եւ երկիւզած եւ բարեպաշտ
Խաթունփաշան, որ ըստացաւ զՍք. Աւետա-
րանս, եւ էառ յիշատակ իւր Հոգոյն եւ
իւր ննջեցիւցն:

Այս Խաթունփաշայս զուստր է Ինճղացի

Ամիրքանին, Ջս. Ած. լուսաւորէ զԽաթուն-
փաշան Հոգին եւ զիւր ննջեցեւոցն ամէն:

Դարձեալ յիշեցէք յաղաթս ձեր զԽա-
թունփաշայն, նայեւ զկողակիցն իւր՝ ըզ-
մղտեսի Տաւնիկն՝ եւ զմղտեսի Տաւնիկին
զեղբայրն՝ վՊաւուստն, եւ զձնաւզոն իւր-
եանց, զպարաւն Տաւնն, որ զրեւ նտուն
զՍք. Աւետարանս եւ առին յիշատակ, վասն
Խաթունփաշային: Ջս. Ած. ողորմի ըստա-
ցաւդի սորա. նա կազմողի սորա մեղապարտ
Պաղտասար սարկաւազ:

Արձաթագրութիւմ առջեի Խաչին վրայ,
բոլորգիր.

Յիշատակ է Սք. Խաչս Ճուղեցի Մատու-
րին եւ ն Մերտատիկն եւ Հաւրն
իւր ստիկնէ Եուշանին եւ [ըն-
տ]անեաց իւրոց, Սք. Երուսաղէմայ, ի
զուոն Սք. Յակոբայ. Բվին ԻԿԹ [=1620]:

Մամօթ.- Կարգ մը տառեր Խաչին աջ
ու ձախ Թեւեղուն եւ կեղրոնիկն աւելցուած
զարդերուն ներքեւ մնացած են, որոնց տեղ
բազմակէտեր զրինք:

2565 - 10

ԱԻԵՏԱՐԱՆ.- 80

Տեղի

ՌՃՁԹ = 1740

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ.-

Մաւալ 80X21X6: էջ 498: Հանգամանք
շատ լաւ. վերջին պրակը փրճան: Թուզթ
սպիտակ, Թանճր: Գրութիւն՝ սկզբնատղերը
եւ զլիստատերը պայծառ կարմիր, մնացեալը
սեւ մելանով, երկսիւն, 21 տող, կարմիր
գիծերու միջեւ: Բոլորգիր կանոնաւոր:
Համառօտագրութիւնք սովորական գրեթէ:
Գունաւոր զարդագիր եւ լուսանցազարդ
Հատուածներու սկիզբը: Խորանազարդ իւր
սարօք, էջ 28, 157, 245, 387: Նկարք՝
Ս. Մատթէոս էջ 28, Ս. Մարկոս 156, Ս.
Ղուկաս 244, Ս. Յովհաննէս, շատ երիտա-
սարդ, առանց մօրուքի, 386: Կաշեկազմ
տախտակեայ պատած ոսկեջրեալ արծաթով.
առաջին կողքին Յարութիւն Տեառն, երկ-
րորդ կողքին Խաչելութիւն Տեառն, երկու-
րն ալ զեղեցիկ շքանակի մէջ. Հանդերձ
արձանագրութեամբ:

ՐՈՎԱՆԴԱՎՈՒԹԻՒՆ.-

- էջ 1, դատարկ
- էջ 2-8.- Թուզթ Եւսեջիտի, խորա-
նազարդի մէջ:
- Դատարկ էջեր, 4-5, 8-9, 12-18, 16-
17, 20:
- Կանոնի տախտակներ, էջ 6-7, 10-11,
14-15, 18-19:
- էջ 21ա.- Նախադրութիւն Մատթէոսի
Աւետարանին:
- էջ 29.- Սք. Աւետարանս որ ըստ Մատ-
թէոսի.- Գիրք Եննդեան Յի. Ջի. ...:
- էջ 158.- Գլուխք Մարկոսի Աւետարա-
նիս:
- էջ 167.- Սք. Աւետարանս որ ըստ Մար-
կոսի.- Սկիզբն Աւետարանի Յի. Ջի. ...:
- էջ 286բ.- Աւետարան ըստ Մարկոսի.-
Յարուցեալ Յս. առաւօտուն

- էջ 288.- Ղուկասու Աւետարամիմ Գը-լուխը:
- էջ 242.- Նախադրութիւմ Աւետարամիմ Ղուկայ:
- էջ 245.- Սը. Աւետարամս որ ըստ Ղու-կասու.- Ձանգի բազումք յօժարեցին...
- էջ 882ա.- Նախադրութիւմ Յովհաննու Աւետարամիս:
- էջ 887.- Սը. Աւետարամս որ ըստ Յո-հաննու.- Ի սկզբանէ էր Բանն...
- էջ 495-498, զատարկ:
- Յիշատակարամ Գրչի.- 1740
- էջ 494ա.- Փառք ամենասուրբ Երրոր-գութեանն Հօր եւ Որդոյ եւ Սը. Հոգոյն, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից ամէն:

ԵնորՀիւ առատապարզեւ Հոգւոյն Աստուծոյ աւարտեցեալ եղեւ Սը. Աւետարանս Զի. բարեպաշտօն եւ երկիւղած Հանգուցեալ մահտեսի Յարութիւնին, եւ Յովանէսին, եւ միւս Յոհաննէսին, եւ Փանոսին, էվա խաթունին, ԿէօվՀէրին, եւ կենդանեացն՝ մահտեսի Մկրտիչին, Լուսխաթու-նին, եւ մահտեսի Մկրտիչին, եւ Տիրուհի-

ին, եւ Սառային, եւ այլ ամ. արեան մեր-ձաւոր ընտանեաց նորին, կենդանեացն եւ Հանգուցեցնոցն: Որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի եւ յիշեացի՝ յահեղ ատենին ամէն:

Եղաւ յիշատակ Սը. Աւետարանս ի զուռն Սրբոյն Յակոբայ, ի Թվին Հայոց ՌՃՁԹ.

Ներքեւր Ոտորագիր ամհարք.

Ի Սը. Գաղական Երուսաղէմայ յիշատակ է Սամաթիացի Ջէնէսի կուգէլ սարկավարք մահտեսի Յարութիւնին եւ Օսկիին, եւ մահտեսի Ասվատուրին, եւ այլ ամ. արեան մերձաւոր ընտանեացն նօրին Հօրոցն յիշատակ է:

Արձանագրութիւմ արձանթեայ կողքերուն վրայ, պատկերներուն ներքեւ երկուական տող, երկաթագիր.

Առաջիմ երեսիմ. " Սը. Աւետարանս ար-ձանթապատ յօրինեցաւ Հոգաբարձութեամբ" Երկրորդ երեսիմ. " Գրիգոր Վարդապետին, ի Թվ. ՌՃՂ մէկ [=1742] ամին, ամէն":

2566 - 11

ԱԻԵՏԱՐԱՆ.- 81

[Սիւ ?]

ՉԾՁ=1807

Ծամօթ.- Այժմ կը պակսի: Ուստի նկարագրութիւնը կ'առնենք Խապայեան Սահակ եպիսկոպոսի 1890 թուին պատրաստած Յուցակէն: Պատկերները կ'առնենք Օր. Ս. Տէր Ներսէսեանի 1951-1952 տարիներուն Հանած լուսանկարներէն:

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ.-

Թուղթք 298: Մեծութիւն 27x19.5: Գրութիւն երկսիւն, իւրաքանչիւրը 20x6: Տողք 20: Թերթք Իե=25: Նիւթ՝ մազաղաթ, պատուական, ողորկեալ եւ սպիտակ: Կազմ՝ փայտեայ կաշեպատ, փակարանով. երկու երեսները ոսկեջրած արձանթապատ, զանազան պատկերներով: Մազաղաթեայ պահպանակ՝ չուխ: Հանգամանք՝ մեծ խնամով պահպանուած: Զարդագիրք՝ ամէն գլխոց սկիզբը.

աւետարաններու առաջին էջերը բազմագոյն եւ ոսկւով շատ զեղեցիկ ծաղկագիր եւ թռչնագիր. առաջին երեք աւետարաններու երկրորդ եւ երրորդ էջերը՝ նաեւ, Համարոց սկզբնատարք ոսկւով բուն երկաթագիր. գլխոց առաջին տողերը անցման երկաթագիր ոսկւով: Խորանք՝ բազմագոյն եւ ոսկի, ամէնքն ալ շատ յաջող, եւ վրանին այլ եւ այլ թռչունք. Թղ. 8բ-12ա, Համեմատական տախտակք. Թղ. 15ա, 95ա, 148ա, 281ա: Լուսանցազարդք՝ ամէն գլխոց սկիզբը բազմագոյն եւ ոսկւով, մեծ՝ աւետարաններու սկիզբները: Նկարք՝ բազմագոյն ոսկեզարդ եւ յաջող. Թղ. 14բ (Մատ.), 94բ (Մար.) 145բ, (Ղուկ.) 130բ (Յով. եւ Պրոխորոս: Դատարկ՝ Թղ. 1-2 եւ Համեմատական տախտակներու եւ նկարներու կոնակ-

ներք, 148ա, մեն մասը, Բ. ամբողջ 296-97ա, 298: Ժամանակ ՉԾՋ=1807: Գրիչ՝ Գրիգոր քահանայ: Տեղի՝ անորոշ: Տէր՝ Ստեփաննոս քահանայ, մականուամբ Սեբաստացի, Յիշատակագրութիւնք՝ Թղ. 294բ:

Մատենա է Աւետարան: Թղ. 8բ-12ա, Համեմատական տախտակք, Եւսեբի Կարպիանոսի Թղթով. 18ա. ՝ Ըստ Մատթէոսի Աւե-

տարանին գլուխք ՝ Վերջը՝ նախագրութիւն, բայց զրած չէ: 16ա, ՝ Աւետարան ըստ Մատթէոսի՝ 96ա, (ցանկ չունի). ՝ Աւետարան ըստ Մարկոսի՝ 146ա, ՝ Աւետարան ըստ Ղուկասու: 229բ, ՝ Գլուխք Աւետարանին, որ ըստ Յովհաննու. (կիսատ թողած է, մինչեւ ՝ Վասն Հինգ Հացին՝ եւսյլ: 281ա, ՝ Աւետարան ըստ Յովհաննու ՝ Կան Մարկոսի ԺՋ, 9-20 եւ իբր կնոջն շնացելոյ:



28.- Եւսեբիոս
թիւ 2588, թղ. 1բ



90.- Աւետարան ըստ Մարկոսի
 քիւ 2588, քղ. 88



ՁԹ.- Մատթեոս Աւետարանիչ
թիւ Զ566, թղ. 1Զբ


Յիշատակագրութիւնը.- [1807]

Քղ. 254բ.- Փառք ամենասուրբ Երրորդութեանն Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, ամէն:

Յամի եւթն Հարիւրորդի յիսնորդի վեցերորդի թուականիս զարմիս Հայոց, ի թագաւորութեան Լեւոնի, որ ի սոյն ամի աւծաւ, որդւոյ պարոնին Քորոսի, որդւոյ արքային Լեւոնի, եւ ի վախճանել տեսոն Գրիգորի Կաթողիկոսի, ի Ջս.:

Այս աստուածային տառիս... ամին ցանկացող հղեալ Հոգւոյ քաղձանաւք, մաքուր եւ թրիստոսասէր քաճանայն, որ է մակաւասար եւ վեճ քաճանայիցն Ստեփանոսու մակաւում Սեբաստացի (քերուած) եւ ետ

զրել զսա(յ) իւրոց իսկ գոյից ի լաւ եւ յընտրեալ արինակաց ի վայելումն եւ ի պայծառութիւն Հոգւոյ եւ մարմնոյ իւրոյ, եւ յիշատակ քարեաց իւր եւ ծնողաց իւրոց... Մարտիրոսի (քերուած) եւ զՀաւրեղբայրն մեր զԳրիգոր (քերուած) եւ զՀոգեւոր Հայրն մեր... միակեց եւ զմայրմ, զգեոաբոյս զաւակսմ մեր Գրիգոր եւ զՅակոբ (քերուած): Յաղագս որոյ պաղատիմք, աղերսեմք եւ Հայցեմք ի ձէնջ դասք քաճանայից եւ քնաւ պատահաղ սմա յիշել ի քարեաց յիշո մին զամենայն մակագրեալսնս ի սմ(յ) եւ թողութիւն մեղաց Հայցել յամենառատ Տեսունէն եւ Աստուծոյն ամենեցուն:



31.- Յովհաննու եւ Գրիգորոմ
թիւ 2586, թղ. 225բ

Արդ գրեցաւ սա(յ) ի յարկի, եւ Հովանեաւ Սուրբ Նշանի, ձեռամբ տրուպ քաշանայի, որոյ **Գրիգոր** անուն կոչի, ... (յիշել խնդրէ) եւ զամուսինն իմ շեղինի ... եւ որդեկանն իմոյ Սարգսի, երկարաւրեա լինել յերկրի ... զի շատ նկարեաց սա յայսմ գրի ...:

Տարբեր գրով. Վերջին ստացաւ սուրբ եւ աստուածախաւս Ար. Աւետարանիս, զԳրիգոր երէցս, որ ստացա զսա(յ) ի յարդեանց իմոց, յիշատակ ինձ առ Աս., զի ես փափագ ունեի անձամբ իմով զնալ յԵրուսաղէմ, յերկրպագութիւն Աի. Ար. Գերեզմանին եւ սուլ զսա ձեռամբ իմով ի Ար. Յակոբ, եւ վասն բազում մեղաց իմոց ոչ կատարէր

խորհուրդ սրտի իմոյ (երեւի կիսատ է):

Քզ. 297ր. Ի Թվականի մեծաց շայոց, երկրատակ եւ երկ Հարիւրոց, Հինգ տասն եւ իններորդ Թվոց, եղեւ խնդիր գրաւելոց: Ողորմութիւն Տեսնել Հասեալ, եւ շայոց մեծամեծքն եկեալ, յԵրուսաղէմ քաղաքն Հասեալ, Սուրբ Յակոբայ պարտքն տուեալ: Ձի այս եղեւ յայսմ ամի, յաջորդութեամբ Երուսաղէմի, Տէր Գրիգոր կրօնաւորի, որ է տեղեաւն Վարանդեցի: Ես մեղաւոր եւ եղկելի, ծառայ եղեալ մամոնայի, եւ չարաչար մեղաւոր լի, Ռուստակէս կապող(յ)այսմ գրի:

Դիւ.- Յիշատակագրութիւնը տաղաչափեալ է. Թուականը՝ 1059 + 661 = 1610.

2567 - 12

ԱՒԵՏԱՐԱՆ.- 82

Ս. Յակոբ, Երուսաղէմ

1468-1464

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ.-

Ծաւալ 24.6x17x8: Բերթք 864: Հանգամանք շատ լաւ: Մազաղաթ կոկեալ: Գրիչ, Ծաղկող եւ Ստացող՝ Մարտիրոս Եպիսկոպոս, որդի Ստեփանոսի: Գրութիւն՝ սկզբնատողերը, զլիսատաբեր եւ տէրունական անունները ընդհանրապէս ոսկեգիր, մնացեալը սեւ միւսնով, երկսիւն, 17 տող: Բուրբուր կանոնաւոր: Գունաւոր ոսկեխառն գարդազիր եւ լուսանցազարդ Հատուածներու սկիզբը: Խորանազարդ իւր սարօթ թղ. 15ա, 116ա, 180ա, 284ա:

Նկարք, կէս էջի վրայ, բացի չորս Աւետարանիչներէն, Կիլիկեան ոճով, յետոս ինեան զպրոցիհ Հետեւողութեամբ:

- 1.- Ս. Մատթիոս, 14ք
- 2.- Ծնունդ Տեսնել, 17ա
- 3.- Մկրտութիւն Տեսնել, 22ա 1
- 4.- Ծաղկազարդ, 78ք
- 5.- Յարութիւն Տեսնել, 110ա
- 6.- Ս. Մարկոս, 114ք
- 7.- Այլակերպութիւն Տեսնել, 144ք
- 8.- Խաչելութիւն Տեսնել, 178ք
- 9.- Թաղումն Տեսնել, 176ք
- 10.- Իւզաբեր Կանայք, 176ք

- 11.- Ս. Ղուկաս եւ Թէոփիլոս, 179ք
- 12.- Աւետումն Գարբիէլի, 188ա
- 13.- Ընծայումն ի տաճարն, 189ա
- 14.- Վերջին Ընթրիք, 268ա
- 15.- Համբարձումն Տեսնել- 281ա
- 16.- Ս. Յովհաննէս եւ Պրոխորոս, 288ք
- 17.- Յարութիւն Ղազարու, 324ա
- 18.- Ոտնալուայ, 380ք
- 19.- Հոգեպալուստ, 386ք. վարը Թագակիր ձերունի. "Աշխարհս է եւ Բժ անդամք իւր", արձանագրութեամբ:

Կաշեկազմ տախտակեայ արծաթապատ ոսկեջրեալ, առաջին երեսին՝ Խաչելութիւն Տեսնել Յիսուսի, զլիտւն վերեւ երկաթազիր, Յ.Ն.Թ.Չ., աջ կողմը Ս. Կոյսը, ձախ կողմը Ս. Յովհաննէս. վերջին երեսին՝ Ս. Կոյսը կանղնած Թագ ի զլուխ, Մանուկ Յիսուսը զրկին, երկու պատկերներն ալ գեղեցիկ ճաղկեայ շրջանակներու մէջ: Կուրծքին արծաթեայ փակարան, Հանդերձ եռամասնեայ երկաթազիր արձանագրութեամբ, կ'ամրացուի շղթայազորն երկու ճարմանդներով: Պահպանակ մազաղաթեայ սկիզբը եւ վերջը չորսական էջ, սրճագոյն թանաքով.

անկիւնաւոր երկաթազիր, մասունք Եսայեայ
Մարգարէութեան, ԻԳ, 18 - ԻԴ. 20, ԿԹ, 5
- ԿԵ. 18:

ՐՈՒՂԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.-

Քղ. 1ա, դատարկ:

Քղ. 1բ-2ա.- Քուղթ Եւսեբիոսի առ
Կարպիանոս, երկու փին նկարներով, բազ-
մազոյն խորանագրողի մէջ:

Քղ. 2բ.- Յա, դատարկ: Քղ. 3բ-4ա,
անաւարտ ուրուագիծ խորանագրողի: Քղ.
4բ-5ա, դատարկ:

Կանոնի տախտակներ, բազմազոյն, ոս-
կիխոն, զծագրութիւն ոչ նուրբ, Քղ. 6բ,
6ա, 7բ, 8ա, 9բ, 10ա, 11բ, 12ա:

Դատարկ էջեր 6բ-7ա, 8բ-9ա, 10բ,
11ա:

Քղ. 12բ.- Նախադրութիւնը Մաթեոսի Ա-
ւետարանի:

Քղ. 16ա.- Աւետարան ըստ Մաթեոսի.-
Գիրք ծնընդեան Յի. Ջի. ...:

Քղ. 105ա 1.- Ի Կորթան, լուսնցքին՝
յընծայանոցն:

Քղ. 118ա 2.- Գլուխք որ ըստ Մարկո-



32.- Կամոնի տախտակ
թիւ 2587, թղ. 10ա

Կրօնական
 զին խորաց. և ասէ
 զնրա սա, երբ ճայք
 Ի գեաւ զք որաւ
 ավի ճերէ. և անդ
 Էն գտան

ճէք ինչ. և ի բոլ
 ասիցէ ինչ ճէզ
